ISSN 1829-4596

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

21

ԵՐԵՎԱՆ 2020

9(47.925)
Հ-28
Հ2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

6431

21

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
210

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
210

ԵՐԵՎԱՆ
2020

ՊՈՒՇԿԻՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագրական խորհուրդ

Ա.Ա. Մելքոնյան (նախագահ), Կ.Հ. Խաչատրյան (նախագահի տեղակալ), Ա.Ա. Խառատյան, Հ.Կ. Սուքիասյան, Ա.Ի. Շահնազարյան, Հ.Ղ. Մուրադյան, Վ.Ս. Սարգսյան (պատ. քարտուղար)

Редакционная коллегия

А.А. Мелконян (председатель), К.Г. Хачатрян (заместитель председателя), А.А. Харатян, А.К. Сукиасян, А.И. Шахназарян, А.Г. Мурадян, В.С. Саргсян (отв. секретарь)

Editorial board

A.A. Melkonyan (Chairman of the Board), K.H. Khachatryan (Deputy Chairman of the Board), A.A. Kharatyan, H.K. Sukiasyan, A.I. Shahnazaryan, H.Gh. Muradyan, V.S. Sargsyan (Executive Secretary)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքի հերթական՝ 21-րդ համարում հրատարակվող հոդվածները սկզբնաղբյուրների, արխիվային նյութերի, մամուլի հրապարակումների, հայրենի և համաշխարհային պատմագիտական գրականության լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց հին և միջնադարյան, նոր և նորագույն ժամանակաշրջանների պատմության առանձին հիմնահարցերի վրա:

Տարեգրքում հրատարակվում են նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի 40-րդ գիտական նստաշրջանում կարդացված որոշ զեկուցումներ:

ISSN 1829-4596

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020

ԿԱՐԵՆ Ս. ԹՈԽԱԹՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

ԳՈՐԾԻՔԸ, ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԸ ԵՒ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ ժայռապատկեր, հնագիտություն, գործիք, փոխադրամիջոց, կացարան, կառույց:

Հայոց պատկերագրական մշակույթի վաղնջական շերտը՝ ժայռանկարները, հնավուրց անցյալի իրականն ու երևակայականն արտացոլող քարե «կտավներ» են, բնական և մարդածին իրողությունները գեղարվեստորեն արտացոլող միջոց ու ձև: Բնատարածքում ցարդ հայտնի բյուրավոր փորագրությունները վկայում են, որ մշակութային ինքնատիպ այս ասպարեզը համապարփակ արտահայտում է հայոց նախագրային շրջանի կյանքի և գործունեության բոլոր էական կողմերը: Արժեքավոր տեղեկություն է ամբարված շրջակա բնության, մարդկանց կյանքի, արհեստների և հմտությունների, արվեստի և գիտելիքների, հոգևոր աշխարհի՝ դիցամտածողության և աշխարհընկալման մասին:

Հայաստանի ժայռապատկերների բովանդակային բազմազանության մեջ որոշակիանում է չորս հիմնական ոլորտ՝ **բնություն, մարդու առօրյա, արարման արդյունքներ** և **ներաշխարհ**: Դրանցում առանձնացվում է **31** թեմային խումբ. տեղանքի տարր, երկնային լուսատու և երևույթ, Երկրագունդ, երկրային երևույթ, օդերևույթ, բույս, կենդանի, գյուղատնտեսություն, որս,

գազանամարտ, մարտարվեստ, մարզում, մրցախաղ, պար, զենք, գործիք, փոխադրամիջոց, շինվածք, կիրառական պատկեր, ուսուցման միջոց, խաղի պարագա, հագուստ, պաշտամունք, երևակայական էակ, ներպատկեր, դիմապատկեր, անորոշ պատկեր, զարդանախշ, խորհրդանշան, տառանման նշան:

Այսպես դասակարգված բովանդակային խմբերի պատկերների մեծ մասը հարատևել է հայոց մշակույթի մյուս ոլորտներում՝ խեցեղենի, արձանիկի, բրոնզե գոտու և նվիրատվական թիթեղի, հարթաքանդակի, որմնանկարի, մանրանկարի իմաստաբանական հորինվածքում, կնիքի, զինանշանի և դրամի նկարվածքում, զենքի, խոյակի նախշազարդում, տարազում ու հյուսածո իրերում և լրացվել նորանոր նշաններով:

Ստորև ներկայացվում է իրար սերտ առնչվող հինգ խմբի ժայռապատկերների հակիրճ վերլուծություն:

1. Գործիք խմբում կենցաղի, տնտեսական գործունեության պարագաների և արտադրական հմտությունների պատկերներ են՝ արոր ու լծասարք, անիվ, ուռկան, ցանց, սանդուղք, պարան, սանձ, բրիչ, եղան, քլունգ, մուրճ ևն: Ժայռապատկերներում հանդիպում են մի շարք զենքեր, որոնք կիրառվել են նաև աշխատանքային ոլորտներում՝ երկժանի, եռաժանի, կացին, մահակ, դանակ, օղապարան, եռաձայր կեռիկ ևն:

Ստեղծած և կիրառած առարկան գրեթե միշտ պատկերված է մարդու ձեռքին կամ մարմնի մոտ. այլ դեպքերում այն կարող է համարվել խորհրդանշան: Գործիքները գրեթե նույն կերպ են երևում որմնանկարում, մանրանկարում, հարթաքանդակում, բրոնզե գոտու, բիայնական շրջանի իրերի, խաչքարի և տապանաքարի հորինվածքում:

2. Փոխադրամիջոց խմբում են երկսռնի քառանիվ սայլի,

միասռնի երկանվի, քաշանի և սահնակի, դահուկի պատկերները: Սրանք զուգահեռվում են Ն. Գետաշենի՝ 1908 թ. Ե. Լալայանի պեղած «իշխանական» սայլի[1], Լճաշենում 1956 թվականից պեղված փայտե հինգ քառանիվների և ինը երկանիվների հետ[2]:

Լեռնաշխարհում «նման սայլեր գոյություն են ունեցել դեռևս վաղ բրոնզի» փուլում, ինչի «փաստացի վկաներն են... սայլերի անիվների մանրակերտները (Շենգավիթ, Շրեշ բլուր, Հառիճ, Քեթի ևն)»[3]: Գտնվել են անվավոր միջոցների տասնյակ մանրակերտներ. 1946–1947 թթ. Մինգեչաուրում՝ չորս կավե ծածկասայլ[4], բրոնզե մարտակառքեր՝ երեքը 1956–1958 թթ. Լճաշենում[5], մեկական՝ 1967 թ. Պառավաքարում[6] և 1971 թ. Լոռիբեր-

---

[1] Տե՛ս **Լալայան Ե.**, Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 100–101, 194–198, նկ. 192–196:

[2] Տե՛ս **Мнацаканян А.О.**, Раскопки курганов на побережие оз. Севан в 1956 г.- Советская археология, 1957, 2, էջ 146, 148, նկ. 1, 8, **նույնի՝** Древние повозки из курганов брозового века на побережие оз. Севан, Советская археология, 1960, 2, էջ 139–152, նկ. 1–3, 6, 8–14, **Մնացականյան Հ.Հ.**, Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1965, թիվ 2, էջ 102, 107, **Есаян С.А.** Из истории колесного транспорта Древней Армении, ՊԲՀ, 1960, թիվ 3, էջ 141–151, **նույնի՝** Оружие и военное дело древней Армении (III–I тыс. до н.э.), Ереван, 1966, էջ 130–143, **Պետրոսյան Լ.**, Հայոց ավանդական փոխադրամիջոցների պատմամշակութային աղբյուրները, Հայ ազգագրություն և բանահյուսություն, 22, Երևան, 2007, էջ 241–246, 256, **նույնի՝** Լճաշենի դամբանադաշտը (պարբերացում. ժամանակագրում), Հայաստանի հնագիտական հուշարձանները, 22, Երևան, 2018, էջ 128–133, **Վարդանյան Բ.**, Անվավոր փոխադրամիջոցներով ուշ բրոնզեդարյան թաղումների սոցիալ-ժողովրդագրական հետազոտության խնդիրները Կուրարաքսյան միջագետքում, Լրաբեր հասարակական գիտությունների, 2019, թիվ 1, էջ 335, աղ. 1, **նույնի՝** Կուր-արաքսյան միջագետքի ուշբրոնզեդարյան դամբանային համալիրների սոցիալ-ժողովրդագրական վերլուծության խնդիրներն՝ ըստ Լճաշենի տվյալների (մ.թ.ա. 16–13 դդ.), Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ (այսուհետև՝ ՀԱԻԱ), 3, Երևան, 2019, էջ 73, աղ. 7:

[3] **Պետրոսյան Լ.**, Լճաշենի դամբանադաշտը (պարբերացում, ժամանակագրում), էջ 131:

[4] **Асланов Г.М., Вандов Р.М., Ионе Г.И.**, Древний Мингечаур (эпоха энеолита и бронзы), Баку, 1959, с. 128–131, рис. 98–101:

[5] **Мнацаканян**, Раскопки курганов на побережие оз. Севан в 1956 г., Совеетская археология, с. 149–150, рис. 8, **նույնի՝** Древние повозки из курганов брозового века на побережие оз. Севан, с. 141–143, рис. 4–5, 7.

դի №7 դամբարանում[7], ավելի քան երեք կավե սայլ՝ Հառիճում[8]:

Երկնի, եռաձի և քառաձի մարտակառք /biga, triga, quadriga/ է դրվագված Լոռիբերդի արծաթե գավաթի, բիայնական զինական իրերի՝ Արգիշտի Ա արքայի սաղավարտի (Կարմիր Բլուր), Սարդուր Բ արքայի կապարճի (Էրեբունի), Վերին Անձավի վահանի, Ռուսախինիլիի կնիքի (Հողաբերդ)[9], բրոնզե գոտու (Ախթալա, Ստեփանավան, Լճաշեն, Աստղիբլուր) և Արշամ Ա և Արտավազդ Բ արքաների դրամների վրա, մանրանկարներում, հարթաքանդակներում[10] ևն:

Ժայռապատկերներին նմանվող երկանիվ, քառանիվ սայլեր ու մարտակառքեր կան Ասորեստանի Սալմանասար III-ի (մ.թ.ա. 859–824 թթ.) պալատում՝ Իմգուր-Էնլիլի «Բալավաթյան» դարպասների բրոնզե երեսվածքի դրվագներում՝ Վանի թագավորության արքայական քաղաք Արծաշկուի գրավման տեսարանում[11]: Սայլին դրված կարասը ձևով ու չափերով մերձ է Կարմիր Բլրում պեղվածներին, ինչը վկայում է, որ ավարառված փոխադրամի-

[9] **Есаян С.А., Мнацаканян А.О.**, Находки новых бронзовых статуэток в Армении, Советская археология, 1970, 2, с. 157–161, 168, рис. 1.

[7] **Դավեջյան Ս.**, Լոռի-բերդի ուշ բրոնզեդարյան մարտակառքը, ՊԲՀ, 1976, թիվ 1, էջ 209–220:

[8] **Хачатрян Т.С.**, Древняя культура Ширака: III–II тыс. до н.э., Ереван, 1975, с. 73–74.

[9] Տե՛ս **Lehmann-Haupt C. F.**, Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens, Neue Folge, Bd. IX, 3, Berlin, 1907, էջ 108, նկ. 80, **Пиотровский Б.Б.**, Ванское царство (Урарту), Москва, 1959, էջ 229, նկ. 75:

[10] Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու հվ. պատի առագաստանավի հարթաքանդակի առթիվ տե՛ս **Պետրոսյան Լ.**, Հայոց ավանդական փոխադրամիջոցների պատմամշակութային ադերսները, 2007, էջ 252, տախ. III, նկ. 1:

[11] **King L. W.** [ed.], Bronze reliefs from the gates of Shalmanaser, king of Assyria B.C. 860–825, London, 1915, ադ. VII, **Schachner A.**, Bilder eines Weltreichs, Kunst- und Kulturhistorische Untersuchungen zu den Verzierungen eines Tores in Balawat (Imgur-Enlil) aus der Zeit von Salmanassar III, König vor Assyrien (=Subartu XX), Turnhout (Belgium), 2007, էջ 311, ադ. 21ա, **Riemschneider M.**, Das Reich am Ararat, Leipzig, 1965, էջ 26, **Պետրոսյան Լ.**, Հայոց ավանդական փոխադրամիջոցների պատմամշակութային ադերսները, էջ 249–250, տախ. II₁₂:

ջոցը ևս Հայաստանյան ծագման է:

Ջրային փոխադրամիջոց հիշեցնող հատուկենտ ժայռանկարները որոշակի չեն: Թեև, երբեմն դրանց ուրվագծերը նման են Շրեշ-բլրում և Մոխրաբլրում պեղված խեցեղենի՝ հորիզոնական և թեք ակոսներով արված նավակաձև գծազարդին[12]:

3. Կառույց խմբում հիմնականում կացարանանման պատկերներ են: Գերակշռում է քառակողմ տեսակը, որի գծանկարի վերին մասում կարծես մուտք է նշված: Սա համադրելի է Քսենոփոնի նկարագրած՝ Կարինի գյուղական գետնափոր տան հետ[13]: Կացարան, բնակատեղի հիշեցնող ուղղանկյուն ու բոլորաձև որոշ պատկերներ հիշեցնում են Շենգավթի և այլ հնավայրերի հատակաձևերը[14]: «Արդեն III հազ. հանդիպում են քառանկյուն տներ (Շենգավիթ, Գառնի, Էլառ, Իմիրիս Գորա), մասամբ նաև՝ մի կողմով լանջի մեջ խրված»[15]: «Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան բնակատեղիները կառուցվել են որոշակի պլանով և նրանց բնորոշ են կենտրոնական կլոր կացարանով ու հարակից բազմաթիվ սենյակներով, տնտեսական նշանակություն ունեցող շինություններով կազմված կոմպլեքսներ»[16]: Ժայռանկարները համադրելի են մ.թ.ա. VII–VI հազ. Լեռնագոգ[17],

[12] Տե՛ս **Խանզադյան Է.Վ.**, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մթա III հազարամյակում, Երևան, 1967, էջ 72, ադ. XX:

[13] «Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն ընդարձակ» (**Քսենոփոն**, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկաշարյանի, Երևան, 1970, V.25, էջ 97, տե՛ս նաև **Վարդանյան Ս.**, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն, Երևան, 1959, էջ 26–32):

[14] Տե՛ս **Հայկական ճարտարապետության պատմություն**, հ. 1, Երևան, 1996, էջ 41–44, ադ. 5, **Գնունի Ա.**, Հայաստանի Կուր-արաքսյան մշակույթի ուղղանկյուն հատակագծով կացարանները և նրանց տարածման սահմանները, Բանբեր Երևանի համալսարանի, 1994, թիվ 3 (84), էջ 22–32:

[15] **Գրիգորյան Ա.**, Խորհրդանշանային մտածողությունը հայկական ճարտարապետությունում, Երևան, 2005, էջ 39, ադ. 26:

[16] **Խանզադյան Է.Վ.**, նշվ. աշխ., էջ 100:

[17] Տե՛ս **Arimura M., Petrosyan A., Arakelyan D., Nahapetyan S., Gasparyan B.,**

Առատաշեն[18], Ակնաշեն[19], Մասիս Բլուր[20], մ.թ.ա. V–IV հազ. Թեղուտ[21], մ.թ.ա. IV հազ. Գեղարոտ[22], մ.թ.ա. III–II հազ. Ագարակ[23] բնակատեղիներում պեղված շինվածքների հատակագծերի, նաև՝ Հին Հայաստանի մի շարք տաճարների ձևերի հետ:

Առհասարակ, որևէ իրի, կառույցի, կացարանի ստեղծումն արդեն առկա պատկերացումների արդյունք է[24]: Ըստ ճարտարապետ Ա. Գրիգորյանի՝ «եթե բնակարանը թվագրվում է VI–III հազ., ապա ժայռապատկերների հնագույն տեսակները կամ դրանց պատկերացումները ավելի վաղ պետք է լինեն»[25]: Տեսաբանը հիմնավորում է, որ «հեթանոսական մեհյանները... հորինվածքային ձևերով վերարտադրում են... ավելի վաղ հորինվածքները՝ բլուր-տաճարները, որոնք... խտացրել են մեկ այլ նախա-

A preliminary report on the 2015 and 2017 field seasons at the Lernagog-1 site in Armenia.- Արամազդ (Aramazd), XII, 1, էջ 1–18, 184:

[18] Տե՛ս **Бадалян Р., Аветисян П., Ломбард П., Шатенье К.**, Поселение Араташен. Հին Հայաստանի մշակույթը, XIII, 2005, էջ 34–41:

[19] Տե՛ս **Badalyan R. S., Harutyunyan A. A., Chataigner C., Le Mort F., Chabot J., Brochier J. E., Balasescu A., Radu V., Hovsepyan R.**, The Settlement of Aknashen-Khatunarkh, a Neolithic Site in the Ararat Plain (Armenia): Excavation results 2004–2009.- TÜBA-AR 13, 2010, էջ 185–218:

[20] Տե՛ս **Martirosyan-Olshansky K., Areshian G., Avetisyan P., Hayrapetyan A.**, Masis Blur: A Late Neolithic Settlement in the Plain of Ararat, Armenia.- Backdirt: Annual Review of the Cotsen Institute of Archaeology at UCLA, 2013, էջ 142–146:

[21] Տե՛ս **Թորոսյան Ռ.**, Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը (մ.թ.ա. IV հազարամյակ), Երևան, 1976:

[22] Տե՛ս **Badalyan R. S., Avetisyan P. S.**, Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia. I. Mt. Aragats and its Surrounding Region. BAR International Series 1697. Oxford, 2007, էջ 98–111, **Бадалян Р., Смит А.**, Поселение Гехарот: основные результаты раскопок 2005–2006 гг., Հին Հայաստանի մշակույթը. XIV, Երևան, 2008, էջ 45–68:

[23] Տե՛ս **Badalyan R. S, Avetisyan P. S.**, նշվ. աշխ., էջ 24–33:

[24] Հր. Աճառյանը նշում է՝ «գաղափարները բառից առաջ են, ...առարկան կամ գործողությունը պիտի ստանար իր անունը ...այն ժամանակ, երբ մարդը հասած է արդեն նրան գիտակցելու կարողության» (**Աճառյան Հր.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի. Երևան, 2005, էջ 143–144):

[25] **Գրիգորյան Ա.**, Խորհրդանշանային մտածողությունը հայկական ճարտարապետությունում, էջ 19, ադ. 3, 5–6, 23, 49–50:

տիպի կերպարային առանձնահատկությունները (սար, գագաթ, երկիր-երկինք կապ և այլն)»: Նա վկայակոչում է Թ. Թորամանյանի, Ա. Քալանթարի, Խ. Սամուելյանի, Ս. Սարդարյանի տեղեկություններն[26] առ այն, որ մինչբիայնական փուլում «Հայկական լեռնաշխարհում գոյություն են ունեցել բլուր-տաճար պայմանական անվանումով ճարտարապետական պաշտամունքային կառույցներ»[27]:

Դեռևս Խ. Սամուելյանն էր նշել հսկայակերտ կառույցների եզակի յուրահատկությունը. «բաղկացած են լինում մի քանի շարք, 3–4–5, համակենտրոն պարիսպներից, որոնք շրջապատում են բլրի լանջերը և ապա գագաթի վրա վերջավորվում են միջնաբերդով: Բացի այդ՝ հիշյալ ամրությունների առանձնահատուկ գիծը... այն շառավիղաձև պատաշարերն են, որոնք ձգվում են գագաթից լանջն ի վայր դեպի բլրի ստորոտները: Այս տիպի կիկլոպիկ ամրոցները Թ. Թորամանյանը վերագրել է նեոլիթի դարաշրջանին[28], որը հավանական ենք գտնում»[29]:

Այս առումով ուշագրավ է ժայռապատկերներում երբեմն հանդիպող աստիճանաբրգատեսք նշանը /**աղ. 153**$_{1-2}$, **15**$_{12}$/, որի

[26] Տե՛ս **Թորամանեան Թ.**, Նախաքրիստոնէական հայ ճարտարապետութիւն, Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գիրք Ա և Բ, Վաղարշապատ, 1921–1922, էջ 207–225, **Քալանթար Աշխ.**, Քարե դարը Հայաստանում, «Նորք» գրական, գիտական և քաղաքական հանդես, գիրք 5–6, Երևան, 1925, էջ 211–219, **նույնի՝** Հայաստան՝ Քարե դարից միջնադար. Երկերի ժողովածու, Երևան, 2007, էջ 198–206, **Սամուելյան Խ.**, Հին Հայաստանի կուլտուրան. պատմական ակնարկներ, հ. III, Բրոնզն ու վաղագույն երկաթե դար, սոցիալական կուլտուրա, Երևան, 1941, էջ 35–36, **Սարդարյան Ս.Հ.**, Հայաստանը քաղաքակրթության օրրան, Երևան, 2004, էջ 443:

[27] **Գրիգորյան Ա.**, Խաչատակի աստիճանաձև հորինվածքների խորհրդաբանական ստուգաբանությունը երկիր-երկինք բնափիլիսոփայական ընկալումների համատեքստում.- Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, XX, Գյումրի, 2017, էջ 19:

[28] Տե՛ս **Թորամանեան Թ.**, Նախաքրիստոնէական հայ ճարտարապետութիւն, էջ 216:

[29] **Սամուելյան Խ.**, նշվ. աշխ., էջ 36:

համադրումը բլուր-տաճարի հետ կարող է լույս սփռել նաև մ.թ.ա. XIV–IX դդ միջագետքյան զիկուրատ (աքադ.՝ ziqquratu – *բարձունք, լեռան գագաթ*) կոչված բրգաձև կառույցների ծագումնաբանության խնդրում: Շիրակի մարզի Լեռնակերտ /Շիրվանճուղ/ գյուղից 1.5 կմ արմ. կողմում գտնվող «...Վարի բերդ անվանածը, իր լերկ գագաթով փոքր սենյականման շինվածքով, արտակարգ լայն արևմտյան դռնով, դեպի գագաթ բարձրանալու համար հասարակաց լայն ճանապարհով, նաև ներքևը հեռվից մի աստիճանավոր բուրգի նմանությամբ և շուրջը ընդարձակ դատարկությամբ Ziggourat-ի բոլոր բնական և արվեստական հատկություններ ունի»[30]: «Մի քիչ հեռվից ամբողջ սարը մի եգիպտական աստիճանավոր բուրգի կամ ասորա-քաղդեական **զիկկուռայի** կնմանի: ...Կամ դեռ բոլորովին չէր վերջացած այս հսկայական բուրգի շինությունը և կամ գագաթը հատուկ էր միմիայն կրոնական արարողությունների, ու շինությունների համար կարիք չէր զգացվել. այս վերջինս ինձ հավանական կթվի նախնադարյան շրջանի մարդկանց հավատալիքները և բացօթյա սարերի գլխին կատարված կրոնական արարողությունները ի նկատի ունենալով»[31]:

Ժայռապատկերներում երբեմն հանդիպում են աշտարակատեսք՝ երկարուկ, հատած կոնի ձևով նշաններ, որոնք իրական աշտարակի[32] են նմանվում և համադրելի են բրոնզե դրվագված

[30] **Թորամանյան Թ.** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, կազմեց և հրատ. պատրաստեց Կարո Ղաֆադարյան. Եր., 1942. էջ 30. **նույնի**՝ Երևան. 2013. I. էջ 56:

[31] **Թորամանյան Թ.** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների II ժողովածու, կազմեց և հրատ. պատրաստեց Կարո Ղաֆադարյան. Եր., 1948. էջ 245–246. **նույնի**՝ Երևան, 2013. II, էջ 291–292:

[32] Վերին Անձավ, Պատնոց և այլ վայրերի՝ Խալդիին ձոնված աշտարակաձև տաճարների մասին տե՛ս **Բաղալյան Մ.**, Ուրարտուի դիցարանի գերագույն եռյակը (պաշտամունք, խորհրդանշաններ, պատկերագրություն) ըստ հնագիտական սկզբ-

իրերի, որմնանկարի, ոսկրե թիթեղի (Կարմիր Բլուր), դրամի[33] և հարթաքանդակի հորինվածքներին: Կա մուտք, անձավ, փարախ, կամարաձև դարպաս կամ կամուրջ հիշեցնող մի քանի ժայռանկար: Նկատելի են պաշտամունքային կառույցին բնորոշ մանրամասներ՝ թմբուկ, գմբեթ, նաև՝ երկթեք տանիքի («սագաշեն») նմանվող ժայռապատկեր, որի աղերսն ակնառու է Աստղիբլուր ամրոցի տաճարից 1966 թ. գտնված երկհարկ տաճարի մ.թ.ա. VI դ. կավե մանրակերտի հետ[34]:

Բիայնական Հողաբլուր ամրոցում պեղված մ.թ.ա. VII դ. բրոնզե թիթեղ-մանրակերտում[35] եռահարկ շենք է դրվագված, որպիսին պատկերավոր նկարագրել է Պատմահայրը. «ապարանս ի պէս պէս քարանց և ի գունից զարդարեալս, կրկնայարկս և եռայարկս: Հիշատակել է նաև Վանի ամրաշինական կառույցները՝ ամրագունիք պարսպօք, հանդերձ դրամբք պղնձակերտիք»[36]: Նման շենքեր կան Բալավաթյան դարպասների՝ մ.թ.ա. 859 և 857 թթ. արքայական քաղաք Արծաշկուի

նագրությունների. ատենախոսություն, Երևան. 2015. էջ 40–41: Արագածոտնի մարզում հետազոտված աշտարակների մասին տե՛ս **Մկրտչյան Լ.**. Նորահայտ աշտարակատիպ կառույցներ Արագածոտնի մարզում.- Արագածի թիկունքում. Երևան. 2018. էջ 69–77:

[33] Առանձնավոր, աշտարակաձև թագ է պատկերված Անտիոքոս Դ արքայի դրամի դարձերևին (72 թ.):

[34] Այս. և Կայծոն բերդի. Գավառի (Երվ. Լալայանի պեղած). Մոսեսգյուղի մանրակերտների մասին տե՛ս **Есаян С.А.**, Древняя культура племен Северо-восточной Армении (III–I тыс. до н.э.). Ереван. 1976. էջ 43. 229–235. աղ. 29. 150:

[35] **Пиотровский Б.Б.**. նշվ. աշխ.. էջ 204. նկ. 57. **Reimschneider M.**. նշվ. աշխ. նկ. 29. **Vartke R-B.**. Urartu: Das Reich am Ararat.- Kulturgeschichte der Antiken Welt. Bd. 59. Mainz. 1993. էջ 56. աղ. 28: Բրիտանական թանգարանի թիթեղի. և առհասարակ՝ բիայնական բազմահարկերի մասին տե՛ս **Հայկական ճարտարապետության պատմություն**. էջ 126–128. 137–138:

[36] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց. Երևան. 1991. գիրք I. ԺԶ. էջ 53. տե՛ս նաև **Հարությունյան Վ.**. Հին Աշխարհի ճարտարապետություն. Երևան. 1978. էջ 51–54. **Հմայակյան Ս.Գ.**. Վանի թագավորության պետական կրոնը. Երևան. 1990. էջ 65–74. **Հայկական ճարտարապետության պատմություն**. էջ 90:

համադրումը բլուր-տաճարի հետ կարող է լույս սփռել նաև մ.թ.ա. XIV–IX դդ միջագետքյան զիկուրատ (աքադ.՝ ziqquratu – *բարձունք, լեռան գագաթ*) կոչված բրգաձև կառույցների ծագումնաբանության խնդրում: Շիրակի մարզի Լեռնակերտ /Շիրվանճուղ/ գյուղից 1.5 կմ արմ. կողմում գտնվող «...Վարի բերդ անվանածը, իր լերկ գագաթով փոքր սենյականման շինվածքով, արտակարգ լայն արևմտյան դռնով, դեպի գագաթ բարձրանալու համար հասարակաց լայն ճանապարհով, նաև ներքևը հեռվից մի աստիճանավոր բուրգի նմանությամբ և շուրջը ընդարձակ դատարկությամբ Ziggourat-ի բոլոր բնական և արվեստական հատկություններ ունի»[30]: «Մի քիչ հեռվից ամբողջ սարը մի եգիպտական աստիճանավոր բուրգի կամ ասորա-քաղդեական **զիկկուռայի** կնմանի: ...Կամ դեռ բոլորովին չէր վերջացած այս հսկայական բուրգի շինությունը և կամ գագաթը հատուկ էր միմիայն կրոնական արարողությունների, ու շինությունների համար կարիք չէր զգացվել. այս վերջինս ինձ հավանական կթվի նախնադարյան շրջանի մարդկանց հավատալիքները և բացօթյա սարերի գլխին կատարված կրոնական արարողությունները ի նկատի ունենալով»[31]:

Ժայռապատկերներում երբեմն հանդիպում են աշտարակատեսք՝ երկարուկ, հատած կոնի ձևով նշաններ, որոնք իրական աշտարակի[32] են նմանվում և համադրելի են բրոնզե դրվագված

[30] **Թորամանյան Թ.** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. աշխատությունների ժողովածու, կազմեց և հրատ. պատրաստեց Կարո Ղաֆադարյան. Եր., 1942. էջ 30. **նույնի**՝ Երևան. 2013. I. էջ 56:

[31] **Թորամանյան Թ.** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. աշխատությունների II ժողովածու, կազմեց և հրատ. պատրաստեց Կարո Ղաֆադարյան. Եր., 1948. էջ 245–246. **նույնի**՝ Երևան, 2013. II, էջ 291–292:

[32] Վերին Անձավ, Պատոնց և այլ վայրերի՝ խալդիին ձոնված աշտարակաձև տաճարների մասին տե՛ս **Բաղալյան Մ.**, Ուրարտուի դիցարանի գերագույն եռյակը (պաշտամունք, խորհրդանշաններ, պատկերագրություն) ըստ հնագիտական սկզբ-

իրերի, որմնանկարի, ոսկրե թիթեղի (Կարմիր Բլուր), դրամի[33] և հարթաքանդակի հորինվածքներին: Կա մուտք, անձավ, փարախ, կամարաձև դարպաս կամ կամուրջ հիշեցնող մի քանի ժայռանկար: Նկատելի են պաշտամունքային կառույցին բնորոշ մանրամասներ՝ թմբուկ, գմբեթ, նաև՝ երկթեք տանիքի («սագաշեն») նմանվող ժայռապատկեր, որի աղերսն ակնառու է Աստղիբլուր ամրոցի տաճարից 1966 թ. գտնված երկհարկ տաճարի մ.թ.ա. VI դ. կավե մանրակերտի հետ[34]:

Բիայնական Հողաբլուր ամրոցում պեղված մ.թ.ա. VII դ. բրոնզե թիթեղ-մանրակերտում[35] եռահարկ շենք է դրվագված, որպիսին պատկերավոր նկարագրել է Պատմահայրը. «ապարանս ի պէս պէս քարանց և ի գունից զարդարեալս, կրկնայարկս և եռայարկս: Հիշատակել է նաև Վանի ամրաշինական կառույցները՝ ամրագունիք պարսպօք, հանդերձ դրամբք պղնձակերտիք»[36]: Նման շենքեր կան Բալավաթյան դարպասների՝ մ.թ.ա. 859 և 857 թթ. արքայական քաղաք Արծաշկուի

նագրությունների. ատենախոսություն, Երևան, 2015, էջ 40–41: Արագածոտնի մարզում հետազոտված աշտարակների մասին տե՛ս **Մկրտչյան Լ.**. Նորահայտ աշտարակատիպ կառույցներ Արագածոտնի մարզում.- Արագածի թիկունքում. Երևան. 2018. էջ 69–77:

[33] Ատամնավոր, աշտարակաձև թագ է պատկերված Անտիոքոս Դ արքայի դրամի դարձերևսին (72 թ.):

[34] Այս և Կայծոն բերդի, Գավառի (Երվ. Լալայանի պեղում), Մոսեսգյուղի մանրակերտների մասին տե՛ս **Есаян С.А.**, Древняя культура племен Северо-восточной Армении (III–I тыс. до н.э.), Ереван, 1976, էջ 43, 229–235, ադ. 29. 150:

[35] **Пиотровский Б.Б.**, նշվ. աշխ., էջ 204, նկ. 57. **Reimschneider M.**, նշվ. աշխ. նկ. 29, **Vartke R-B.**, Urartu: Das Reich am Ararat.- Kulturgeschichte der Antiken Welt. Bd. 59. Mainz. 1993. էջ 56, ադ. 28: Բրիտանական թանգարանի թիթեղի. և առհասարակ՝ բիայնական բազմահարկերի մասին տե՛ս **Հայկական ճարտարապետության պատմություն**. էջ 126–128. 137–138:

[36] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, Երևան, 1991. գիրք I, ԺԶ, էջ 53, տե՛ս նաև **Հարությունյան Վ.**, Հին Աշխարհի ճարտարապետություն, Երևան, 1978, էջ 51–54, **Հմայակյան Ս.Գ.**, Վանի թագավորության պեռական կրոնը. Երևան, 1990, էջ 65–74, **Հայկական ճարտարապետության պատմություն**. էջ 90:

(Արճեշ ?) և Գիլզանուի գրավման դրվագներում[37]:

Այս ժայռանկարները հաճախ զուգակցված են տեղանքի բնական ու մարդածին տարրերին (գետ, լիճ, առու, աղբյուր, արահետ, բլուր, անձավ, ծառ, կրոմլեխ, ցանկապատ, սյուն ևն) և հատկապես՝ գործունեության նախորդ երկու՝ գործիք, փոխադրամիջոց ոլորտներին առնչվող պատկերներին: Յուրաքանչյուր կառույցի իրականացման հիմքում տեխնիկա-տեխնոլոգիական հնարավորություններն են՝ աշխատանքի գործիքների, փոխադրամիջոցների ու հաղորդակցության ուղիների առկայություն և դրանց զարգացման համապատասխան աստիճան: Հարկ է համարել, որ կառույցի մտահղացումը, հավանաբար նաև՝ վերջնական, իրականացված վիճակը կարող էր պատկերվել քարին[38]: Դիտվող սյուժետային կապերը պայմանավորված են նաև գործառութային առնչություններով, ինչը դրսևորված է գործիք, փոխադրամիջոց և տարածքի կազմակերպում (ձևափոխում, հարմարեցում) ցուցադրող պատկերների առկայությամբ: Սա առավել նկատելի է հետևյալ երկու խմբում:

4. Կիրառական պատկեր խմբում են մարդու գիտաճանաչողական մտքի՝ կենսափորձային ու գիտական գիտելիքի դրսևորումները.

ա) Երկրի կողմեր նշող կողմնացույցներ՝ ուղղակիորեն խաչանշանի, կամ արևածագի ու մայրամուտի կետերի դիրքերով:

բ) Տեղանքի կողմնորոշիչ տարրերի նշումներ՝ հատակագիծ, «քարտեզ»: Կա արահետ ու ճանապարհ, առու, աղբյուր, գետ, լիճ, անձավ, ժայռ, լեռ, բլուր, ծառ ևն:

[37] **King L. W.**, նշվ. աշխ., աղ. VIII–IX, XXXVII, XXXIX, **Schachner A.**, նշվ. աշխ., էջ 311–312, 327–328, աղ. 21բ, 22ա, 39ա, 40ա:

[38] Տե՛ս **Ճախմուրադյան Մ.Ս.**, «Անապատի օդապարուկների» կառուցվածքի և ձևերի քննություն, ՀԱԻԱ, 3, էջ 23, 226, նկ. 1:

գ) Տարածքի մասնակի տարանջատման, սահմանազատման, գործառութային շրջանացման[39] ու կառուցապատման գծագիր՝ ծուղակ, որոգայթ, դարան, թակարդափոս, որսատեղ, փարախ, մշակովի հողամաս, ոռոգման ցանց ևն:

5. Ուսուցման և հաշվանքի միջոց խմբում են կետ, գիծ, անկյուն, զուգահեռ գծեր, օղակ, աստղ, պարույր, բազմանկյունի, ցանցահիմք փորագրություն, բուսա-երկրաչափական այլ նշանների շարքեր ու խմբեր[40]: Հաշվողա-թվաբանական ունակության այս պարզագույն դրսևորումները կարող էին ծառայել որպես ուսուցման պարագա, նաև՝ ինչ-ինչ իրողությունների քանակի արտահայտման համար[41]: Այդպիսիք առկա են խեցեղենի, բրոնզե, փայտե և հյուսածո իրերի, որմնանկարի, մանրանկարի, հարթաքանդակի և սպասքի հորինվածքում և զարդանախշում:

Այսպիսով, քննարկված հինգ խմբերում ներառված պատկերներն իրենց գործառույթով մի ամբողջություն են կազմում, որը լիարժեք միավորում է նախնյաց կառուցողական գործունեության ոլորտները: Կենսատարածքի հարմարեցման, յուրացման ու կառուցապատման խնդիրները հնուց ի վեր սերտ առնչվել են նաև հաղորդակցության ուղիներին, փոխադրամիջոցներին և աշխատանքի գործիքներին: Սրանց տեսքերն արտացոլված են նաև Հայաստանի ժայռապատկերներում:

[39] Մասնավորապես՝ սրբազնացված, պաշտամունքային տարածքի նշումը: Հավանական է նաև վտանգավոր, աղետաբեր վայրերի (սելավահուն, հեղեղատ, փոս, ձնահոսքի, քարաթափի տեղ) տեղանշումը (Կ.Թ.):

[40] Կետ, օղակ, գծիկ, սեպ, եռանկյուն, պաք, խաչ, աստղ, այիք, տերև, պարույր, սրևանշան ևն (Կ. Թ.):

[41] Այս եղանակը տարածված էր Հին Աշխարհում. *լատ.* calx *«կիր», որից* calculi *«խիճի կոորտանք», որոնցով երեխաներին հաշիվ էին սովորեցնում, որից և* calculus *«հաշիվ»* (**Աճառյան Հր.**, նշվ. աշխ, էջ 14):

Գործիքներ

անիվներ

որմնանկար. Էրեբունի





ցանց. ուռկան, սանդուղք. աստիճան, շարվածք (?)



«Երկնային սանդուղք»

«Երկնային սանդուղք». *Սաթ լեռներ*

Արագած



բրոնզե գոտի. *Ստեփանավան*



քառանիվ (երկսռնի) սայլ



երկանիվ (միասռնի) սայլ

մարտակառք (?)

սայլանմա՛յ փոխադրամիջոց



ծածկակառք (?)

սահնակ

«երկնային նավակ»

քաշաններ

կամարակապ փ·այտե կառք

երկանիվ, բրոնզե գոտի

մարտակառքի մանրակերտ բրոնզ, *Լճաշեն*, մ.թ.ա. XIV դ.

Լճաշեն, մ.թ.ա. XV դ.





երկանիվ մարտակառքեր, բրոնզե գոտի, *Ստեփանավան*

մարտակառքի մանրակերտ *Պառավաքար*, մ.թ.ա. IX դդ.

սայլ. *Բալավաթյան դարպասներ*. մ.թ.ա. 860 թ.



ծիսական կառքով երթ

կնքադրոշմ, *Ռուսախինիլի*, մ.թ.ա. VIII դ.



բրոնզե սայլանման առարկա, *Լոռիբերդ*, մ.թ.ա. XIV դ.

մարտակառք, Արգիշտի Ա-ի սաղավարտ, *Էրեբունի*

քառաձի մարտակառք, բրոնզե գոտի, *Աստղիբլուր*



ծածկասայլի կավե մանրակերտ, *Մինգեչաուր*. մ.թ.ա. II հազ.

մանրանկարներ. *Հռոմ*, XVI դ., *Կիլիկիա*, 1286 թ.

Խութամար

6431

փարախներ

այծ, տուն (?)

կացարան













կացարաններ

շումերական սալիկ



կացարանախումբ, բնակատեղի կամ կրոմլեխ

Էրեբունի «Սուսի» տաճար



մ.թ.ա. VI հազ. կացարաններ, *Ակնաշեն*, *Առատաշեն*, *Մասիս Բլուր*

բնակատեղի, մ.թ.ա. IV հազ., *Շենգավիթ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

պաշտամունքային կառույց. *Սաթ, Գավառակ*

աշտարակ. *Ծղուկ, Գեղամա լեռներ*

երկհարկ տաճար

մանրակերտ. *Աստղիբլուր*, մ.թ.ա. VI դ.

բրոնզե գոտի, *Վանի շրջան* (?)

թիթեղ-մանրակերտ *Հողաբլուր*, մ.թ.ա. VII դ.



տաճար, մ.թ.ա. IX դ. *Բալավաթյան դարպաս*

որմնանկար, *Էրեբունի*



բրոնզե թաս, *Կարմիր բլուր*

աշտարակաձև թագ, Անտիոքոս Դ-ի դրամ, մ.թ. 72 թ.





կամուրջ կամ դարպաս, կամար, *Ծղուկ*

կամարազարդ խոյակ, *Չորուտ՝ Արզական*, XIII դ.

Երկրի կողմեր



Երկրագնդի չորս կողմեր



Արևածագի և արևամուտի նշաններ

Արևածագի և արևամուտի նշաններ

Սայանյան կիրճ, Վերին Ենիսեյի ավազան
«Կողմնացույց» կոչվող քար: Ենթադրաբար՝ պատկերված է լեռան ստորոտում ճանապարհ

Карен С. Тохатян, *Институт истории НАН РА, к.и.н.*, **Инструменты, средства передвижения и постройки в наскальных изображениях Армении.**

Задачи освоения и застройки среды обитания издавна были тесно связаны с рабочими инструментами, транспортом, водными путями и дорогами. Их виды отражены в петроглифах Армении. Люди, инструмент, средства передвижения и постройки часто изображены вместе, что свидетельствует о важной роли этих компонентов строительной сферы в древности.

Karen S. Tokhatyan, *Institute of History of the NAS RA, Candidate of Sciences in History,* **Implements, transportation means and constructions in rock-carvings of Armenia.**

Since ancient times the problems of appropriation and development of habitat have been closely related to tools, transport, waterways and roads. The types thereof are reflected in the rock-carvings of Armenia. People, tools, transportation means and structures are often depicted together, which attests to and underlines the important role of these components of construction activity in ancient times.

ՀԱՅԿԱՐԱՄ Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բանալի բառեր՝ պետական համակարգ, արքայական իշխանություն, կրոն, Հայ եկեղեցի, հոգևոր դաս, մեծ դատավոր, օրենսդիր իշխանություն:

Քրիստոնեության՝ Մեծ Հայքի պետական համակարգ մուտք գործելու ժամանակ հայոց թագավորությունը կանգնած էր իր լինելիությանը սպառնացող հարևան երկու գերտերությունների ստեղծած վտանգի առջև: III դարից սկսած Սասանյան արքաները Մեծ Հայքում իրենց տիրապետության շրջանում (261–293 թթ.) փորձ կատարեցին նախ տարածել զրադաշտականությունը, իսկ դրանից հետո խրախուսում էին կենտրոնախույս ուժերին: Սասանյանների կողմից նախարարական շրջանակներում տարվում էին քարոզչական բուռն աշխատանքներ առ այն, որ Արշակունիները օտար են հայերին և չպետք է բազմեն հայոց գահին՝ բնիկ հայ իշխանների փոխարեն: Թեպետև այդ պնդումը զուրկ չէր ճշմարտությունից, սակայն այդ գաղափարների ընդհանուր պատկերի համաձայն՝ Մերձավոր Արևելքի գերագույն տիրակալը պետք է դառնար Սասանյան արքան՝ որպես Աքեմենյանների ժառանգորդ: Լուրջ սպառնալիք էր առաջացել թե՛ գահակալող Արշակունյաց դինաստիայի, և թե՛

հայերի ազգային դիմագծի պահպանման համար: Այդ պատճառով, Տրդատ Գ-ը (287-330թթ.) վերականգնելով իր թագավորական իշխանությունը, որոշակի փորձերից հետո, կայացրեց պատմական նշանակության, տվյալ ժամանակի համար բավականին համարձակ որոշում: Խորհրդակցություններ կատարելով հայ իշխանական դասի հետ, որոշվեց՝ աշխարհի տարբեր անկյուններում հալածանքի ենթարկվող, բայց և այնպես, շարունակաբար հասարակական նոր շրջանակներ և աշխարհագրական տարածքներ գրավող, կենսունակ քրիստոնեական կրոնը հռչակել պետական կրոն: Այդ քայլով նաև առաջին անգամ քրիստոնեությունը մուտք էր գործում պետական համակարգ[1]: Քրիստոնեությունը այդ ժամանակ ուներ եկեղեցական կայացած նվիրապետական կառույց ու համակարգված գաղափարախոսություն և ունակ էր հիմք ծառայելու թագավորական կենտրոնական իշխանության հզորացման համար[2]: Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունում ևս ասվում է, որ քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո Հայոց արքան ավելի ամրապնդեց իր իշխանությունը[3]:

Հռանդեայի պայմանագրով, Պարթևական արքայից արքան պետք է առաջադրեր Մեծ Հայքի գահի թեկնածու, իսկ կայսրը՝ հաստատեր և թագադրեր թեկնածուին: Ըստ այդ ակտի կայսրը բարձրացվում էր աստվածային աստիճանի և համարվում էր, որ նա է գահի թեկնածուին շնորհում ուժ, իշխանություն ու հասարակ անձից «ստեղծում» թագավոր[4]: II դարի վերջին, երբ Արշակունիները Մեծ Հայքում դարձան ժառանգական դինաստիա, Հռանդեայի պայմանագրով հաստատած իրավիճակը փոխվեց, սակայն դեռևս պահպանվում էր գաղափարական կախվածություն կայսրից: Քրիստոնեության ընդունումից հետո Հայոց արքան վերականգնեց աստվածատուր իշխանության գաղափարաբանական հիմքը: Քրիստոնեության համաձայն, թագավորի իշխանությունը տրվում էր Աստծուց[5], ուստի Հայոց արքան այդ առումով այլևս կախված չէր Հռոմի կայսրից: Եկեղեցին իր ձեռքը վերցրեց սոցիալական խավերի համախմբան, պետության գաղափարաբանության ստեղծման, կարգավորման և երկրում դրա քարոզչության գործը[6]:

Հայոց արքայի և հայրապետի համագործակցությամբ ջանքեր են գործադրվում Վիրքում, և Աղվանքում ևս քրիստոնեության ընդունման համար: Վրաց և Աղվանից եկեղեցիները գործում են Հայ եկեղեցու ենթակայությամբ, դրանով էր պայմանավորված նաև հետագայում Մեսրոպ Մաշտոցի՝ այդ երկրների համար ևս գրեր ստեղծելու հանգամանքը: Մեծ Հայքն այդ երկրների համար հոգևոր կենտրոն դարձնելը ոչ միայն բարձրաց-

---

[1] Տե՛ս **Suvrazyan Y., Mirzoyan V., Hayrapetyan R.**, Public Administration. Theory and History, Yerevan, 2014, էջ 75:

[2] Տե՛ս **Միրումյան Կ.**, Քրիստոնեությունը Հայ ժողովրդի պատմական ճակատագրում. Հայեցակարգային նկատառումներ, «Հայոց եկեղեցի և պետություն», Երևան, 2000, էջ 13:

[3] Տե՛ս **Ագաթանգեղոս**, Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, (արաբերեն բնագիր, ուսումնասիրությունը **Ա.Ն. Տեր-Ղևոնդյանի**), Երևան, 1968, էջ 88:

[4] Տե՛ս **Մանասերյան Ռ.**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ: Արտաքին քաղաքականություն, պետական գաղափարաբանության պրոբլեմներ և քրիստոնեության ընդունում, Երևան, 1997, էջ 99:

[5] Տե՛ս **Հակոբյան Հ.**, Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության Նոր Կտակարանյան մոտեցումները, «Էջմիածին», 2019, թիվ 5, էջ 134:

[6] Տե՛ս **Արևշատյան Ս.**, Հայաստանում քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը, «Հայաստանը և քրիստոնյա Արևելքը», Երևան, 2000, էջ 21, **Միրումյան Կ.**, Քրիստոնեության ընդունումը Հայաստանում և ազգային-քաղաքական ինդրակարգը, «Հայաստանը և քրիստոնյա Արևելքը», էջ 91:

նում էր Հայոց հայրապետի դիրքը, այլև Տրդատ Գ-ի գլխավորությամբ ստեղծում էր հակասասանյան համադաշնություն[7]:

Գրիգոր Լուսավորչը, քրմերի սերնդին ներառելով նոր կրոնի սպասավորության մեջ, ամբողջացնում էր Մեծ Հայքում նոր կրոնի պետականորեն հիմնման գործընթացը՝ հին կրոնի հիմնասյուների վրա: Հեթանոսական կրոնի կարևորագույն հիմնասյուներն էին մեհյանները, որոնց տեղերում, դրանց փոխարեն կառուցվում էին եկեղեցիներ, և տոմարական հատուկ օրերի տոնակատարություններն ու արարողությունները փոխարինվում էին քրիստոնեական տոներով ու ծիսակատարություններով[8]: Այդուհանդերձ, հեթանոսական կրոնի ամենակենսական հիմնասյունը հանդիսանում էր քրմական դասը, որի նոր սերունդը կրթվելով և դաստիարակվելով քրիստոնեական արժեհամակարգով, դարձավ Հայ եկեղեցու հոգևորական դասի կորիզը: Եթե մեկ սերնդի ընթացքում հայ հեթանոս ազգաբնակչության կրոնական առումով «գլուխը հանդիսացող քրմական դասը վերածվում էր եկեղեցականների, ապա բավականին հեշտանում էր ամբողջ Մեծ Հայքում քրիստոնեության տարածման գործը:

Վաղ միջնադարյան Հայաստանում յուրաքանչյուր դասի ներկայացուցիչ պետք է շարունակեր իր նախորդների գործը: Այդ կերպով, ֆեոդալական պաշտոնակատարման ժառանգական իրավունքը փոխանցվեց նաև Հայ եկեղեցուն[9]: Քրմերի սե-

[7] Տե՛ս **Թորոսյան Վ.**, Քրիստոնեության ընդունումը Հայաստանում և Տրդատ Գ-ի գործունեությունը.Հայոց պատմություն. հատոր II, գիրք առաջին, Երևան. 2018, էջ 32:

[8] Տե՛ս **Վարդումյան Գ.**, Հեթանոսությունից դեպի քրիստոնեություն. Ժառանգականության որոշ հարցեր, «Արշալույս քրիստոնեության հայոց», Երևան, 2016. էջ 88:

[9] Տե՛ս **Ադոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987. էջ 408–409:

ռունդներին նոր կրոնում սպասավորության ընդունելու պատճառներից մեկն էլ այն էր, որ Գրիգոր Լուսավորիչն իր հետ Մեծ Հայքում ոչ քարոզիչներ ուներ, և ոչ էլ եկեղեցական գործակիցներ[10], ուստի գոյություն ուներ եկեղեցու սպասավորների խիստ մեծ պահանջարկ: Այդ պատճառով էլ նաև հույն և ասորի շատ եկեղեցականներ ընդունվեցին Հայ եկեղեցում ծառայության[11]:

Տրդատ Գ-ն իր տիրապետության տակ գտնվող ողջ տարածքում չորս ծխի հողաբաժին ագարակներում և յոթ ծխի հողաբաժին ավաններում հատկացրեց Հայ եկեղեցու սպասավորների համար: Հայ եկեղեցականներին ազատների կարգին դասեց և եկեղեցապատկան տիրույթները ազատեց հողի և ջրի համար գանձվող հարկերից[12]: Մեծ Հայքի վարչատարածքային բաժանման և նշանավոր նախարարական տների տիրույթների սահմաններին համաձայն հաստատվեցին եպիսկոպոսական աթոռներ[13]: Կաթողիկոսարանում, արքունիքում և իշխանական տներում նշանակվում էին դրան եպիսկոպոս, դրան վարդապետ և դրան երեց[14]: Նրանք իրենց հոգևոր սպասավորությունը կատարում էին իրենց նշանակման վայրում օրինակ՝ արքունիքում կամ իշխանական տանը, օրհնում էին հացը, կատարում աղոթք-

[10] Տե՛ս **Օրմանյան Մ.**, Հայ եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Պուէնոս Այրէս, 1949, էջ 47:

[11] Տե՛ս **Մովսիսեան Յ.**, Հայաստանեայցս Առաքելական Ս. եկեղեցւոյ պատմութիւն, Էջմիածին, 2008, էջ 37, **Տեր-Մկրտչյան Կ.**, Հայոց եկեղեցու պատմություն, Մասն. Ա, Էջմիածին, 2011, էջ 98:

[12] Տե՛ս **Մանանդյան Հ.**, Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում (Նյութեր յեվ դիտողություններ), Տեղեկագիր ՀԽՍՀ Գիտության յեվ արվեստի ինստիտուտի, Երևան, 1926, թիվ 1, էջ 31:

[13] Տե՛ս **Հարությունյան Բ.**, Հայոց եկեղեցու թեմական բաժանումը Գրիգոր Լուսավորչի հովվապետության շրջանում, Պատմա-բանասիրական հանդես, 2000, թիվ 2. էջ 126:

[14] Տե՛ս **Զախջախեան Մ.Ի.**, Բառգիրք հայ եւ իտալական, Վենետիկ, 1837, էջ 430, **Ալգերեան Մ.Հ.**, Առձեռն բառարան Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1846 էջ 227:

ներ նախաձեռնված գործերի համար և կատարում անդաստանի կարգ իրենց ծառայության բաժնի տիրույթների համար[15]: Տվյալ հոգևորականները կարող էին հանդիսանալ որպես խորհրդականներ, խոստովանահայրեր և զբաղվել նաև արքայազուն և իշխանազուն մանուկների դաստիարակությամբ: Այդ կերպով որոշ եպիսկոպոսների անվանը կցվում էր իշխանական տոհմանունը, որը ցույց էր տալիս նրանց ծառայության վայրը: Հոգևորականներն Այրարատում և այլ նահանգներում ունեցած տիրույթների համար հարկեր չէին վճարում ո՛չ արքային, և ո՛չ էլ նախարարներին: Ամբողջ երկրի տարածքից եկեղեցուն տրվում էր «տասանորդ» և «հաս» կոչվող դրամական տուրք[16]: Եկեղեցուն փոխանցվեց նաև մեհյանների կուտակած ողջ հարստությունը: Գրիգոր Լուսավորչին, որպես նոր հոգևոր առաջնորդի, տրվեցին քրմապետական հողատիրույթները: Ինչպես Հայ Առաքելական եկեղեցու այնպես էլ այլ եկեղեցիների տարածքները միջնադարում շարունակում էին աճել նաև նվիրատվությունների հաշվին[17]: Այդ առանձնաշնորհումների միջոցով Ներսես Մեծի օրոք արդեն միայն Լուսավորչի տոհմը երկրի 15 գավառներում ուներ բավականին մեծ հողատիրույթներ[18]:

Հուսիկ հայրապետի մահվանից հետո երկրի հոգևոր անկյալ վիճակը ներկայացնելիս Փավստոս Բուզանդը հայտնում է կարևոր տեղեկություն Հայ եկեղեցուն տրված «Մեծ դատավորի» պաշտոնի վերաբերյալ. «Բայց յայնժամ դեռ ևս կենդանի էր ծերունի սուրբն մեծն քորեպիսկոպոսն Դանիել, այր սքանչելի: Աշակերտ եղեալ էր սա մեծին Գրիգորի ձեռական՝ իշխանութեանն կողման մասին *գործակալութեանն մեծի դատավորութեանն,* ուներ զիշխանութիւնն զայն առանձինն այլ վերակացու և հրամանատար տեսուչ և հոգեբարձու ամենայն եկեղեցեացն Հայոց մեծաց ընդ ամենայն տեղիս»[19]: Ժամանակագրորեն ավելի ուշ տեղի ունեցած դեպքերի առիթով մեծ դատավորի պաշտոնի մասին հայտնում են Մովսես Խորենացին[20] և Եղիշեն[21]: Մինչև քրիստոնեությունը Մեծ Հայքում պետական կրոն հռչակելը, այդ պաշտոնը կատարում էր քրմապետը[22]: Հեթանոսական շրջանում օրենքները սահմանվում էին արքայի կողմից: Կրոնականացված օրենքները համարվում էին աստվածների կամքի արտահայտությունը, իսկ աստվածների առաջին ներկայացուցիչը երկրի վրա հնում հանդիսանում էր արքան, որը Արշակունյաց թագավորության շրջանում քիչ-քիչ հետ մղվեց այդ դիրքից, ինչպես նաև՝ քրմաց դասը: Վերջիններս նաև գրի հիմնական կրողներն էին, ինչը շատ կարևոր էր հասարակական նորմերի և արքայական հրամանների արձանագրման ու իրավական կարգավորման հարթությունում կիրառման համար[23]: Այդ գործոնները և ժամանակի պատկերացումների համաձայն

---

[15] Տե՛ս **Ինճիճեան Ղ.,** Հնախօսութիւն աշխարհագրական հայաստանեայց աշխարհի. հատոր Գ, Վենետիկ. 1835, էջ 358:

[16] Տե՛ս **Մանանդյան Հ.,** Ֆեոդալիզմը Հին Հայաստանում (Արշակունիների ու մարզպանական շրջան), Երևան, 1934, էջ 140:

[17] Տե՛ս **Дюшень Л.,** История древней церкви, т. I, (перевод и редакция **И.В. Попова и А.П. Орлова**), Москва, 1912, էջ 441:

[18] Տե՛ս **Փաւստոս Բիւզանդ,** Հայոց պատմութիւն, (բնագիրը **Ք. Պատկանյանի**), Երևան, 1987, էջ 178:

[19] Նույն տեղում, էջ 58:

[20] Տե՛ս **Մովսէս Խորենացի,** Պատմութիւն հայոց.(բնական բնագիրը և ներ-ածությունը **Մ. Աբեղյանի**), Երևան. 1991, էջ 350:

[21] Տե՛ս **Եղիշէ,** Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. (աշխատասիրութեամբ՝ **Ե. Տէր-Մինասեանի**), Երևան. 1957. էջ 23:

[22] Տե՛ս **Երեմյան Ս.Տ.,** Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները III–IV դարերում. Ֆեոդալականացող Հայաստանի դասակարգային և պետական կառուցվածքը, Հայ ժողովրդի պատմություն, հատոր II, Երևան, 1984, էջ 141:

[23] Տե՛ս **Հակոբյան Հ.,** Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Վանի (Արարատ-Ուրարտու) թագավորությունում, Պատմություն և բաղաքականություն գիտական հանդես, 2020, թիվ 1 (6), էջ 35:

քրմերի երկնային կարգերին ծանոթ լինելու հանգամանքը նրանց իրավունք ու իշխանություն էր ընձեռում՝ երկրում դատավարություն կատարելու[24]: IV դարից սկսած Հայոց հայրապետը համարվում էր ողջ Մեծ Հայքի մեծ դատավորը, իսկ թեմերի առաջնորդ եպիսկոպոսները իրականացնում էին դատավարություններ՝ իրենց հանձնված հոգևոր հոտի շրջանակներում: Հայոց հայրապետը իրավասություն ուներ նաև դատ կատարելու տոհմիկ ազնվականների նկատմամբ[25]:

Հեթանոսական շրջանում հասարակական հարաբերությունները կարգավորվում էին սովորութային իրավունքով և արքայական հրովարտակների միջոցով: Երկրում քրիստոնեության տարածմամբ տեղի ունեցավ աշխարհայացքի, արժեհամակարգի ու սովորույթների վերաձևավորում: Սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի սնուցող այդ ակունքների փոփոխությունն էլ հանգեցրեց նոր կրոնական իրավական կարգավորման համակարգի զարգացմանը[26]: Օրենսդիր իշխանության մեծ դերը տրվեց Հայ եկեղեցուն: Դա պայմանավորված էր քրիստոնեական կրոնի գաղափարաբանությամբ, ըստ որի թեպետ արքան համարվում էր Աստծու օծյալ և նրան պետք է ենթարկվեին երկրում բոլորը, սակայն արքան իր հերթին պետք է շարժվեր ըստ Աստվածաշնչի պատվիրանների[27]: Հոգևոր իշխանությունը հստակորեն բաժանված էր աշխարհիկից և երկրում դրա գերագույն ներկայացուցիչը համարվում էր եպիսկոպոսապետը: Վերջինիս հրապարակած կանոնների, Սուրբ գրքի, ընդհանուր և Հայ եկեղեցու ժողովների կայացրած որոշումների, եկեղեցական հայրերի գրությունների և ավանդույթների հիման վրա Հայ եկեղեցում կազմվում էին օրենքներ, որոնք ունեին իրավական ուժ ողջ երկրի համար[28]: Սկսած Գրիգոր Լուսավորչից Հայ եկեղեցու առաջնորդներն իրենց ենթակա ամբողջ հավատացյալ հանրության համար ունենում են կանոններ հրապարակելու իրավունք, որոնցով կարգավորվում էին հասարակական հարաբերությունները[29]: Այդ կանոնների իրավական ազդեցությանն էին ենթարկվում նաև հասարակության այն անդամները, որոնց համար դեռ խորթ էր քրիստոնեությունը, որովհետև այդ կանոնները պետական համակարգում կիրառվում էին նաև որպես քաղաքացիական օրենքներ[30]: Պետության կառավարման գործում էական նշանակություն ձեռք բերեցին ազգային-եկեղեցական ժողովները: Այդ ժողովները գումարվում էին երկրի առաջ ծառացած կարևորագույն խնդիրների լուծման համար, որոնց մասնակցում էին թե՛ աշխարհականներ, և թե՛ եկեղեցականներ:

Հայ եկեղեցին իր ձեռքը վերցրեց կրթության գործը և նրա մեջ քրմերի սերունդներին մեծ տեղ տալով հանդերձ՝ ընդգրկեց նաև Մեծ Հայքի շատ գավառների հասարակ խավի երեխաների: Գրիգոր Լուսավորչի ջանքերով արձակվեց արքայական հրաման. «Զի ի գաւառաց գաւառաց և կողմանց կողմանց ի տե-

[24] Տե՛ս **Կրկյաշարյան Ս. Մ.**, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI – մ.թ. IV դդ.), Երևան, 2005, էջ 288:

[25] Տե՛ս **Պողոսյան Է.Վ.**, Հայաստանի պետության և իրավունքի պատմություն, Երևան, 2006, էջ 103:

[26] Տե՛ս **Ղազինյան Գ.Ս., Վաղարշյան Ա.Գ.**, Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը. Հին շրջանից մինչև մեր օրերը, Երևան, 2014, էջ 56:

[27] Տե՛ս **Հակոբյան Հ.**, Պետական կառավարումն ըստ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության Հին Կտակարանյան մոդելի, Այլընտրանք գիտական հանդես, Երևան, 2020, N 1, էջ 386:

[28] Տե՛ս **Еремян С.Т., Аревшатян С.С., Даниелян Э.Л.**, Культура раннефеодальной Армении (IV–VII вв.), Ереван, 1980, էջ 267:

[29] Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հատոր Ա. (աշխատասիրությամբ՝ **Վ. Հակոբյանի**), Երևան, 1964, էջ 243:

[30] Տե՛ս **Մելիք-Թանգեան Ն.**, Հայ եկեղեցական իրավունքը, Էջմիածին, 2009, էջ 253:

ղիս տեղիս ժողովեսցեն բազմութիւն մանկտւոյ, առ ի նիւթ վարդապետութեան, զգազանամիտ զվայրենագոյն զճիւաղաբարոյ զաշխարհաբնակսն. զորս առեալ արկաներ ի բովս վարդապետութեան»[31]: Ուսուցումը իրականացվում էր հունարենով և ասորերենով: Կրթության գործը հատկապես ծաղկում ապրեց Ներսես Մեծի (353-373թթ.) ժամանակ, որի արդյունքն էլ հանդիսացավ նրա աշակերտ Մեսրոպ Մաշտոցի կողմից հայ գրերի գյուտը: Հայաստանում գիտությունը ևս երկար դարեր զարգանում էր հոգևոր դասի շնորհիվ: Ի տարբերություն Հռոմեական կայսրության, որտեղ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո ոչնչացվեցին հեթանոս հեղինակների շատ գրքեր, Հայաստանում նոր գրերի ստեղծումից հետո աննախադեպ կերպով սկսվեցին թարգմանվել անտիկ հեղինակների բազմաթիվ գործեր,[32] և դրանց հիման վրա գրվել փիլիսոփայական ու բնագիտական աշխատանքներ: Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ հունահռոմեական միջավայրում ստեղծված գործերը, ի տարբերություն տեղի մեհենական գրությունների, հայկական միջավայրում հեթանոսությանը խթանման վտանգ չէին ներկայացնում:

Հայոց հայրապետին արքայի կողմից իրավունք տրվեց երկրում սահմանելու իշխանական աստիճանակարգությունը: Փաստորեն թե՛ աշխարհիկ, և թե հոգևոր հիերարխիայի կարգավորման հարցերով զբաղվում էր հոգևոր առաջնորդը: Դրա մասին

[31] **Ագաթանգեղոս,** Պատմութիւն հայոց, (քննական բնագիրը՝ **Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի**). Երևան, 1983, էջ 466:

[32] Տե՛ս **Երեմյան Ս.Տ.,** Հայ գրերի և դպրության սկզբնավորումը, Հայ ժողովրդի պատմություն, հատոր II, Երևան, 1984, էջ 428:

վկայություն կա թե՛ հենց Գրիգոր Լուսավորչի[33], և թե՛ Ներսես Մեծի[34] ժամանակ: Այդ իրավասությունը կարևոր լծակ կարող էր հանդիսանալ կաթողիկոսի ձեռքում և մեծ դեր խաղալ՝ իշխանական տների հետ փոխհարաբերություններում: Քանի որ այդ կերպ հոգևոր առաջնորդը կարող էր ազդել պետական համակարգում իշխանական տան զբաղեցրած դիրքի վրա:

Հայոց հայրապետը ժողովրդի, իշխանների և հայոց արքայի միջև հատուկ միջնորդի դեր ստացավ: Իշխանական ընդհարումների ժամանակ Հայ եկեղեցու հայրապետը ստանձնում էր խաղաղարարի դերը: Այդպես օրինակ՝ Մանավազյան և Որդունյաց իշխանական տների կատաղի ընդհարման ժամանակ Խոսրով արքան և Վրթանես հայրապետը որոշում են երկու տոհմերի միջև հաշտություն կայացնելու համար ուղարկել մեծ հեղինակություն վայելող Աղբիանոս եպիսկոպոսին[35]: Նույնը կատարվում էր նաև իշխանների և թագավորի միջև հակամարտության պարագայում[36]: Բացի երկրի ներքին կյանքից, Հայ եկեղեցու առաջնորդին իշխանական մյուս մարմինների հետ մեկտեղ, տեղ հատկացվեց պետության արտաքին քաղաքական հարաբերություններում[37]:

Այսպիսով, Մեծ Հայքի պետական կառավարման համակարգ քրիստոնեության մուտքով ուժեղացվեց թագավորական կենտրոնական իշխանությունը: Աղվանքում և Վիրքում քրիստո-

[33] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան,** Պատմութիւն նահանգին Սիսական, (ձեռագրութ. **Կ. վրդ. Շահնազարյանի**), Փարիզ, 1859, էջ 63–64:

[34] Տե՛ս **Մեսրոպ Վայոցձորեցի,** Յաղագս զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչի եւ պատմութիւն սրբոյն Ներսիսի Հայոց հայրապետի, Վանաձոր, 2015, էջ 34:

[35] Տե՛ս **Փավստոս Բիւզանդ,** էջ 18:

[36] Տե՛ս **Մովսէս Խորենացի,** էջ 292:

[37] Տե՛ս **Փավստոս Բիւզանդ,** էջ 126:

նեության տարածման աջակցությամբ ձևավորվեց հակասասանյան դաշինք: Քրմապետից Հայոց հայրապետին փոխանցվեց մեծ դատավորի պաշտոնը և դրան հավելվեց օրենսդրական լայն իրավազորություններ: Նախկին աշխարհաժողովների փոխարեն գումարվող շատ ազգային-եկեղեցական ժողովներում ծանրակշիռ դարձավ եկեղեցական դասի ձայնը: Հայ եկեղեցին ստանձնեց երկրում նոր՝ քրիստոնեական մշակույթի, կրթության և գիտության զարգացման գործը: Կարևոր լծակ էր նաև պետական աստիճանակարգում սահմանակարգություններ կատարելու իրավունքը: Եկեղեցուն վերապահվեց ժողովրդի, իշխանական դասի և թագավորի միջև միջնորդի դերը, ինչպես նաև՝ երկրի արտաքին հարաբերություններին մասնակցություն: Թվարկված գործոնների և դրանց գումարած՝ եկեղեցականների խորհրդականի հատուկ դերի, մեծ հողատիրույթների, ծիսակատարությունների, տասանորդի, մեհյաններից փոխանցված հարստության միջոցով Հայ Առաքելական եկեղեցին դարձավ պետական համակարգում չափազանց մեծ կարևորություն ներկայացնող պատկառելի մարմին:

Айкарам А. Акобян, *Институт истории НАН РА, к.и.н.,* **Утверждение христианства в государственную систему Великой Армении.**

В статье рассматривается проблема утверждение христианства в государственную систему Великой Армении в качестве новой религии, которая все еще преследуется со стороны определенных кругов, но, в то же время, постепенно вбирает в себя новые социальные слои и занимает новые географические ареалы. Оказавшись жизнеспособной, христианское вероучение

постепенно занимает место древних языческих культов, и Армянская церковь укрепляет свои позиции в феодальной системе страны.

Прослеживается процесс укрепления христианства в Армении, в течение которого церковь со временем берет на себя миссию по созданию и распространению уникальной и независимой идеологии страны. Церковь также играет важную роль во внешней политике Армении, формировав союз с Грузией и Албанией, тем самым способствуя распространению христианства в этих соседних странах. Сферы образования, науки и культуры в определенной мере тоже входят в лоно церкви. Духовенство выступает в роли особого советника. Пост великого судьи удостаивается католикосу армян, и церковь получает законодательную власть. Армянским патриархам присуждается право установить иерархическую систему духовенства. Особенно значительной становится посредническая роль духовенства между царем, правящим классом и народом. Отданные церкви большие территории, пожертвования, огромные богатства, полученные от особых налогов и ритуалов, делают Армянскую церковь могущественной силой в государственной системе Великой Армении.

Haykaram H. Hakobyan, *Institute of History of the NAS RA, Candidate of Sciences in History,* **The establishment of Christianity in the public administration system of Greater Armenia.**

The article examines the problem of the entry of Christianity into the state system of Greater Armenia as a new religion, which is still persecuted by certain circles, but, at the same time, gradually

absorbs new social strata and occupies new geographical areas. Having proved to be viable, the Christian doctrine eventually takes the place of ancient pagan cults, and the Armenian Church strengthens its position in the feudal system of the country.

The process of strengthening Christianity in Armenia is traced, during which the church over time takes on the mission of creating and disseminating a unique and independent ideology of the country. The Church also plays an important role in Armenia's foreign policy, forging an alliance with Georgia and Albania, thereby contributing to the spread of Christianity in those neighboring countries. The spheres of education, science and culture, to a certain extent, are also included in the bosom of the church. The clergy act as a special advisor. The position of the Grand Judge is awarded to the Catholicos of Armenians, and the church receives legislative power. The Armenian patriarchs are granted the right to establish the hierarchical system of clergy. The intermediary role of the clergy between the king, the ruling class and the people becomes especially significant. The large territories given to the church, donations, huge riches received from special taxes and rituals make the Armenian Church a significant power in the state system of Armenia. Maior.

ՀԵՆՐԻԿ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀԱՅՈՑ ՄԱՐԶՊԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (VI Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – VII Դ. 30-ԱԿԱՆ ԹԹ.)

Բանալի բառեր՝ *Սեբեոս, Սուրեն, Ասողիկ, Դավիթ Սահառունի, Խոսրով Փարվեզ, Սմբատ Բագրատունի, Մուշեղ Մամիկոնյան, Վարազտիրոց Բագրատունի, Թեոդորոս Ռշտունի, մարզպան:*

Հայոց մարզպանների կառավարման հարցի շուրջ տպագրված նախորդ հոդվածում մենք անդրադարձել էինք Հայաստանում՝ 428 թ. մինչև VI դ. առաջին կեսն իշխած մարզպանների կառավարմանը[1]: Սույն հոդվածը, որպես նախորդի շարունակություն, ընդգրկում է VI դ. երկրորդ կեսից մինչև VII դ. 30-ական թթ. ժամանակահատվածը: Մարզպանական վարչակարգը ներդնելով՝ պարսից արքունիքը նպատակ ուներ աստիճանաբար վերացնել Հայաստանի ռազմա տնտեսական հզորության հիմքը կազմող նախարարական համակարգը և երկիրն ամբողջովին դնել մարզպանի իրավազորության տակ: Դա է նաև պատճառը, որ մարզպանական վարչակարգի շուրջ երկուհարյուրամյա գոյության ընթացքում Հայկական մարզպանությունն ունեցել է ընդամենը ազգությամբ հայ հինգ մարզպան: Ակնհայտ

[1] Տե՛ս **Խաչատրյան Հ.**, Հայոց մարզպանների կառավարման հարցի շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների» 2017, թիվ 1, էջ 48–62:

է, որ սկզբնական շրջանում պարսից իշխանությունը պետք է գնար որոշակի զիջումների, որպեսզի հողատեր իշխաններին աստիճանաբար իր կողմը գրավեր: Կենտրոնացման ձգտող Սասանյան Պարսկաստանը, սակայն չէր կարող երկար հանդուրժել իր տերության մեջ որևէ ինքնավար կարգավիճակ: VI դ. մեծամասամբ հայտնի է, որպես պարսկաբյուզանդական պատերազմների մի ժամանակաշրջան, որի հետևանքով ռազմական գործողությունները տեղի էին ունենում նաև Մարզպանական Հայաստանում, ինչը մեծապես վնասում էր երկրի ռազմատնտեսական հզորությանը: Այդուհանդերձ, Մարզպանական Հայաստանը, մինչև իսկ Սասանյանների անկումը, պահպանեց իր ազգային նկարագիրը, նախարարական համակարգը և կառավարման կարևոր օղակները:

Սեբեոսը[2] Վարդ պատրիկ Մամիկոնյանից հետո նշում է, որ եկան պարսիկ մարզպաններ. «ապա ո՛չ կարացին պատերազմիլ Հայք, ի հնազանդութեան կացին մինչև ցՍուրէնն մարզպան և ցՎարդանն Մամիկոնէից տէրն»[3]: Թե ովքեր էին այդ պարսիկ մարզպանները մինչև Սուրեն մարզպանը պատմիչը չի հաղորդում, այդ բացը լրացնում է Ասողիկի հաղորդումը: Ըստ պատմի-

[2] Նախորդ հոդվածում մենք հակված էինք կարծելու, որ Սեբեոսի հիշատակումը, թե Վահան Մամիկոնյանը Կավադ I (488–496 թթ. և 498–531 թթ.) արքայից է ստացել մարզպանությունը շփոթի հետևանք է: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ 492–499 թթ. հայերի կողմից տեղի էր ունեցել հակապարսկական ապստամբություն, որն, ըստ երևույթին պետք է գլխավորեր մարզպան Վահան Մամիկոնյանը (տե՛ս Հայոց պատմություն, հ. II, Միջին դարեր. Գիրք առաջին (IV դարի սկիզբ – IX դարի կես), Երևան, 2018, էջ 209–213), հիմք է տալիս ենթադրելու, որ Սեբեոսի *«...առնէ և ընդ Հայոց հաշտութիւն, և կոչէ զՎահան ի դուռն, և մեծարէ զնա մեծապես պատուով: Եւ տայ նմա զմարզպանութիւն աշխարհին և զՄամիկոնեաց տոհմութիւնն...»* (**Պատմութիւն Սեբէոսի,** աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի. Երևան, 1979 (այսուհետև՝ Սեբեոս), էջ 67) հիշատակումը վերաբերում է հենց այս ապստամբությունից հետո արքայից արքա Կավադ I կողմից Վահան Մամիկոնյանին երկրորդ անգամ մարզպանի պաշտոնում վերահաստատելուն:

[3] **Սեբեոս,** էջ 67:

չի՝ «Նախ *Դենշապուհ*, որ զշնմոլութիւնն շատացոյց եւ զորմզդական հուրն վառեաց ի Ռշտունիս....: Եւ յետ նորա *Վարազդատ* ոմն պարսիկ ի նմին տոհմէ: Եւ ապա Խոսրով արքայ Պարսից *զՍուրէն* ոմն ազգական իւր, որում անուն էր Ճիհովր-Վշնասպ՝ հանէ ի հազարապետութիւն Հայոց: Որ եկեալ կալաւ զերկիրս մեր, յոյժ հարստահարելով զնախարարս Հայոց»[4]: Ասողիկի այս հաղորդումները նույնությամբ կրկնում է Վարդան Արևելցին[5]: Դենշապուհի և Վարազդատի կապակցությամբ դժվար է ասել իրական մարզպաններ էին, թե պարզապես հորինված, քանի որ նրանք այլ աղբյուրներից հայտնի չեն: Ինչը սակայն չի կարելի ասել Սուրեն մարզպանի պարագայում, քանի որ նրան հիշատակում են ինչպես հայ, այնպես էլ օտար մատենագիրները[6]:

Սուրենի մարզպան կարգվելու տարեթիվը պատմագիտության մեջ սկսած Մ. Օրմանյանից թվագրվում է 564 թ.[7], իսկ Ն. Ակինյանն այն թվագրում է 568/569 թ.[8]: Նշենք, որ «Սուրբ Հիզտիբուզիտի վկայաբանությունից» հայտնի վերջին մարզպանը կառավարել էր 554/555 թ.: Այստեղ հետաքրքիր է, որ Ասողիկը նշում է, որ Սուրեն Ճիհովր-Վշնասպը Խոսրով I Անուշիրվանի

[4] **Ստեփաննոս Տարաւնեցի Ասողիկ.** Պատմութիւն Տիեզերական (այսուհետև՝ Ասողիկ), «Մատենագիրք Հայոց», հ. ԺԵ, Ժ դար, Երևան. 2011, էջ 690–691:

[55] Տե՛ս Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի** (այսուհետև՝ Վարդան վարդապետ), Վենետիկ, 1862, էջ 61:

[6] Տե՛ս **Բարթիկյան Հ.**, "NARRATIO DE REBUS ARMENIAE", հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-բաղկեդոնական սկզբնաղբյուր, «Բանբեր մատենադարանի», 1962, թիվ 6, էջ 465, **Ակինեան Ն.**, Թուղթ Փոտայ Պատրիարքի առ Զաքարիա Կաթողիկոս Հայոց մեծաց, «Հանդէս Ամսօրեայ», 1968, թիվ 1–3, սիւն. 69–70, **Հովհան Եփեսացի.** «Եկեղեցական պատմություն», Օտար աղբյուրներ Հայաստանի և հայերի մասին 8, Ասորական աղբյուրներ Ա, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Մելքոնյանի. Երևան, 1976, էջ 388–390:

[7] Տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Դ. Ցանկեր, Էջմիածին, 2002, էջ 76, **Հակոբյան Ն.**, 572 թ. ապստամբության գնահատականի հարցի շուրջ, «Ավարայրի խորհուրդը», Երևան, 2003, էջ 217, Հայոց պատմություն, հ. II, էջ 218:

[8] Տե՛ս **Ակինեան Ն.**, Նղիշէ վարդապետ և իւր պատմութիւնն Հայոց պատերազմի, Մաս երկրորդ, Վիեննա, 1936, էջ 427:

(531–579 թթ.) հրամանով կարգվում է Հայոց հազարապետ ոչ թե մարզպան: Նույնպիսի իրավիճակ է առկա նաև Դավիթ Սահառունու դեպքում ով «կալաւ զհազարապետութիւն Հայոց ամս Լ...»[9]: Մենք նախկինում հակված էինք կարծելու, որ Սուրենը նախ եղել էր Հայոց հազարապետ, այնուհետև մարզպան: Աղբյուրի առավել մանրամասն ուսումնասիրությունը սակայն փաստում է, որ Ասողիկի համար մարզպան իմաստը միանշանակ չէր և նա հազարապետը կիրառել է թերևս դրա առաջնային իմաստով՝ հազար հոգուց բաղկացած գնդի հրամանատարի: Ասողիկի ապրած շրջանում Հայոց մարզպան գործակալությունը, որն առկա էր Բագրատունյաց արքունիքում, անվանականից բացի ուրիշ նմանություն չուներ սասանյան շրջանի մարզպանների հետ՝ դատելով աղբյուրների սակավ տվյալներից, այն ռազմական բնույթի էր[10]: Սասանյան մարզպանը պատմագրի համար, անշուշտ, ռազմական պաշտոնյա էր և թերևս կարող էր շփոթվել հազարապետի հետ: Հաշվի առնելով այն ամբարտավան պահվածքը, որ դրսևորում էր Սուրեն մարզպանը հայ ազատանու նկատմամբ, ենթադրելի է, որ հազիվ թե նա կառավարեր այդքան երկար՝ ութ տարի (564–572 թթ.): Ցավոք տվյալներ չկան ճշտելու համար, թե երբ է Սուրենը կարգվել մարզպան, սակայն առավել իրատեսական է Ն. Ակինյանի տեսակետը՝ լավագույն դեպքում 3–4 տարվա կառավարում: Սուրեն մարզպանը սպանվեց 572 թ. փետրվարին հայերի հակապարսկական ապստամբության ժամանակ[11]:

[9] **Ասողիկ,** էջ 692:
[10] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 273–275:
[11] Տե՛ս **Maksymiuk K.**, The insurrection in Persarmenia in context of military actions of Rome and Iran in border zone (572–578). «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXX, Երևան, 2016, էջ 98:

Սեբեոսը, այնուհետև նշում է այն զորավարների ցանկը, ովքեր եկել էին Հայաստան Վարդան Մամիկոնյանի ապստամբությունից մինչև 590 թ.[12] «Յորժամ սպանին *զՍուրէն* մարզպան՝ ի նմին ամի եկն *Վարդան Վշնասպ* ոմն, և գործ ինչ ո՛չ կարաց գործել. եկաց ամ մի և գնաց: Ապա եկն և *Գողոնն Միհրանն...Փիլիպպոս*, Սիւնեաց տէր... ապա եկն *Տամ Խոսրով*... ապա եկն *Վարազ Վզուրն*... ապա եկն *ասպետն մեծ պարթևն և պահլաւն*... ապա *Հրահատն* մարզպան... ապա եկն *Հրատրին Դաւրան* մարզպան»[13]: Նկատենք, որ տարածաշրջան եկած զորավար-մարզպանները ոչ թե նշանակվում էին Հայոց մարզպաններ, այլ պարսկա-բյուզանդական պատերազմի հետևանքով գալիս էին ռազմական գործողություններ իրականացնելու պարսից տերության արևմտյան սահմաններում և հնարավոր ապստամբության բացառման նպատակով:

Ի տարբերություն Սեբեոսի, Ասողիկը հաղորդում է. «Իսկ յետ սուսերահարն լինելոյ Սուրենայ ոչ եւս պարսիկ մարզպան առաքէր ի Հայս թագաւորն Պարսից. այլ ի խնդրոյ նախարարացն իշխան հաստատէ Հայոց *զԴավիթ Սահառունի*, որ կալաւ զհազարապետութիւն Հայոց ամս Լ հրամանաւ Որմզդի, որդւոյ Խոսրովու Պարսից արքային»[14]: Սամվել Անեցին հաղորդում է. «Մարզպանք Տաճիկք զկնի Մժեժա մարզպանութեանն՝ զամս ԼԴ: Յետ մարզպանացն սպանման *Ճիհր Բուրզենայ, Ճիհր Վշնասպուհենա, Ճիհր Վղովն Միհրանայ* եւ այլ Տաճկաստա-

[12] Տե՛ս **Սեբեոս,** էջ 236–236, ծան. 151:
[13] Տե՛ս նույն տեղում, էջ 70–71:
[14] **Ասողիկ,** էջ 692:

նեացն: *Դաւիթ Սահառունի՝* ամս Լ»[15]: Կիրակոս Գանձակեցին հետևելով Սամվել Անեցուն հաղորդում է. «Իսկ յետ սպանման մարզպանացն *Ճիհր Բուրզենայ, Ճիհր Վշնասպ Սուհենայ, Ճիհր Վղոն Միհրանայ*, և այլ տաճկաստանեացն, *Դաւիթ Սահառունի* մարզպան լեալ ամս երեսուն»[16]: Ճիհր Վշնասպ Սուհենը դա անկասկած Ասողիկի հիշատակած մարզպան Սուրեն Ճիհովր-Վշնասպն է, իսկ Ճիհր Վղոն Միհրանը Սեբեոսի մոտ առկա Գողոն Միհրանն է:

Դավիթ Սահառունի. Հայոց մարզպա՞ն, թե Հայոց իշխան) Դավիթ Սահառունու մասին տեղեկությունները հակասական են և որոշակի չեն նաև նրա կառավարման թվերը: Հստակ է, որ նա Հայոց իշխանի՝ բյուզանդապատկան Հայաստանի կառավարչի պաշտոնում փոխարինել է Մժեժ Գնունուն: Այսպես, ըստ Սեբեոսի նա Մժեժ Գնունու կողմից կապանվելով ուղարկվել է Հերակլ կայսեր (610–641 թթ.) մոտ, սակայն ճանապարհին կապանքներն արձակելով սպանել է Մժեժ ու Վարազ Գնել Գնունիներին և զորքի կամքով ստանձնել զորավարությունը[17]: Այնուհետև պատմիչը նշում է, որ Հերակլ կայսրը «առնէ ըստ խնդրոյ իշխանացն զնա իշխան ի վերայ ամենայն աշխարհացն, և տայ նմա պատիւ կիւրապաղատությանն, և հաստատէ զնա ի ծառայութիւն իւր, և կալեալ զիշխանութիւնն ամս Գ»[18]: Ա. Շահինյանը, փորձելով ցույց տալ, որ Մժեժ Գնունին ևս կրել է կուրոպաղատ տիտղոսը պատմիչի տեղեկությունը ձևափոխել է,

[15] **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ.** Ժամանակագրութիւն (Աղամից մինչեւ 1776 թ.), աշխատասիրությամբ Կարեն Մաթեւոսյանի, Երեւան, 2014, էջ 144, 146:

[16] **Կիրակոս Գանձակեցւոյ** Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի), աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 53:

[17] Տե՛ս **Սեբեոս,** էջ 133:

[18] Նույն տեղում:

որով իբրև Հերակլ կայսրը Դավիթ Սահառունուն տվել է նույնպիսի կուրապաղատի տիտղոս[19]: Սակայն Սեբեոսի՝ մեջբերված վերոնշյալ հատվածը նմանատիպ ենթադրություն անելու հիմքեր չի տալիս:

Հովհաննես Դրասխանակերտցու համաձայն Հերակլ կայսեր կողմից Դավիթ Սահառունին կուրոպաղատ դարձավ, ապա կարգվեց Հայոց իշխան, որը տևել էր երեք տարի[20]: Մեջբերենք նաև Ասողիկի հաղորդումը. «Իսկ յետ սուսերահարն լինելոյ Սուրենայ ոչ եւս պարսիկ մարզպան առաքէր ի Հայս թագաւորն Պարսից. այլ ի խնդրոյ նախարարացն իշխան հաստատէ Հայոց զ*Դաւիթ Սահառունի*, որ կալաւ զհազարապետութիւն Հայոց ամս Լ, հրամանաւ Որմզդի, որդւոյ Խոսրովու Պարսից արքային»[21]: Կիրակոս Գանձակեցին նշում է, որ պարսիկ մարզպաններից հետո, Դավիթ Սահառունին «մարզպան լեալ ամս երեսուն: Յետ *Դաւթի Սահառունւոյ* լինի մարզպան Հայոց *Թէոդրոս Ռշտունի* ամս քսան և հինգ»[22]: Վերջին հաղորդումները պարունակում են մի քանի անճշտություն: Ասողիկի հաղորդումից ստացվում է, որ Սուրենի սպանվելուց հետո՝ 572 թ., պարսից արքան այլևս մարզպան չի ուղարկում Հայաստան, այլ նախարարների խնդրանքով Հայոց իշխան է կարգում Դավիթ Սահառունուն, ով պարսից Որմիզդ IV արքայի (579–590 թթ.) հրամանով

[19] Տե՛ս **Шагинян А.**, Армения и страны Южного Кавказа в условиях византийско-иранской и арабской власти. СПб., 2011, էջ 207:

[20] Տե՛ս **Յովհաննէս Դրասխանակերտցի**, Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի), «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 406: Կաթողիկոս պատմագրի աշխատության 1912 թ. հրատարակության մեջ նշված է «ամս Դ» (տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ, 80), որի պատճառով Սահառունու իշխանության ավարտը տատանվում է 638/639 թ. միջև:

[21] **Ասողիկ,** էջ 692:

[22] **Կիրակոս Գանձակեցի,** էջ 53, 56:

երեսուն տարի վարում էր հազարապետության գործակալությունը: Այստեղ մի քանի պարսից արքաների կառավարում միախառնված է ներկայացվում: 572 թ. մինչև 579 թ. Խոսրով Անուշիրվանն էր գահակալում, այնուհետև նրա որդին՝ Որմիզդը, և այդ ժամանակ չէր կարող մարզպան նշանակվել այն պարզ պատճառով, որ Հայաստանի ապստամբությունով սկսվել էր պարսկաբյուզանդական քսանամյա պատերազմը, որի հետևանքով, տարածաշրջան էին ուղարկվում մարզպաններ[23] ու սահմանակալներ, ինչպես նշում է Սեբեոսը «մինչև ցսպառումն խաղաղութեանն՝ որ ի մէջ Պարսից և ի մէջ Յունաց և ի մէջ թագաւորացն երկոցունց՝ Մաւրկայ և Խոսրովայ»[24], այն է մինչև 602 թ., երբ սպանվեց Մավրիկիոս/Մորիկ կայսրը (582–602թթ.): Մյուս կողմից Դավիթ Սահառունուն փաստորեն պետք է Հայոց իշխան կարգեր Խոսրով Անուշիրվանը, որն էլ նրա որդու կողմից կարգվել էր նաև հազարապետ: Նկատենք, որ ուսումնասիրողներն ուշադրություն են դարձրել միայն Որմիզդ արքայի հիշատակությանը:

Է. Դանիելյանը, Դավիթ Սահառունու՝ VII դ. սկզբին մարզպան լինելու հանգամանքը բացառելով, գտնում է, որ նա VI դ. 80-ական թվականներին Արևելյան Հայաստանում վարել է հազարապետի պաշտոնը[25]: Դա, սակայն, հաջորդում է նրա՝ Հայոց իշխան կարգվելուն: Այսինքն, եթե հիմք ենք ընդունում Ասողիկի

[23] Մարզպանները պարսից ռազմական պաշտոնյաներ էին, որոնք պատերազմի ժամանակ գլխավորում էին զորքը: Քանի որ ընթանում էր պարսկա-բյուզանդական պատերազմը տարածաշրջան ուղարկված զորքը գլխավորում էին մարզ-պանները ընդդեմ Բյուզանդիայի: Սա ամենևին չի նշանակում, որ պարսից զորքերի գլուխ կանգնած մարզպանը գալով ռազմաբեմ դառնում էր Հայոց կամ Վրաց մարզպան (Հ. Խ.):

[24] **Սեբեոս,** էջ 71:

[25] Տե՛ս **Դանիելյան Է.**, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI–VII դարեր), Երևան, 2000, էջ 146:

հաղորդումը պետք է նկատի առնել, որ Դավիթ Սահառունին պաշտոնավարել է Խոսրով Անուշիրվանի հրամանով: Այս իշխանը, եթե նույնիսկ նրա պաշտոնավարումը Որմիզդ արքայից հաշվենք, առնվազն 30–35 տարեկան պետք է լիներ, որ նշանակվեր այդպիսի բարձր պաշտոնի: Մրենի տաճարի կառուցման արձանագրությունը վերծանելով՝ Հ. Օրբելին գտել է, որ շինարարության ավարտը համապատասխանել է Հերակլ կայսեր կառավարման քսանիններորդ կամ երեսուներորդ տարվան՝ 639/640 թ.[26]: Ա. Մանուչարյանի կարծիքով տաճարը կառուցվել էր 613 թ.[27]: Մոտավոր հաշվարկներով Դավիթ Սահառունին 639 թ. արդեն պետք է լիներ 90–95 տարեկան զառամյալ ծերունի, որը հազիվ թե կարողանար կապանքները կտրելով սպաներ ավելի երիտասարդ զորավարներին և անցներ զորքի գլուխ: Ասողիկը, ինչպես Մժեժ Գնունու, անպես էլ Դավիթ Սահառունու իշխանությունը տարածել է ավելի վաղ շրջանի վրա: Կարծում ենք, որ Ասողիկի մոտ Սեբեոսի հաղորդած տեղեկությունները միախառնված են, քանզի Սեբեոսի մոտ կայսրը, Ասողիկի մոտ պարսից արքան, Դավիթ Սահառունուն նախարարների խնդրանքով են կարգում Հայոց իշխան: Ճիշտ է Սեբեոսը ուղիղ չի նշել Հայոց իշխան տիտղոսը, այլ՝ «իշխան ի վերայ ամենայն աշխարհացն», սակայն, դա, ըստ էության խոսում է այդ հանգամանքի օգտին: Նաև չմոռանանք, որ Հովհաննես Դրասխանակերտցին փաստում էր նրա Հայոց իշխան լինելը: Մրենի տաճարի արձանագրության մեջ Դավիթ Սահառունին հանդես է գալիս՝ «պատրիկ, կուրոպաղատ» ու «Հայոց և Ասորւոց սպարա-

[26] Տե՛ս **Орбели И.**, Избранные труды, Ереван, 1963, էջ 400–401:

[27] Տե՛ս **Մանուչարյան Ա.**, Քննություն Հայաստանի IV–XI դարերի շինարարական վկայագրերի, Երևան, 1977, էջ 69:

պետ» կոչումներով, որովհետև Հայոց իշխանը կրում էր պատրիկ կամ կուրոպաղատ տիտղոսները[28]: Ա. Մանուչարյանի տեսակետը, որ «Հայոց և Ասորւոց» սպարապետի կոչումը Դավիթ Սահառունին պետք է ստացած լիներ ավելի վաղ՝ Հերակլի կառավարման սկզբում[29], վիճարկելի է քանի որ 602 թ. վերսկսված պատերազմում, մինչև 622 թ. ռազմական հաջողությունը պարսիկների կողմն էր, որոնք գրավել էին Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող հողերի մեծ մասը, մոտենալով ընդհուպ մայրաքաղաքին[30]: Դավիթ Սահառունին «Հայոց և Ասորւոց» սպարապետ կոչումը լավագույն դեպքում կարող էր ստանալ 623–628 թթ. ընթացքում, երբ դեռ Հայոց իշխան չէր: Մրենի տաճարի արձանագրության մեջ նա պարզապես արտացոլել է իր բարձր տիտղոսաշարը:

Որոշ ուսումնասիրողներ Հերակլ կայսեր դեմ կազմակերպված դավադրությունը, որին ներկա էր նաև Դավիթ Սահառունին, թվագրում են 637/638թ.[31]: Նման թվագրման դեպքում կստացվի, որ 637/638 թ. Մժեժ Գնունին պետք է ձերբակալեր Դավիթ Սահառունուն և ուղարկեր արքունիք: Սակայն, այստեղ ակնհայտ հակասություն կա, քանի որ Սահառունի իշխանը, ոչ միայն իրեն ազատում է կապանքներից, այլև սպանում իրեն կալանավորողներին: Դրանից հետո է, որ Հերակլ կայսրը նրան

[28] Տե՛ս **Орбели И.**, Избранные труды, էջ 401, **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայոց իշխան տիտղոսի ծագումը և Հայոց տերությունը VII դարում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, թիվ 1, էջ 243–244:

[29] Տե՛ս **Մանուչարյան Ա.**, նշվ., աշխ., էջ 65–67:

[30] Տե՛ս **Իսկանյան Վ.**, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV–VII դդ., Երևան, 1991, էջ 430–431:

[31] Տե՛ս **Юзбашян К.**, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988, էջ 30, **Хуршудян Э.**, Армения и сасанидский Иран (Историко–культурологическое исследование), Алматы, 2003, էջ 109, **Шагинян А.**, Армения и страны Южного Кавказа в условиях византийско-иранской и арабской власти, էջ 207:

շնորհում է կուրոպաղատի ու Հայոց իշխանի տիտղոսները, վերջինը նա վարում է երեք տարի: Այդպիսով ենթադրելի է, որ Սահառունին կառավարել է մինչև 641 թ.[32]: Այդ թվականից Դավիթ Սահառունին քաղաքական ասպարեզում այլևս չի հիշատակվում, քանզի սկսվել էր արաբական արշավանքը Հայաստան: Ուստի միանգամայն տրամաբանական է Սահառունի իշխանի Մժեժ Գնունուն սպանելը թվագրել 635 թ.: Դավիթ Սահառունին կառավարելով երեք տարի, անարգվեց զորքի կողմից և հեռացվեց: Այսպիսով, VI դ. վերջերին հիշատակված Դավիթ Սահառունին պատմական անձ չէ, համանուն նախարարը եղել է ոչ թե Հայոց մարզպան, այլ՝ Հայոց իշխան 635–638/39 թթ.[33]:

Սմբատ Բագրատունի (Խոսրով Շում) մարզպան) Կարևոր ենք համարում 591 թ. կապակցությամբ անդրադառնալ Սմբատ Բագրատունու (Խոսրով Շում) մարզպանության խնդրին, որովհետև նա վայելելով Խոսրով II Փառվեզի (590 թ., 591–628 թթ.) վստահությունն ու համակրանքը պետք է մեծ դեր խաղար Մարզպանական Հայաստանի (թեև տարածքային առումով կրճատված) իրավաքաղաքական կյանքում: Առաջինն այս իշխանին հիշատակում է Սեբեոս պատմիչն իր երկի Ի գլխում կապված Մավրիկիոս կայսեր կողմից հայ զինական ուժի՝ երկրից դուրս բերելուն և Սահակ Մամիկոնյանի գնդի հետ դեպի

[32] Տե՛ս **Шагинян А.**, նշվ. աշխ., էջ 206, 211: Ուսումնասիրողը հակասում է ինքն իրեն, որովհետև մեկ նշում է, թե 639/40 թ. մարզպանն էր Թեոդորոս Ռշտունին, իսկ մեկ այլ տեղում նշում է, որ 639/40 թ. Դավիթ Սահառունին պաշտոնազրկվեց և երկրի երկու հատվածներում համընդհանուր դեկավար ճանաչվեց Թեոդորոս Ռշտունին (տե՛ս նույն տեղում էջ 201, 209):

[33] Առկա է տեսակետ՝ Դավիթ Սահառունու մարզպանությունը տեղափոխել VII դար՝ (617–629 թթ.), իբրև թե Սահառունի իշխանը հաջորդել է Սմբատ Բագրատունուն (591–617 թթ.), ինչը մեր կարծիքով ժամանակավրեպ է (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 2, (III դարի վերջերից մինչև IX դարի կեսերը), Երևան, 2011, էջ 624):

Թրակիա ուղարկելուն[34]: Բագրատունի իշխանը, թեև Խաղտիք հասնելով ըմբոստացավ, չցանկանալով գնալ կայսեր մոտ, սակայն տեղի տալով կայսեր խոստումներին ներկայացավ իր գնդով, որոնց Մավրիկիոս կայսրը ուղարկեց դեպի Թրակիա[35]: Պատմիչն այնուհետև հայտնում է, որ հայ նախարարները որոշել էին ապստամբել կայսեր դեմ, որպեսզի այլևս չմեռնեն օտարության մեջ, սակայն Սմբատ Բագրատունու կողմից նախատեսվող ապստամբության կանխումից հետո (590 թ.), նրան և յոթ այլ անձանց, հավանաբար համակազմակերպիչներին, տանում են Կոստանդնուպոլիս դատավարության: Մահվան դատապարտված Սմբատ Բագրատունին հաղթում է «կրկեսային մենամարտում», որից հետո կայսրը նրան ներում է շնորհում, սակայն ամբաստանվելով աքսորվում է հեռավոր կղզիներից մեկը, ապա տրիբունի պաշտոնով Աֆրիկա՝ զինվորական ծառայության[36]: Այս իրադարձություններից հետո, Սեբեոսը Սմբատի մասին կրկին հիշատակում է ԻԴ գլխում, որպես արդեն Վրկանից մարզպան. «Եւ եղև ի ժամանակին յայնմիկ հաճոյանալ Սմբատայ Բագրատունւոյ յաչս Խոսրովու արքային. տայ ի նա զմարզպանութիւն երկրին Վրկանայ, առնէ զնա իշխան ի վերայ ամենայն կողմանն այնորիկ...»[37]: Թե, որքան էր պաշտոնավարել Սմբատը կտեսնենք ստորև:

Հաջորդ պատմիչն, անդրադարձած Բագրատունի իշխանին, Հովհաննես Դրասխանակերտցին է: Ըստ կաթողիկոս պատմիչի՝ «Խոսրովայ հաստատեալ ի թագաւորութիւնն Պարսից՝ աստանաւր Սմբատ քաջ Բագրատունի բազում եւ անհնա-

[34] Տե՛ս **Սեբեոս,** էջ 91–92:
[35] Տե՛ս նույն տեղում, էջ 92:
[36] Տե՛ս **Իսկանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 370–394:
[37] **Սեբեոս,** էջ 96:

րին մարտս յարդարէր ընդդէմ բոլոր թշնամեաց նորա...: Ընդ որ զարմացեալ Խոսրովայ՝ յաւէտ իմն հաճոյանայր Սմբատ յաչս նորա. Եւ բազմաւք ոմամբք ընծայական աւժտութեամբք զնա պատուասիրեալ՝ տայ նմա եւ զմարզպանութիւնն Վրկանայ»[38]: Այստեղ հատկանշական է, որ պատմիչն ի տարբերություն Սեբեոսի նշում է Խոսրով Փարվեզի գահին հաստատվելու փաստը, որից հետո է Սմբատն արժանանում արքայի բարեհաճությանը: Խոսրով Փարվեզն առաջին անգամ գահ է բարձրացել 590 թ. փետրվարի 6-ին, երբ Վնդոյի և Վստամի կողմից Որմիզդ IV արքան գահընկեց արվեց և կուրացվեց[39], այնուհետև վերահաստատվել գահին 591 թ.[40]: Ենթադրելի է, որ Սմբատի մարզպան լինելը պետք է համընկներ Խոսրով արքայի կառավարման սկզբնական շրջանին: Հիշենք Սեբեոսի բերված հաղորդումը, ըստ որի 590 թ. նա արդեն գտնվում էր կայսեր մոտ, այնուհետև՝ աքսորավայրում, ապա՝ Աֆրիկայում:

Հիշյալ իրադարձություններին ժամանակագրորեն թեև Ուխտանես եպիսկոպոսի երկն է մոտ, սակայն շահեկան կլինի սկզբում մեջբերել Ասողիկի հաղորդումը. «Իսկ զկնի Տեառն Մովսիսի եկաց կաթողիկոս Հայոց Տէր Աբրահամ ի գաւառէն Ռշտունեաց ... հրամանաւ Սմբատայ Բագրատունւոյ, որ էր մարզպան Հայոց ի Խոսրովու հրամանէ»[41]: Այս հաղորդումը, ինչպես դժվար չէ նկատել վերաբերվում է 607/8 թ. դեպքերին, երբ կաթողիկոս ընտրվեց Աբրահամ Ա Աղբաթանեցին (607/8–

[38] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 399:
[39] Տե՛ս **Дашков С.**, Цари царей Сасаниды (Иран III–VII вв. в легендах, исторических хрониках и современных исследованиях), Москва, 2008, էջ 157:
[40] Տե՛ս **Malek M.**, The Sasanian king Khusrau II (AD 590/1–628) and Anāhitā, "Nāme-ye Irān-e Bāstān", vol. 2, № 1, 2002, էջ 23–24:
[41] **Ասողիկ,** էջ 692:

615 թթ.): Հետաքրքիր է, որ Ասողիկը անմիջապես հաղորդում է Սմբատի՝ Վրկանում պատերազմելը, սակայն նրան չի կոչում և ոչ մի տեղ Վրկանից մարզպան: Ենթադրելի է, որ ի դեմս «Հայոց մարզպան»-ի հարկ է հասկալ Վրկանից մարզպանին, քանի որ Սեբեոսի և Դրասխանակերտցու մոտ բացակայում են այդպիսի հատվածներ: Այստեղ տեղին է մեջբերել Ուխտանեսի համապատասխան հաղորդումը, ով խոսելով հայ-վրացական եկեղեցական անցքերի մասին, հայտնում է հետևյալը. «Եւ Սմբատն՝ զորմէ ասացաք թէ՝ մարզպան էր Հայոց, այր բարի եւ բարեպաշտ եւ հաւատարիմ եւ հաստատուն ի հաւատս ուղղափառութեան...»[42]: Ուխտանեսն, այս հատվածը չէր կարող քաղել Դրասխանակերտցուց, իսկ քիչ հետո խոսելով արդեն Վրկանից մարզպան կարգված նույն Սմբատ Բագրատունու մասին հայտնում է, որ նա «բազում պատերազմունս վանեալ եւ վատնեալ ի Հայոց, եւ [ի] Յոյնս, ու ի Պարսիկս՝ որպէս ուսուցանէ քեզ պատմութիւնն Հերակղի»[43]: Ահա, այստեղ է, որ պարզ է դառնում, թե ումից է վերցրել այդ տեղեկությունը Ուխտանեսը, դա Սեբեոսն է անկասկած, որի ներկա հրատարակությունում բացակայում է Սմբատի Հայոց մարզպան լինելը: Դա նշանակում է, որ պատմագիրն օգտվել է Սեբեոսի երկի առավել անաղարտ օրինակից, որը մեզ չի հասել[44]: Բացառված չէ, որ Ասողիկը, եթե ոչ Սեբեոսի, ապա Ուխտանեսի հաղորդումից կարող էր օգտվել: Սա կարծես թե մի կողմից վկայում է Սմբատ Բագրատունու Հայոց մարզպան լինելը, սակայն մյուս կողմից ծնում է ավելի շատ հարցեր[45]:

Այս առումով հետաքրքրություն կարող են ներկայացնել Սամվել և Մխիթար Անեցիների աշխատությունները: Սամվել Անեցին իր «Ժամանակագրութիւն» մեջ խոսելով Սմբատի՝ Խոսրով արքայի թշնամիների դեմ մարտերի, այնուհետև, Վրկանից մարզպան կարգվելու մասին, այն թվագրում է ՇՂԵ-ով (595 թ.)[46]: Իրականում այստեղ խոսքը 593 թ. մասին է, քանի որ պատմիչը այն տվել է Փրկչական թվականով, որը 2 տարով ավել է քան արդի թվագրումը[47]: Նրան հետևած Մխիթար Անեցին նույն իրադարձությունը դնում է ՇՂԶ տարում (596 թ.)[48]: Սեբեոսի հաղորդումներից հայտնի է, որ հայ նախարարների կողմից 591–596 թթ. տեղի էր ունեցել ապստամբական շարժում և՛ Բյուզանդիայի և թե՛ Սասանյան Պարսկաստանի դեմ[49]: Սմբատ Բագրատունին, եթե իսկապես եղել է Հայոց մարզպան, ապա դա պետք է լիներ 596 թ. հետո ընկած ժամանակահատվածում:

Հետագա դարերի պատմիչներն առանձնապես կարևոր մանրամասներ չեն հաղորդում այս կապակցությամբ, մեծամա-

---

[42] **Ուխտանէս եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց. «Մատենագիրք Հայոց», հ. ԺԵ, Ժ դար. Երեւան, 2011, էջ 518: Թերևս միայն Մ. Օրմանյանն է, որ ուշադրություն է դարձրել Ուխտանեսի այս հաղորդմանը, սակայն նշելով, որ դա մարզպանություն չէր, այլ բացառիկ իշխանություն՝ տրված նրան կարգավորելու համար կրոնական գործերը (**Օրմանեան Մ.**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, Էջմիածին, 2001, յուսնակ 708):

[43] **Ուխտանէս եպիսկոպոս**, էջ 548:

[44] Տե՛ս **Աբգարյան Գ.**, «Սեբեոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 19:

[45] Խ. Թորոսյանը, կատարելով բանասիրական հետազոտության, առաջարկել է, Ուխտանեսի երկում «Եւ Սմբատն՝ զորմէ ասացաք թէ՝ մարզպան էր Հայոց» հատվածը հետագա հրատարակություններում սրբագրել հետևյալ կերպ. «Եւ Սմբատն, զորմէ ասացաք թէ մարզպան էր Վրկանայ» (տե՛ս **Թորոսյան Խ.**, Սեբեոս պատմիչը և նրա երկը, «Բանբեր Մատենադարանի», 1969, թիվ 9, էջ 81–82 ծնթ. 42):

[46] Տե՛ս **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, էջ 145:

[47] Տե՛ս նույն տեղում, էջ 23–24:

[48] Տե՛ս **Մխիթար Անեցի**, Մատեան աշխարհաւէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ.Գ. Մարգարյանի, Երևան, 1983, էջ 91:

[49] Տե՛ս Հայոց պատմություն, հ. II, էջ 237–246:

սամբ կրկնելով կամ ձևափոխված ներկայացնելով նույն միտքը[50]:

Համաձայն Սեբեոսի՝ Սմբատ Բագրատունին Վրկանի մարզպանի պաշտոնը վարեց ութ տարի, որից հետո մեծարանքով կանչվեց արքունիք, ապա Խոսրովի կառավարման 18-րդ տարում ուղարկվեց Հայաստան, հավանաբար կարգավորելու կաթողիկոսի ընտրության հարցը[51]: Սմբատի ղեկավարությամբ Խոսրով Փարվեզի կառավարման 17-րդ տարում՝ 607/608 թ. կայացած Դվինի ժողովում, կաթողիկոս է ընտրվում Աբրահամ Աղբաթանեցին[52], որով Սմբատ Բագրատունու մարզպանության 8 տարիները պետք է թվագրել սկսած 599/600 թ.:

Կարելի էր նաև մարզպանության տարիները զետեղել 596–599 թթ. միջակայքում, սակայն Սեբեոսը, կապված պարսկա-բյուզանդական պատերազմի հետ հիշատակել է այն մարզպան-զորավարներին, ովքեր մինչև պարսից Որմիզդ արքայի կառավարման ավարտն արշավել էին Հայաստան: Դրանցից վերջինը Հրատրին Դատան մարզպանն էր, որի ժամանակ էլ մահանում է Որմիզդ արքան ու թագավորում է նրա որդին՝ Խոսրով Փարվեզը: Այնուհետև, պատմիչի հաղորդմամբ եկան պարսիկ սահմանակալներ՝ մինչև Մորիկ և Խոսրով թագավորների միջև առկա խաղաղության ավարտը, դրանք էին Վնդատականը, Նիխորականը, Մերակբուտը, Յազդենը, Բուտմահն ու Հոյիմանը[53]:

[50] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 50, Վարդան վարդապետ, էջ 59–60, **Ստեփաննոսի Սիւնեաց** եպիսկոպոսի պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 72:

[51] Տե՛ս **Սեբեոս**, էջ 100:

[52] Տե՛ս **Սմբատ Բագրատունի**, Ձեռնարկ՝ զոր խնդրեաց Սմբատ Վրկան մարզպան, ցայն եպիսկոպուս նս, որ դարձեալ ժողովեցան նորին հրամանաւ ի Դուին՝ կարգել կաթուղիկոս Հայոց, յետ մահուանն Մովսէսի. Եւ զայս ձեռնարկ եւ նոցա. «Մատենագիրք Հայոց», հ. Դ, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 342:

[53] Տե՛ս **Սեբեոս**, էջ 71, 105: Տե՛ս նաև **Դանիելյան Է.**, նշվ. աշխ., էջ 27:

Մորիկի և Խոսրովի միջև հաշտությունը կնքվել էր 591 թ., որը, անխախտ էր մնացել մինչև բյուզանդական կայսեր սպանությունը՝ 602 թ.: Եթե Սեբեոսի երկի սկզբնական բնագրում եղել է Սմբատի՝ Հայոց մարզպանի մասին հիշատակումը, ապա առավել քան անհասկանալի է դառնում պատմիչի՝ վերոնշյալ սահմանակալների մասին վկայությունը: Փաստացի սահմանակալ-մարզպանների Հայաստան արշավելն առավելապես խոսում է այն մասին, որ այդ ժամանակ երկրում մարզպան չկար, քանի որ մարզպանը տեղում պարսից ազդեցության և նրա վարչակարգի խորհրդանիշն էր: Սմբատ Բագրատունին, եթե իսկապես լիներ Հայոց մարզպան՝ պարսից վարչակարգի ներկայացուցիչ, ապա սահմանակալ-մարզպանների տարածաշրջան գալը կլիներ անհիմն:

Պատմագիտության մեջ առավել ընդունված է Սմբատ Բագրատունու՝ Վրկանի մարզպան լինելու տարբերակը (599/600–607 թթ.)[54], սակայն որոշ հետազոտողներ, հիմնվելով Ասողիկի հաղորդման վրա, ենթադրել են, որ նա եղել է Հայոց մարզպան (591/593–600/601 թթ.)[55]:

Վարկածներից մեկի համաձայն Սմբատը կարգվել է Հայոց մարզպան (տերանց զինուոր) 607–608 թթ., երբ Խոսրով արքա-

[54] Տե՛ս **Ակինեան Ն.**, Կիւրիոն կաթողիկոս վրաց, Վիեննա, 1910, էջ 157–164, **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Ա, այուրեակ 681–682, **Ղազարյան Վ.**, Հայ Առաքելական եկեղեցին Միջին Ասիայում Ե–ԺԵ դարերում, Երևան, 2008, էջ 47, **Pourshariati P.**, Decline and fall of the Sasanian empire. The sasanian-parthian confederacy and the arab conquest of Iran, London-New York, 2008, p. 136–140, **McDonough S.**, The "Warrior of the Lords": Smbat Bagratuni at the Center and Periphery of Late Sasanian Iran, "Iranian Studies", vol. 49, № 2, 2016, p. 233–245.

[55] Տե՛ս **Իսկանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 394, **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայաստանը VI–VIII դարերում (արաբական նվաճումներին նախորդող և տիրապետության հաստատման առաջին շրջանում), Երևան, 1996, էջ 15, **Վարդանյան Վ.**, Հայոց պետականությունը Արշակունյաց թագավորության անկումից հետո (V դ. կես – 630-ական թվականներ), «Պատմաբանասիրական հանդես», 2014, թիվ 2, էջ 12:

յի կողմից ուղարկվել էր Հայաստան՝ տեր դառնալու իր երկրին[56]: Սեբեոսը, սակայն հաղորդում է, որ Սմբատը Խոսրով արքայից թույլտվություն է հարցնում վերաշինելու Դվինի Սբ. Գրիգոր եկեղեցին (607 թ.), որից հետո պարսիկ մարզպանն ու բերդակալը, ամբաստանագիր են գրում Խոսրով արքային[57]: Այսինքն, այդ շրջանում ևս կար պարսիկ մարզպան, որը բացառում է այս տարբերակը :

Այս առումով աղբյուրագիտական տվյալների սղությունը մեզ բերում է մեկ տրամաբանական եզրակացություն, որ Սմբատ Բագրատունին լինելով պարսից արքայի մտերիմ անձնավորություն անկասկած մեծ հեղինակություն էր վայելում թե՛ Իրանում և թե՛ Հայաստանում: Դրա ապացույցը ոչ միայն Խոսրով Փարվեզի տերության մեջ Սմբատի՝ երրորդ նախարար լինելն էր, այլև նրա համաձայնությամբ Հայաստան գալը և Դվինում կաթողիկոսի ընտրություն կազմակերպելն էր: Այս առումով ոչ պաշտոնական, սակայն Սմբատ Բագրատունին կարող էր պատմիչների կողմից դիտվել Հայոց մարզպան, ինչպես Ուխտանեսն է նրան բնորոշում՝ «եւ ամենագով մարզպանն Սմբատ, որ զի թէպէտ եւ թագաւոր չէր աշխարհիս Հայոց, այլ նա լնոյր չէր զպակասութիւն թերութեան թագաւորի հագաբարձութեամբն իւրոյ...»[58]: Անկասկած Սմբատ Բագրատունու օրոք Հայկական մարզպանության կշիռը բարձրացել էր և պատահական չէ, որ նրա որդին դարձել էր երկրի մարզպան ու նրա քաղաքական ուղեգծի շարունակողը:

---

[56] Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունիներ (պատմա-տոհմաբանական հանրագիտարան), Երևան, 1997, էջ 15, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, էջ 176, ծան. 5:

[57] Տե՛ս **Սեբեոս**, էջ 100: **Դանիելյան Է.**, նշվ. աշխ., էջ 27:

[58] **Ուխտանէս եպիսկոպոս**, էջ 547:

Հայ պատմիչներից Հովհան Մամիկոնյանը հաղորդում է. «Արդ՝ մինչդեռ գայր ի Յունաց Խոսրով, առեալ զՄուշեղ՝ զտէրն Մշոյ եւ Խութայ, Տարաւնոյ իշխանն եւ Սասնոյ, հրամանաւն Մաւրկայ տարեալ ի Դուին եւ արար մարզպան»[59]: Նույն պատմիչի վկայությամբ Մուշեղը տեսնելով պարսից Խոսրով արքայի և Մորիկ կայսեր դավադրական գործողություններն իր հանդեպ «թողեալ զզաւրսն ի Դուին՝ ի բաց եկաց ի մարզպանութենէն: Եւ առեալ զզաւրս իւր, որ ի Մամիկոնեան տանէն էին, եկն ի գաւառ իւր»[60]:

Արաբ պատմիչ ալ-Դինավարին Վահրամ Չուբինի հիշատակության կապակցությամբ Մուշեղ Մամիկոնյանին համարում է մեծ մարզպան[61]: Խոսքն այստեղ 590-ական թթ. մասին է, երբ Խոսրով Փարվեզը Վահրամ Չուբինի դեմ պայքարում էր Սասանյան տերությունում իշխանության հասնելու համար:

Սեբեոսը պատմելով Վահրամ Չուբինի հրովարտակի մասին, ուղղված Մուշեղ Մամիկոնյանին և հայ նախարարներին, չի հիշատակում Մամիկոնյան իշխանին, որպես Հայոց մարզպան և հետագա շարադրանքում էլ մինչև Մուշեղի կայսեր պալատ կանչվելը և այնտեղ պահվելը նրա մարզպանի կարգավիճակը չի հիշատակվում[62]: Սմբատ Բագրատունու առնչությամբ մենք տեսանք, որ այդ ժամանակամիջոցում մարզպան՝ այն էլ հայ, չէր կարող նշանակվել:

---

[59] **Յովհան Մամիկոնեան**, Պատմութիւն Տարաւնոյ, «Մատենագիրք Հայոց», հ. Ե, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1053:

[60] Նույն տեղում, էջ 1055:

[61] Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 16, Արաբական աղբյուրներ Գ, արաբ մատենագիրներ ԺԹ–Ժ դարեր, ներածությունը և բնագրից թարգմանությունը՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 211:

[62] Տե՛ս **Սեբեոս**, էջ 77–84:

Արժանահավատ համարելով Սեբեոսի պարսիկ սահմանակալ-մարզպանների ցանկը, բայց միևնույն ժամանակ հաշվի առնելով Հովհան Մամիկոնյանի և Ասողիկի հաղորդումները Մ. Օրմանյանը կարծել է, որ Մուշեղ Մամիկոնյանը կարգվել էր ոչ թե Հայոց մարզպան, այլ՝ հազարապետ[63]: Հ. Աճառյանն իրավացիորեն նկատել է, որ Խոսրով Փարվեզը Մուշեղին այդ ժամանակ մարզպան նշանակելու ո՛չ իրավունք և ոչ էլ կարողություն ուներ[64]: Ուստի միանգամայն համաձայն ենք Է. Խուրշուդյանի այն դիտարկմանը, որ Մուշեղ Մամիկոնյանի՝ Հայոց մարզպան նշանակվելու փաստը չի համապատասխանում իրականությանը: Թե՛ Սմբատ Բագրատունին, թե՛ Մուշեղ Մամիկոնյանը Սասանյան արքայի մերձավորները լինելով հայտնի էին և՛ Իրանում և՛ Հայաստանում իրենց ակտիվ հասարակական-քաղաքական գործունեության շնորհիվ, ինչի հետևանքով էլ շատ պատմիչներ նրանց վերագրել են Հայոց մարզպանի պաշտոնը[65]:

Պարսկաբյուզանդական պատերազմի վերսկսումով 602–628 թթ.[66] տարածաշրջան էին եկել համաձայն Սեբեոսի՝ *Աշտատ Հեզգայար, Շահեն պատգոսական, Շահրայենպետ, Պարսեանպետ Պարշընազդատ, Նամդար Վշնասպ, Շահրապղական* և *Ռոճ Վեհան* զորավարները[67]: Դժվար է ասել նրանք իսկապես Հայոց մարզպաններ էին, թե պարզապես պատերազմական շրջանում պարսից զորավարներ, որոնք գտնվելով Հայոց մարզպանությունում իրականացնում էին պատժիչ գործողություններ ընդդեմ Բյուզանդիայի: Պարսկաբյուզանդական քսանվեցամյա պատերազմի ավարտից հետո՝ 628 թ. Պարսկաստանում թագավորեց Կավադ II Շերոյեն (628 թ.), որն էլ համաձայն Սեբեոսի «...տայ նմա (Վարազտիրոց Բագրատունուն - Հ.Խ.) զիշխանութիւն տանուտերութեանն. առնէ զնա մարզպան և արձակէ ի Հայս...»[68]: Հայոց մարզպան Վարազտիրոց Բագրատունու կառավարումը նշանակում էր Մարզպանական Հայաստանի ինքնավար կարգավիճակի առկայություն, որը սակայն երկար չի տևում: Սեբեոսը հաղորդում է, որ Ատրպատականի իշխան Խոռոխ Որմիզդը, նրա որդին՝ Ռոստոմը, ինչպես նաև Հայոց իշխան Մժեժ Գնունին թշնամական հարաբերությունների մեջ էին Հայոց մարզպանի հետ: Իմանալով, որ իրեն պատրաստվում են կալանավորել Վարազտիրոց Բագրատունին «առեալ զկին իւր և զորդիս՝ փախեաւ ի գիշերի, և ճանապարհ կալեալ գնաց ի Տարոն»[69]: Մասնագիտական գրականության մեջ մարզպանի դեպի Տարոն հեռանալը թվագրվում է 633 թ.[70], որով էլ նրա մարզպանության տարիները թվագրվում են մոտ 628–633 թթ.[71]:

Ինչ վերաբերում է Թեոդորոս Ռշտունուն, ապա Վարազտիրոց Բագրատունուց հետո նա կարող էր համարվել մարզպան կամ ունենալ մարզպանական լիազորություններ, բայց երբ այլևս չկար Սասանյան Պարսկաստանը ավելորդ էր այդ պաշ-

---

[63] Տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Ա, սյունակ 678:

[64] Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 459:

[65] Տե՛ս **Хуршудян Э.**, Армения и сасанидский Иран, էջ 95:

[66] Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայաստանը VI_VIII դարերում, էջ 16:

[67] Տե՛ս **Սեբեոս**, էջ 105, 110–113:

[68] Նույն տեղում, էջ 128–129: Տե՛ս նաև Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 403:

[69] **Սեբեոս**, էջ 132:

[70] Տե՛ս **Իսկանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 440, **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայաստանը VI–VIII դարերում, էջ 18:

[71] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 2, էջ 624, **Դանիելյան Է.**, նշվ. աշխ., էջ 144, **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Դ., էջ 77:

տոնի գոյությունը և կիրառումը, և դա է պատճառը, որ Ռշտունյաց իշխանը վերցնում է Բյուզանդիային անցած հայկական տիրույթներում (Տանուտիրական գնդի երկիր) քաղաքական կիրառություն ունեցող *«Հայոց իշխան»* տիտղոսը[72]:

Այսպիսով, թեև Հայաստանում հաստատվել էր մարզպանական վարչակարգ ,այդուհանդերձ, Սասանյաններին չհաջողվեց ամբողջովին վերացնել հայ ժողովրդի անկախությունը և երկիրը վերածել պարսկական սովորական նահանգի: Տարածքային առումով Մարզպանական Հայաստանը մեծապես զիջում էր Արշակունյաց թագավորությանն, այնուամենայնիվ շարունակում էր մնալ խոշոր վարչական միավոր: Երկրում պահպանվեցին հողատեր իշխանների ժառանգական իրավունքները, երկրի կառավարման մեջ նրանց դերակատարումը, որի կողքին՝ նաև Հայոց եկեղեցին, որպես ինքնուրույն մի կառույց: Մարզպանության շուրջ երկուհարյուրամյա գոյության ընթացքում ընդամենը հինգ ազգությամբ հայ մարզպանի նշանակումն արդեն ինքնին ցույց է տալիս Սասանյանների անհաշտ քաղաքականությունը:

Այսպիսով ունենում ենք մեզ հայտնի (ավելի ճիշտ այն մարզպանների, որոնք իսկապես մարզպան էին և որոնց կառավարման թվականները հաջողվել է որոշել) Հայոց մարզպանների հետևյալ հաջորդականությունը.

Վեհմիհրշապուհ 428–441 թթ.

[72] Ա. Շահինյանը «Իշխան Հայոց» տիտղոսը համարում է առեղծված 631 թ. (**Շահինեան Ա.**. Է. դարի Հայոց իշխանութեան ինքնիշխանացումը. «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 2013, թիվ 33, էջ 165–176): Ա. Հակոբյանի կարծիքով հավանաբար 615/616 թ. «Պաշտից ժողովի» համատեքստում Այսրկովկասյան երեք երկրներում ձևավորվեցին իշխանների հաստատությունները (**Յակոբեան Ա.**. Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Ադուանքում և Հայոց Արևելից կողմանց՝ում անտիկից մինչև ԺԳ դար (Պատմա-աղբիւրագիտական քննութիւն), Երևան, 2020, էջ 129):

Վասակ Սյունի 441–451 թթ.
Ատրորմիզդ 451–470-ական թվականներ
Ատրվշնասպ ≈480–482 թթ.
Սահակ Բագրատունի 482 թ. – 483 թ. ամառ
Շապուհ Միհրանյան 484 թ. գարուն-ամառ
Անդեկան 485 թ. գարուն-աշուն
Վահան Մամիկոնյան 485 թ. աշուն – 505 թ.
Վարդ Մամիկոնյան 506 թ. վերջ – 509/510 թ.
Նիխորական ≈ 546–549 թթ.
Նախապետ ≈ 549–552 թթ.
Քնարիկ ≈ 552–554/555 թթ.
Սուրեն Ճիհր Վշնասպ ≈568/569–572 թթ.
Վարազտիրոց Բագրատունի 628–633 թթ.

Генрик А. Хачатрян, *Институт истории НАН РА,* **К вопросу о правлении марзпанов Армении (вторая половина VI в. – 30-ые годы VII в.).**

Данная статья включает в себя правления марзпанов Армении от второй половины VI в. до падения Сасанидского Ирана. В основном с первой половины VI в. до 628 г. в Марзпанской Армении правили марзпаны персы. Сообщения источников что Давид Сахаруни, Смбат Багратуни и Мушег Мамиконян являлись марзпанами Армении не соответствует действительности. Последние двое будучи известными фигурами в Византийской империи и Сасанидском Иране сыграли важную роль в деле укрепления самоуправления страны, по этому им был приписан почетный титул марзпана Армении.

Henrik A. Khachatryan, *Institute of History of the NAS RA,* **On the question of ruling of the Armenian Marzpans (second half of the 6th c. – 30s of the 7th c.).**

This article includes the periods of the rule of the marzpans of Armenia from the second half of the 6th century before the fall of Sassanian Iran. Basically, from the first half of the 6th century until 628, the Persians ruled in the Armenian marzpanate. The reports of sources that David Saharuni, Smbat Bagratuni and Mushegh Mamikonyan were the marzpans of Armenia, does not correspond to reality. The latter two, being well-known figures in the Byzantine Empire and Sassanian Iran, played an important role in strengthening the self-governance of the country, that is the reason the honorary title of marzipan of Armenia was assigned to them.

ՀԱՍՄԻԿ Հ. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Ամենայն Հայոց կաթողիկոս, հոգևոր-վարչական, դավանանք, կոնդակ, կաթոլիկություն, եկեղեցի, Ղուկաս Կարնեցի, Էջմիածին, նվիրակ, հայոց թեմ, Արևմտյան Հայաստան:

1780 թ. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գահին զբաղեցնում է Ղուկաս Ա Կարնեցին (1780–1799 թթ.):

Հոգևոր-վարչական համակարգի կայացման ճանապարհին Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործունեության կարևոր մաս է դառնում Հայ Առաքելական հավատին սպառնացող երևույթների՝ նախևառաջ հայկական դավանանքից շեղվելու դեմ պայքարը: Ղուկաս Կարնեցին, ինչպես հայոց բոլոր կաթողիկոսները, անհաշտ ու վճռական պայքար մղեց աղթարմաների՝ կաթոլիկություն ընդունած և տարբեր աղանդների հարող անձանց ու խմբերի նկատմամբ:

Կաթողիկոսի աննահանջ պայքարը հայոց դավանանքի պահպանման ճանապարհին բխում էր ոչ միայն հայոց եկեղեցու նվիրապետության միասնականության ամրապնդման անհրաժեշտությունից, այլև՝ հայոց պետականության բացակայության ու պարսկական տիրապետության պայմաններում երկրի ներ-

քին ու արտաքին թշնամիներին դիմագրավելու հրամայականից:

Հայ եկեղեցու միասնականությունը խաթարող, հասարակության մեջ երկփեղկվածություն առաջ բերող աղանդների ներկայացուցիչների թիվն օրեցօր շատանում էր հատկապես Արևմտյան Հայաստանում[1]: Եվրոպայից ներթափանցող կաթոլիկությանը հարողները, շեղվելով հայկական եկեղեցու կարգուկանոնից, ոչ միայն չէին ենթարկվում տեղի հոգևոր առաջնորդներին, այլև հրաժարվում էին վճարել Ս. Աթոռի հոգևոր արդյունքը, խանգարում էին Էջմիածնի ներկայացուցիչներին կատարել իրենց պարտականությունները, այդ թվում՝ հավաքել հոգևոր հասույթն ու հասցնել Էջմիածին:

Պայքարին միասնական ու ավելի կազմակերպված բնույթ տալու համար կաթողիկոսը համագործակցում էր տարբեր վայրերի հայ հոգևոր առաջնորդների, երևելիների, Էջմիածնից գործուղված գործակալների՝ նվիրակների[2] հետ: Վերջինների միջոցով նա վերահսկողության ներքո էր պահում հատկապես Կարինի, Կարսի և մյուս բնակավայրերի հայերի հոգևոր դավանանքի ուղղություններին, քանի որ աղանդներն այնտեղ պարարտ հող էին գտել[3]:

[1] Հավատը ուրացողներին այդ ժամանակահատվածում անվանել են «աղթարմա», «թոնդրակեցի», «կէսկէս», «արևորդի» (տե՛ս Գրիգորյան Վ., Նոր տեղեկություններ «Բանալի ճշմարտության» երկի հեղինակ Հովհաննես Երեցի մասին. «Բանբեր մատենադարանի», (այսուհետև՝ ԲՄ), 1968, թ. 5, էջ 338): Նշվածներից առավելն տարածված են եղել առաջին երկուսը (Հ.Ա.):

[2] Նվիրակ-թեմի կողմից գործուղված անձ, ով պետք է տվյալ վայրում հավաքեր հոգևոր հարկը, ժողովարարություն հանգանակություն կատարեր հոգևոր թեմի, զբաղվեր հոգևոր այլ հարցերով (Հ.Ա.):

[3] Հատկապես Արևմտյան Հայաստանում աղանդներին հարելն ուներ մի շարք պատճառներ: Բացի այն, որ ժողովուրդը երբեմն դժվարանում էր վճարել եկեղեցական տուրքը, նրանց ընդվզումը շատ հաճախ ուղղված էր եկեղեցական դոգմաների դեմ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ աղանդավորները առանձին

Կ. Պոլսի նվիրակ Մինաս վարդապետին Ղուկաս Կարնեցին տեղեկացնում է, որ Կաղզվանի 15 տուն իրենց քահանայով հարել են աղանդի: Նամակից տեղեկանում ենք, որ տեղի հայերը դավանափոխ եղածների վերաբերյալ բողոք էին հղել Ս. Աթոռ: Կարելի է ենթադրել, որ դավանափոխները փորձել են ներգործել տեղի բնակչության վրա՝ նրանց իրենց շարքերը ներքաշելու նպատակով կամ խոչընդոտներ են առաջացրել հայերի հոգևոր գործունեության ճանապարհին: Ղ. Կարնեցին Կարսի հոգևոր առաջնորդ Հովհաննես վարդապետին և տեղի հայ երևելի պարոն Գևորգին հանձնարարում է այդ խնդիրները կարգավորել, աղթարմաներին վերադարձնել ճիշտ հավատի, իսկ եթե իրենց կամքով դարձի չգան՝ պատժամիջոցներ գործադրել, տուգանքի ենթարկել և նրանց ուղարկել Ս. Աթոռ[4]:

Իրենց ըմբոստությամբ ու կազմակերպվածությամբ աչքի էին ընկնում հատկապես Բայազետի աղանդավորները, որոնց մասին կաթողիկոսը տեղեկանում էր տեղի հայ ամիրաների միջոցով[5]: Այնտեղի Էջմիածնի գործակալ Մկրտիչ վարդապետը նկարագրում է. «...ոչ հնազանդէին առաջնորդի և ոչ հոգևոր կարգաց և օրինաց եկեղեցւոյս Հայաստանեայց, և ոչ անսային քարոզի խրատուց և պատուիրանաց ուղղադաւան կարգաւորաց, և ոչ երկնչէին ի հոգևոր պատժոց»[6]:

խմբեր կազմած գնեք Լին բարձրացնում հայ գյուղացուն հարստահարողների՝ թուրքերի ու քրդերի դեմ. ինչը վկայում է. որ աղանդը երբեմն ծառայել է որպես արտաքին շղարշ (Հ.Ա.):

[4] Տե՛ս **Աղանեանց Գ.**, Դիվան հայոց պատմության. գր. Դ. Թիֆլիս. 1899. էջ 347–348, 461:

[5] Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (այսուհետև՝ ՄՄ). Հմ 4449, թ. 32ա:

[6] Դիվան հայոց պատմության. Ղուկաս Կարնեցի (1780–1785) (այսուհետև՝ Դիվան). աշխատասիրությամբ՝ **Վ. Գրիգորյանի**. հ. Ա. Երևան. 1984, էջ 326:

Կաթողիկոսն Ուչքիլիսայի վանքի (Բայազետի Ս. Հովհաննես վանք) հոգևոր առաջնորդ Մկրտիչ վարդապետի հետ համատեղ փորձում է վանքապատկան մի շարք գյուղերում պայքարել աղանդների դեմ[7]: Սակայն գործադրած միջոցներն էական արդյունք չեն տալիս: Այդ ամենի մասին վկայում են նաև կաթողիկոսի կողմից տեղի մահմեդական տիրողներին գրած նամակները[8]:

1786 թ. Դիադինի Մահմուդ բեկին գրած նամակում Կարնեցին խոսում է նաև տեղում տարածված աղանդների մասին[9]:

1783 թ. կաթողիկոսը հանդիմանական նամակ է հղում Բայազետի նվիրակ Կարապետ վարդապետին, որը աղթարմա մի երեցի[10] հոգևորականի զգեստ էր շնորհել: Հետագայում՝ 1791 թ. հունվարին, Բայազետի բնակիչ, ոմն Մանուկ Մրկոյանին Կարնեցու գրածոյից տեղեկանում ենք, որ հերձված երեցը տեղի թուրք փաշայի միջոցով ուղարկվել է Էջմիածին: Կարնեցին իր շնորհակալությունն է հայտնում փաշային: Նմանօրինակ վերաբերմունքով կաթողիկոսը նաև փորձում էր շահել փաշայի համակրանքը՝ դեպի տեղի հայ ազգաբնակչությունը[11]:

1784 թ. Մկրտիչ վարդապետին, Բայազետի երևելիներ Վահանին ու Սահակին Ղուկաս Կարնեցին դարձյալ հրահանգում է ամեն գնով պայքարել աղանդների դեմ[12]:

Հետաքրքրություն են ներկայացնում Ղուկաս Կարնեցու նամակները խնուսցի[13] Հովհաննես երեցի[14] մասին, որն առաջին

[7] Տե՛ս նույն տեղում:
[8] Տե՛ս նույն տեղում, էջ 142–143, 273–274, 326, հ. Բ, Երևան, 2003, էջ 132:
[9] Տե՛ս նույն տեղում, էջ 132:
[10] Երեց կամ երեցփոխ, ծխականների կողմից ընտրված եկեղեցու տնտեսությունը վարող անձ (Հ.Ա.):
[11] Տե՛ս Դիվան, հ. Ա, էջ 348, հտ. Բ, էջ 583:
[12] Տե՛ս նույն տեղում, հ. Ա, էջ 497:

անգամ կաթողիկոսի նամակներում հիշատակվում է 1789 թ. հուլիսի 13-ին: Երեցը հարել էր աղանդի և նպաստում էր դրա տարածմանը: Նամակներից եզրահանգում ենք, որ Խնուսում հերձվածները բավականին տարածված են եղել: Հովհաննեսը բերվում է Էջմիածին և բանտարկվում, սակայն կարողանում է փախչել, ինչից հետո միջոցառումներ են ձեռնարկվում՝ Խնուսում արմատախիլ անելու աղանդը:

Կարնեցու կողմից Խնուսի քահանաներին ու իշխաններին ուղղված 1792 թ. մայիսի նամակից տեղեկանում ենք, որ վերջինները կաթողիկոսին տեղեկացրել էին, որ երեցը զղջացել է և օրհնության գիր էին խնդրում նրա համար[15]: Կաթողիկոսը սակայն, օրհնագիր չի ուղարկում: Պատճառն այն էր, որ Հովհաննեսը կաթողիկոսի պահանջի համաձայն՝ երկրորդ անգամ չի ներկայանում Էջմիածին: Հետևաբար, Կարնեցին վստահ չէր կարող լինել նրա դարձի գալու հարցում:

Խնուսի հերձվածների պատմության ուսումնասիրությունից Վ. Գրիգորյանը պարզաբանել է, որ այնտեղի աղանդավորները, առանձին խմբեր կազմած, հարձակումներ էին գործում ոչ հայկական գյուղերի վրա: Այստեղից նա եզրահանգել է, որ այդ ընդվզումը միայն եկեղեցական կարգախոսերի դեմ չէր: Նրանք հանդես էին գալիս հայ բնակչության դեմ ուղղված օտարների ավերածությունների, ավարառությունների, կողոպուտի դեմ[16]:

[13] Խնուս (Խանուս, Խնիս, Խնուզ, Խնութ, Խնուսբերդ), պատմական հայկական շրջան (բերդաքաղաք, գյուղաքաղաք) Արևմտյան Հայաստանում, Էրզրումի նահանգի Էրզրումի գավառի Խնուսի գավառակում, վերջինի կենտրոնը: Հայտնի է որպես թոնդրակյան շարժման կենտրոն (Հ.Ա.):
[14] Հովհաննես երեցի մասին տե՛ս **Գրիգորյան Վ.**, Նոր տեղեկություններ «Բանալի հշմարտության» երկի հեղինակ Հովհաննես երեցի մասին, «Բանբեր մատենադարանի», 1968, թիվ 5, էջ 333–344:
[15] Տե՛ս Դիվան, հ. Բ, էջ 710–711:
[16] Տե՛ս Դիվան, հ. Բ, առաջաբան, էջ LXXXIII:

1781 թ. Կարինում կաթոլիկները տեղի էջմիածնի նվիրակ Ներսես վարդապետին խոչընդոտել էին տարածքի հոգևոր հասույթը հավաքելու գործում: Ղուկաս Կարնեցին տեղի հայ իշխաններին խնդրում է կանխել նմանօրինակ դեպքերը[17]: Նա 1782 թ. հունվարին Կարինի գործակալ Հայրապետի հետ խորհրդակցում է «Վասն ախթարմայից լրբենի համարձակութեանն»[18]:

Առկա են այլ վայրեր ուղղված կաթողիկոսի գրություններ ևս: Այսպես օրինակ, 1782 թ. հունվարին կաթողիկոսը Արդվինի[19] ժողովրդին պատվիրում է. «...յաղթարմայից հեռի կալ, ընդ որս և չառնել խնամութիւն...»[20]: Բերայի[21] բնակչությանն ուղղած օրինագիր կոնդակում Ղուկաս Կարնեցին պատվիրում է պայքարել աղթարմաների դեմ, զգուշանալ նրանցից, դավանել միմիայն առաքելական հավատք[22] և այլն:

Աղանդների դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնելու նպատակով Ղուկաս Կարնեցին մշակում է հատուկ կանոններ, որոնք զետեղվում են 1784 թ. օգոստոսի 26-ին Գյումուշխանայի հայերին ուղղած կոնդակի մեջ: Դրանում պահանջվում է հեռու մնալ և խուսափել աղանդավորների հետ շփվելուց, չբարեկամանալ և անգամ չամուսնանալ նրանց հետ. «...բաժան և անխառն մնալ ի չարափառ և ի մոլարաշաւիղ ախթարմայիցն: ...զդստերս ձեր մի տաջիք ուստերաց հերձուածողաց և զդստերս նոցա մի առնուցուք ուստերաց ձերոց ի կնութիւն: Նմանապէս և ոչ կնքահայրութեամբ և ոչ հոգևոր կամ մարմնաւոր բարեկամութեամբ ընդ նոսա...»[23]:

Աղանդների դեմ պայքարի ճանապարհին խոցելի էին հատկապես Հայաստանից դուրս գտնվող հայկական թեմերը, որոնք հեռու լինելով հայրենիքից, ավելի շատ էին ենթարկվում տարբեր դավանանքների ազդեցությունների: Թիֆլիսի երևելի Հովսեփ Նազարբեկյանին և այլուր հղված բազմաթիվ նամակներ պարունակում են կաթողիկոսի մտահոգություններն այլադավանություն ընդունած հայության վերաբերյալ[24]:

1791 թ. Կարնեցին Ախալցխայի[25] հայությանը կոչ է անում հաստատուն պահել հայկական հավատը[26]: Նմանատիպ կոնդակ է հղում նաև Արևմտյան Վրաստանի հայ բնակչությանը՝ հորդորելով. «...մնալի ի սուրբ հաւատս մեր հաստատուն, հեռի կալով ի յախթարմայից և այլն»[27]: Կաթողիկոսը փորձում է այլադավանության դեմ պայքարում համագործակցել Արևմտյան Վրաստանի Սոլոմոն արքայի և Մաքսիմե կաթողիկոսի հետ[28]:

Սահակ քահանային որպես առաջնորդ ուղարկելով Արևմտյան Վրաստան, կաթողիկոսը կոչ է անում այնտեղ ժողովել ճշմարտադավան եկեղեցականներ, ուսուցանել տեղի ժողովրդին «աստվածային բանիւք և պահել զնոսա ի ճշմարիտ հաւատս՝ ի յուղիղ դաւանութիւնս և ի մաքուր կրօնս Հայաստա-

[17] Նույն տեղում, հ. Ա, էջ 182–183:

[18] Տե՛ս նույն տեղում, էջ 286:

[19] Դավառական տիպի քաղաք Ճորոխ գետի ստորին հոսանքի ձախ ափին, հնում մտնում էր Մեծ Հայքի Տայոց աշխարհի Ճակք գավառի մեջ և համարվում էր վերջինիս կենտրոնը (Հ.Ա.):

[20] Տե՛ս Դիվան, հ. Ա, էջ 287:

[21] Կոստանդնուպոլսի թաղամասերից (Հ.Ա.):

[22] **Աղանեանց Գ.**, նշվ. աշխ., գր. Դ, էջ 329; **Օրմանեան Մ.**, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, հ. Բ, 1914, էջ 3232:

[23] Դիվան, հ. Ա էջ 454–456:

[24] **Աղանեանց Գ.**, նշվ. աշխ., գր. Դ, էջ 378:

[25] Վրաստանի տիրապետության տակ գտնվող պատմական Ջավախքի Ախալցխա քաղաքն ու շրջակա գյուղերն ինքնուրույն էջմիածնական թեմ էին (տե՛ս **Մելքոնյան Ա.**, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 100–101):

[26] Նույն տեղում, էջ 554–556:

[27] Դիվան, հ. Ա, էջ 150:

[28] Տե՛ս նույն տեղում:

նեայցս սրբոյ եկեղեցւոյ»[29]: Կաթողիկոսը հորդորում է սույն խրատները փոխանցել նաև իրենց զավակներին:

1783 թ. հունվարին Կարնեցին Բաղդադի հայ հոգևորականներին կոչ է անում Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին «...անխառն պահեսջիք ի խմորաց և ի յաղանդոց հերձուածողաց»[30]: 1791 թ. Բաղդադի հայ երևելիներին գրած նամակում նա խոսում է թիֆլիսցի Ղուկաս Առաքելյանի «վայրաբանութեան» մասին, որը Բաղդադում զբաղվել էր աղանդների տարածմամբ: Կարնեցին մեղադրում է տեղի հայերին՝ Ղուկասին հանդուրժելու և չպատժելու հարցում, մանավանդ, որ վերջինս գործել էր կաթողիկոսի անունից[31]:

Կաթողիկոսն անմիջապես արձագանքում է Խոյի հայ վաճառականների խնդրանքին՝ պատժելու աղանդներ սերմանող ու տարծող երկու անձի[32]:

Ղուկաս Կարնեցին հերձվածների դեմ պայքարի հարցեր է քննարկում Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանի հետ (1873–1801 թթ.), որն իր թեմում ամենայն հետևողականությամբ պայքարում էր աղանդների դեմ[33]:

Ղուկաս Կարնեցին ընդառաջեց ասորիների նորընծա կաթողիկոս Մատթեոսին, որի գահակալմանը խոչընդոտում էին ասորի աղթարմա հոգևորականները: Կարնեցին նամակներով դիմում է Կ. Պոլսի հայ իշխաններին ու պատրիարք Զաքարիային (Զաքարիա Փոքուզյան Կազդվանեցի (1773–1799 թթ.), հորդորում օգնել Մատթեոսին: Աղանդների դեմ պայքարում միջոցների կարիք ունեցող Մատթեոսը հայ կաթողիկոսից ժողովարարության՝ դրամական հանգանակության կոնդակ է խնդրում: Կաթողիկոսն այն գրում է՝ դրա մեջ խոսելով եղբայրական ասորի ժողովրդի եկեղեցու գլխին կախված վտանգի, դրա բացասական հետևանքների ու դրանցից խուսափելու մասին[34]: Նա հայ բնակչությանը կոչ է անում «...յօժար սրտիւք և զուարթ երեսօք շնորհեսջիք դմա (կաթողիկոս Մատթեոսին – Հ.Ա.) զկամաւոր տուրս ողորմութեան...»[35]:

Կաթողիկոսի գրությունների մի պատկառելի մասը տարբեր վայրերում այլադավանության դեմ պայքարող կամ առաքելական հավատին վերադարձած մարդկանց ուղղված շնորհակալական օրհնագրեր են՝ ինչպես օրինակ Թիֆլիսի մելիք Ավետիքին Գորի քաղաքի երևելի Ստեփան Մանուչարյանին և այլոց[36]:

Կաթողիկոսը շնորհակալական ու օրհնության գրեր է ուղարկում Վրաստանի հայ բնակիչներ Հովսեփ Նազարբեկյանին, Ղազար քահանային՝ աղանդների դեմ պայքարելու համար[37]: Քանիցս շնորհակալագիր է հղում վրացական Հերակլ արքային (1744–1798 թթ.)՝ աղթարմաների դեմ պայքարի համար, ինչը վկայում է, որ նա տեղի հայերին դարձի բերելու համար դիմել էր արքայի օգնությանը[38]: 1782 թ. Վրաստան գրած նամակները վկայում են, որ աղանդների դեմ պայքարը բավականին արդյունավետ է եղել[39]:

---

[29] Նույն տեղում, էջ 321:
[30] **Աղանեանց Գ.**, նշվ. աշխ., գլ. Դ, էջ 486:
[31] ՄՄ, ձեռ. հ^{ի} 4483, թ. 1732ա-1732բ, Դիվան, հ. Բ, էջ 666, 686:
[32] Տե՛ս Դիվան, հ. Ա, էջ 370:
[33] ՄՄ, հ^{ի} 2699, թ. 26ա:

[34] Տե՛ս Դիվան, հ. Բ, առաջաբան, էջ XCI- XCIII, էջ 296–297:
[35] **Գրիգորյան Վ.**, Ղուկաս Կարնեցու նամակագրությունը ասորիների կաթողիկոս Մատթեոսի հետ, «Պատմաբանասիրական հանդես», 1988, թ. 4, էջ 185:
[36] Տե՛ս **Աղանեանց Գ.**, նշվ. աշխ., գլ. Դ, էջ 314, 335, 376:
[37] Տե՛ս Դիվան, հ. Ա, էջ 297:
[38] Տե՛ս **Աղանեանց Գ.**, նշվ. աշխ., գլ. Դ, էջ 381, 384, Դիվան, հ. Ա, էջ 295, 297, **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., էջ 3233:
[39] Տե՛ս Դիվան, հ. Ա, էջ 297, 298:

Նմանօրինակ նամակներ կան ուղղված Արևմտյան Հայաստան[40]: 1791 թ. մարտին Կարինի քահանաներին և իշխաններին Կարնեցին շնորհակալություն է հայտնում ուղղամիտ կենցաղավարության և շեղ ճանապարհից ուղղվելու համար[41]: Այնտեղի քահանաները կաթողիկոսին խնդրել էին Դերջանի, Քղիի և Բասենի եպիսկոպոսներին արգելել ձեռնադրումներ անել, «շատաշրջիկ» քահանաներին սաստել: Կաթողիկոսը նպատակահարմար չի գտնում միանգամից մեծ թվով հոգևոր գործիչների գործունեությունը սահմանափակել, հաշվի առնելով, որ քահանաների թիվը հայկական բնակավայրերում գնալով պակասում էր: Բացի այդ հիշեցնում է, որ նշված բնակավայրերի մի շարք հոգևոր գործիչներ նախկին՝ Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի (1763–1780 թթ.) կողմից նզովման էին ենթարկվել և չի ցանկանում բնակավայրերին նոր անեծք ավելացնել, այլ՝ օրինազանց հոգևորականների վերաբերյալ հստակ փաստեր է պահանջում: Կաթողիկոսը Կարինի հոգևորականներին ու իշխաններին կոչում է միասնական լինել և հոգևորականների անօրինական քայլերի վերաբերյալ իրեն տեղյակ պահել[42]:

Ղ. Կարնեցին իր հովանավորության տակ էր առնում աղանդներից առաքելական դավանանքի գիրկը դարձած անձանց, տեղի հոգևորականներին հրահանգում է նրանց հետ հաշտ լինել՝հավանաբար մտավախություն ունենալով, որ եկեղեցու սպասավորները անվստահությամբ կվերաբերվեն նրանց[43]:

Հայրապետի նամակներն աղոտ տեղեկություններ են հաղորդում նաև Արևմտյան Հայաստանում հայերի կողմից մահմեդականացվելու դեպքերի վերաբերյալ, ինչը կաթողիկոսի մտահոգության առարկան էր: Մահմեդականություն ընդունած հայերի ձգտումը՝ վերադառնալ հայրենի հավատի գիրկը, ինքնին վկայում է նրանց կողմից այդ քայլին հարկադրված կամ ստիպողաբար դիմելու մասին: Նամակներից մեկում կաթողիկոսը Կարինի երևելիներից Հայրապետին հանձնարարում է աջակցել Կարինի բնակիչ ոմն Եփրիկյանցին, որը մահմեդականություն ընդունելուց հետո կրկին քրիստոնյա էր դարձել և, վախենալով Կարինի թուրքերի վրեժխնդրությունից, փախել էր Թիֆլիս[44]:

1787 թ. մարտի 21-ին կաթողիկոսը Երևան քաղաքի բնակիչների անունով ժողովարարության թուղթ է տալիս պարտքերի տակ ընկած ճահկեցի[45] Մելիքին, որի նախնիները աղանդավորներ են եղել, իսկ ինքը դարձել էր Ս. եկեղեցու գիրկը: Այլազգիները պարտքի դիմաց պահանջում էին մելիքի դստերը[46]:

Հայկական դավանանքից հեռացողները արժանացել են նաև Ղուկաս Կարնեցու պատժին: Այսպես օրինակ, Էջմիածին ժամանած կաթոլիկ ոմն Սարգիս Թեքիրատցի (Թեքիրտաղցի, Բասենցի) վարդապետ, որը նպատակ ուներ այստեղ կաթոլիկություն տարածել, ծեծվում և երկարաժամկետ բանտարկության է ենթարկվում[47]: 1791 թ. Ախալցխայի բնակիչ Սահակ քահանայի կողմից պատարագի ընթացքում Հռոմի պապի անունը հիշատակվելուց հետո այնտեղ կրոնական հուզումներ են սկիզբ առնում: Կաթողիկոսն անհապաղ միջոցներ է ձեռնարկում՝ կանխելու դրանց հետագա տարածումը: Տեղի գործիչների միջոցով

[40] Տե՛ս **Աղանեանց Գ.**, նշվ. աշխ., գր. Դ, էջ 327:
[41] Տե՛ս Դիվան, հ. Բ, էջ 594:
[42] Տե՛ս նույն տեղում, էջ 596:
[43] Տե՛ս նույն տեղում, հ. Ա, էջ 445:

[44] Տե՛ս նույն տեղում, էջ 320:
[45] Ճահուկ-գավառ Մեծ Հայքի նահանգում: ԺԶ–ԺԸ դդ. Նախիջևանի խանության կազմում էր (Հ.Ա.):
[46] Տե՛ս Դիվան, հ. Բ, էջ 220–221:
[47] Տե՛ս **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., էջ 3230:

Սահակն ուղարկվում է Էջմիածին և կարգալույծ արվում[48]: Սահակի արարքն աններելի էր, քանի որ նա հայկական եկեղեցու ներսում արտասանել էր օտար հայրապետի անունը և նախատել հայ կաթողիկոսին, ինչը համարվում էր կանոնազանցություն:

Այսպիսով, Ղուկաս Կարնեցին իր հովվության ընթացքում անդուլ պայքար մղեց հայոց եկեղեցու դավանանքի պահպանման համար: Պայքարի անհրաժեշտությունը բխում էր ոչ միայն Հայաստանում և դրսի թեմերում հայոց եկեղեցու խորհուրդն ամրապնդելու հրամայականից, այլև՝ հայ և օտարազգի տարբեր հոգևոր և աշխարհական գործիչների կողմից հայկական եկեղեցու նկատմամբ գործադրված կամայականություններն ու ապօրինությունները կանխելու, դրսի թեմերում հայերի ինքնությունը պահպանելու անհրաժեշտությունից:

Асмик О. Амирджанян, *Институт истории НАН РА, к.и.н.*, **Вопросы вероотступничества в деятельности Католикоса всех армян Гукаса Карнеци.**

Статья посвящена изучению экуменических взглядов видного религиозного деятеля, Католикоса всех армян - Гукаса Карнеци (1780-1799гг.). Во второй половине XVIII века перед армянской церковью вновь стояла задача противостояния католицизму и разным сектантным движениям. Последние иногда выражались в виде бунтов.

Гукас Карнеци проводил неуступчивую борьбу с силами расшатывающими основы церкви. Он приложил все усилия

[48] Տե՛ս **Աղանեանց Գ.**, նշվ. աշխ., գր. Դ, էջ 555, **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., էջ 3231:

для борьбы с католическими догмами и с их проявлениями. В концепции вероотступничества Гукас Карнеци выделяет роль традиционной веры, как ценность, и его роль в жизни местного армянского населения. Особое внимание он обращает на сохранение догматических прав армянской церкви, на правомочиях армянской епархии. С его деятельностью армяне сохранили армянскую веру, его усилиями были установлены права и обязанности духовной власти армянской диаспоры, урегулированы духовные дела епархии.

Hasmik H. Amirjanyan, *Institute of History of the NAS RA,* **Candidate of Sciences in History, Apostasy issues in the activities of Catholicos of All Armenians Ghukas Karnetzi.**

The article is devoted to the study of the ecumenical views of a prominent religious figure, Catholicos of All Armenians – Ghukas Karnetzi (1780–1799). In the second half of the 18th century, the Armenian Church was again faced with the task of opposing Catholicism and various sectarian movements. The latter were sometimes manifested in the form of riots.

Ghukas Karnetzi waged an unyielding struggle against the forces that were shaking the foundations of the church. He made every effort to combat Catholic dogmas and their manifestations. In the concept of apostasy, Ghukas Karnetzi emphasizes the role of traditional faith as a value and its role in the life of the local Armenian population. He pays special attention to the preservation of the dogmatic rights of the Armenian Church, to the powers of the Armenian diocese. Through his activities, the Armenians preserved the Armenian faith, through his efforts the rights and

obligations of the spiritual authority of the Armenian diaspora were established, and the spiritual affairs of the diocese were settled.

ԼԻԼԻԹ Ս. ՔՈՍՅԱՆ
ԳԱԱ պատմութեան ինստիտուտ

ԿՈՎԿԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՅՈՒՅԱԲԵՐԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ 1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Բանալի բառեր՝ Կովկասի կառավարչապետություն, գաղթականներ, որբանոց, հանգանակություն, կարգադրիչ մասնաժողով, Գրիգոր Ջանշյան, Բաթում, Թիֆլիս, Երևան, Բաքու:

Համիդյան կառավարության հայահալած ու հայաջինջ քաղաքականության արդյունքում մեծ թվով արևմտահայեր իրենց կյանքը փրկելու համար բռնեցին գաղթի ճանապարհը: Մերկ ու սովալլուկ արևմտահայերն իրենց փրկության առաջին հայացքն ուղղեցին դեպի Կովկասի կառավարչապետություն: Դարեր շարունակ օսմանյան լուծը կրող արևմտահայերը Ռուսաստանին համարում էին իրենց փրկության հուսալի հանգրվանը: Ռուսական հող ոտք դնելով՝ քրդերից ու թուրքերից մազապուրծ փախստականները, համարում էին, որ փրկվեցին դժոխքից և մտան արքայություն[1]: Ցարական կառավարությունը, սակայն որդեգրել էր զգուշավոր քաղաքականություն: Ռուսական կառավարությանն անահանգստացնում էին հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժումներն: Ռուսաստանի սահմանն անցած

[1] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1896, թիվ 152, էջ 3:

արևմտահայ փախստականներին իշխանությունները համարում էին հեղափոխականներ՝ վախենալով, որ կովկասահայության և ընդհանրապես կառավարչապետության շրջանում ևս կտարածվի ազատագրական շարժումը: Արտաքին քաղաքականությունում ռուս-թուրքական հետագա մերձեցման համար Հայկական հարցը բարդություններ էր առաջացնում, իսկ ներքին քաղաքականության առումով՝ ծավալվող հայկական հուզումները կարող էին վտանգավոր լինել նաև կովկասյան տարածաշրջանում: Ռուսական կառավարությունը երես թեքեց արևմտահայերից՝ Հայկական հարցը համարելով սուլթանի ներքին գործ: Ցարական Ռուսաստանի կառավարող շրջանները գտնում էին, որ իրենց ավելի ձեռնտու է միացնել հայկական վիլայեթները Ռուսաստանին՝ քան ստեղծել ինքնավար Հայաստան: Նրանց կարծիքով դա կարող էր վտանգավոր օրինակ լինել Անդրկովկասի ժողովուրդների համար[2]: Դա փաստում են նաև Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ա.Բ. Լոբանով-Ռոստովսկու խոսքերը «Ռուսաստանը թույլ չի տա իր սահմանագլխին ստեղծել մեկ այլ Բուլղարիա»[3]: Քաղաքական թելադրանքով՝ իշխանամետ և պահպանողական ուժերը, առանց հիմնավոր փաստարկների «Հայկական անջատողականության» իրենց տեսությունը լայնածավալ շրջանառություն մեջ դրեցին: Այդ թվում էին նաև «Московские ведомости», «Новое время», «Гражданин», «Кремль» լրագրերը, որոնք միահամուռ կերպով սկսեցին լայնածավալ քարոզչություն, թե իբր կովկասահայերը ցանկանում են վերականգնել «Մեծ Հայաստան» պետությունը, որն իր մեջ ներառելու էր հիմնական ռուսական տարածքները: Ցարիզմն, իր որդեգրած քաղաքականությամբ, ցանկանում էր ռուս ժողովրդի մեջ հայերի նկատմամբ ատելությունն առաջացնելով՝ խոչընդոտել արևմտահայ փախստականների բարոյական և նյութական օգնության գործընթացը: Պահպանողականների այս անհիմն մեղադրանքներին դիմագրավելու համար առաջադեմ մամուլը, մասնավորապես «Русские ведомости», «Русская мысль», «Неделя» և պահպանողական «Санкт-Петербургские ведомости» լրագրերը հայանպաստ լայնածավալ գործունեություն սկսեց: Առաջադեմ մտավորականները՝ Գ. Եվրեինովը, Մ. Կովալևսկին, Պ. Միլյուկովը և այլոք գտնում էին, որ հայ ժողովրդին օգնելը ոչ միայն բարոյական խնդիր է, այլ նաև Ռուսաստանի համար ունի քաղաքական ու ռազմավարական խոշոր նշանակություն: Եվ ռուս առաջադեմ մտավորականները դիմեցին գործնական քայլերի՝ արևմտահայ գաղթականներին օգնության ձեռք մեկնելու համար[4]: Նրանց կոչերին ականջալուր եղան ռուսական հասարակության բազմահազար ներկայացուցիչները:

Արևմտահայ գաղթականների օգնության գործն էլ ավելի աշխուժացնելու համար ռուս մտավորականները հանդես էին գալիս հայ ժողովրդի նոր պատմության շրջանին նվիրված հանրային դասախոսություններով, կազմակերպում բարեգործական թատերական ներկայացումներ և ստացված ողջ հասույթը հատկացվում էր փախստականների օգնության գործին:

Անվանի հրապարակախոսների հայանպաստ բովանդակությամբ գրված հոդվածները ռուս ժողովրդին համակում էին

---

[2] Տե՛ս **Համբարյան Ա.**, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898–1908 թթ.), Երևան, 1999, էջ 16:

[3] **Մուրադյան Մ.**, Հայկական հարցը և ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական միտքը, Երևան, 1998, էջ 99:

[4] Տե՛ս մանրամասն Հայոց պատմություն, հ. III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 544:

հայերի նկատմամբ կարեկցանքով և համակրանքով: Աստիճանաբար թոթափվում էր պաշտոնական շրջանների հարուցած դժվարությունները և հոգատարություն էր դրսևորվում արևմտահայ գաղթականների նկատմամբ:

Ռուսական ուղղափառ եկեղեցական մամուլը ևս ծավալում էր լայն հայանպաստ գործունեություն: Ռուս հոգևորականներն իրենց լուման ներդնելով՝ միաժամանակ կոչով հանդես են գալիս և խրախուսում հայրենակիցներին՝ օգնելու քրիստոնյա եղբայրներին: Ավագերեց Ի. Սերգեևը դիմում է «СПб. Ведомости» լրագրի խմբագրին խնդրանքով, որ թերթի միջոցով հնչեցնի իր՝ հայերի օգնության մարդասիրական կոչը[5]:

Արևմտահայ գաղթականների օգնության գործը Ռուսաստանում փաստորեն սկսվեց ինքնաբուխ, առանց իշխանությունների գործնական միջամտության: Ռուս հասարակությունը փորձեց իր մի փոքր լումայով սատար կանգնել արևմտահայ գաղթականներին: Առանձին անհատներից զատ՝ հասարակական կազմակերպությունները ևս սկսեցին աջակցել արևմտահայերին:

Ցարական կառավարությունը, ելնելով երկրում ժողովրդական զանգվածների արևմտահայ գաղթականներին նյութապես և բարոյապես սատարելու ինքնաբուխ պատրաստակամությունից և դրան զուգահեռ ռուս-թուրքական հարաբերությունների վատթարացումից, 1896 թ. դեկտեմբերի 11-ի Բարձրագույն հրամանով թույլատրում է Ռուսաստանում կազմակերպել հանգանակություններ՝ ի օգուտ արևմտահայ գաղթականների: Հանգանակությունները պետք է ընդունեին լիազորված անձինք և հաստա-

[5] Տե՛ս **Սիմոնյան Պ.**, Հայկական հարցը և ռուս հասարակական միտքը 19-րդ դարի 90-ական թվականներին, Երևան, 2003, էջ 369:

տությունները, հավաքված գումարը տեղական նահանգապետի միջոցով հանձնեին Կովկասի կառավարչապետին և վերջինիս անմիջական կարգադրությամբ հատկացվեին օգնությունները: Կովկասի կառավարչապետը՝ Գ. Գոլիցինը, ամեն շաբաթ պետք է տեղեկացներ հավաքված գումարի և բաշխված օգնության մասին[6]:

Սույն հրամանից հետո էլ ավելի է աշխուժանում օգնության գործը: Ռուս մտավորականների կողմից 1897 թ. սկզբին ստեղծվեց «ռուս-հայկական ընկերությունը», որի հիմնական նպատակն էր ռուս հասարակությանը իրազեկել հայ ժողովրդի պատմությանը: Ուշագրավ է, որ այս ընկերության կազմում ընդգրկված հայտնի հայանպաստ գործիչները մեծ հեղինակություն էին վայելում հասարակության շրջանում[7]:

Արևմտահայերի օգնության կազմակերպման գործում անգնահատելի է նաև հայազգի նշանավոր մտավորական, պատմաբան, հրապարակախոս և հասարակական գործիչ Գր. Ջանշյանի[8] կատարած աշխատանքը: Նրա ջանքերով և ռուս մտավորականներ Վ. Գոլստրեմի, Ա. Ն. Սազոնովի, Ա. Ն. Գրենի, Մ. Նիկոլսկու և այլոց նյութական աջակցությամբ ու ակտիվ մասնակցությամբ հրապարակվեց «Եղբայրական օգնությունը Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուն: 1897 թ. ընթացքում ժողովածուից ստացված 23.000 ֆրանկ փոխանցվեց Կ. Պոլսի ռու-

[6] Տե՛ս «Նոր Դար», Թիֆլիս, 1897, թիվ 226, էջ 1, «Մուրճ» Թիֆլիս, 1897, թիվ 2-3, էջ 394:

[7] Տե՛ս «Մշակ», 1897, թիվ 33, էջ 1:

[8] Գր. Ջանշյանը ծնվել է 1851 թ. Թիֆլիսում: Ոսկե մեդալով ավարտելով Մոսկվայի Լազարյան ճեմարանն ընդունվել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Նա զբաղվել է ոչ միայն իրավաբանությամբ, այլ նաև պատմության, գրականության, արվեստի, տնտեսագիտության և այլ հարցերով (Լ.Ք.):

սական դեսպանատուն՝ կոտորածի ընթացքում տուժածներին և որբերին օգնություն հատկացնելու համար[9]:

Ժողովածուն լայն ճանաչում ստացավ հանրության շրջանում, ինչը հնարավորություն ընձեռեց վերահրատարակել գիրքը: Մոսկվայում 1898 թ. լույս տեսավ «Եղբայրական օգնությունը Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուի երկրորդ տպագրությունը՝ ավելի մշակված և նոր նյութերով լրացված[10]: Ժողովածուի երկրորդ հրատարակությունից ստացվեց 60.000 ռուբլի[11]:

«Եղբայրական օգնության» խմբագրությունը մարդասիրական գործունեություն ծավալեց ոչ միայն հայ որբերին, այլ նաև Ռուսաստանում ապաստանած հայ փախստականներին նյութական օգնություն ցուցաբերելու ուղղությամբ: Խմբագրությունը որոշեց գրքերից ստացված հասույթի մի մասով որբանոցներ բացել Արևմտյան Հայաստանում: Այդ քայլը ողջունեցին նաև Օսմանյան կայսրությունում Ռուսաստանի դեսպան Ի.Ա. Զինովևը և Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանը: Առաջին տպագրությունից գոյացած գումարից 13.140 ռուբլի 65 կոպեկ ուղարկվեց Կ. Պոլիս՝ ռուսաց դեսպանատան միջոցով արևմտահայերին օգնելու համար: Բացի այդ նաև 5.000 ռուբլի գումար է ուղարկվում որբանոց հիմնելու համար: Այդ գումարով նախատեսվում էր խնամել 25 երեխայի 4 տարով, որի հիմքում ընկած էր Պատրիարք հոր նախատեսած հաշվարկը՝ համաձայն որի մեկ երեխայի խնամքի համար հարկավոր էր տարեկան մոտ 50 ռուբլի: Մ. Օրմանյանը նախատեսել էր որբանոցը հիմնել Դիարբեքիր նահանգի Բալու քաղաքում, քանի որ այն առավել շատ

[9] Տե՛ս Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1897, էջ Е.
[10] Տե՛ս «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1898, Գիրք Ա, էջ 110:
[11] Տե՛ս **Համբարյան Հ.**, Գրիգոր Ավետի Ջանշյան (Ջանշիեվ), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2001, թիվ 1, էջ 225:

տուժած վայրերից է և այնտեղ կար 2.250 որբ: Որբանոցը հիմնվեց Քաղցրահայեաց Աստվածամոր վանքում[12]: Այն անվանվեց «Հայ-ռուսական որբանոց հիմնված «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուի խմբագրության կողմից կատարած նվիրատվության միջոցով»[13]:

Գրքից ստացված միջոցներով որբանոցներ բացվեցին Աղթամարում, Բալուում ևս մեկ որբանոց Քաղցրահայոց վանքում, Սսի Մայրավանքում, Կյուրինում, Զարսանճագում, Հասան-Պեյ գյուղում[14]:

Այնուհետև Գր. Ջանշյանը Մ. Օրմանյանին 2500 ռուբլի[15] գումար է ուղարկել ութերորդ որբանոցը բացելու համար: Քանի որ Մուշի առաջնորդական տեղապահ Բաբկեն վարդապետը գտնում էր, որ հարկավոր է տեղում նաև աղջիկների համար որբանոց բացել, ուստի հատկացված գումարն օգտագործվեց այդ նպատակի համար[16]:

«Եղբայրական օգնությունը Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուի հրատարակության արդյունքում որբանոցներ բացվեցին նաև Դիարբեքիրում, Աղթամարում, Բալուում, Աղբակի Ս. Բարդուղիմեոս վանքում, Ֆոնուզի Ս.Աստվածածին վանքում, Ալաշկերտում, Վանի Սալնապատի Ս. Գրիգոր մենաստանում, Սիսում, Կյուրինում, Զարսանջակում, Հասան-Բեյում և Մուշում[17]: Գր. Ջանշյանին, նման ազգանվեր աշխատանք նախաձեռնելու համար, պատրիարք Մ. Օրմանյանը շնորհեց «որբերի հովանա-

[12] Տե՛ս «Արաքս», 1898, Գիրք Ա, էջ 110, «Մշակ», 1898, թիվ 203, էջ 2, «Մուրճ», 1898, թիվ 10–11, էջ 1618–1619:
[13] Տե՛ս «Նոր Դար», 1898, թիվ 203, էջ 1:
[14] Տե՛ս «Արևելք», Կ. Պոլիս, 1900, թիվ 4389, էջ 2:
[15] Տե՛ս «Մուրճ», 1900, թիվ 2, էջ 266:
[16] Տե՛ս «Արարատ», Էջմիածին, 1900, թիվ, 1, էջ 24:
[17] Տե՛ս «Արևելք», 1900, թիվ 4389, էջ 2:

վոր» պատվավոր կոչումը[18]: Արդեն 1897 թ. մայիսին Կովկասի կառավարչապետության դիվանում հայ գաղթականների համար հավաքվել էր 38.000 ռուբլի[19]:

Ստացված օգնությունը ավելի ճիշտ և տեղին բաշխելու համար Կովկասի կառավարչապետի օգնական իշխան Ամիլախվարիի կարգադրությամբ ամենուր պետք է կազմվեին մասնաժողովներ, որի անդամների թվում բացի ոստիկանության ներկայացուցչից ընդգրկված պետք է լինեին նաև տեղացիներ, որոնք քաջատեղյակ կլինեին գաղթականների վիճակին և քանակին: Նրանց ճիշտ ցուցումներով ավելի ճիշտ ու տեղին կբաշխվեր օգնությունը[20]:

Արևմտահայ գաղթականների համար հանգանակության թույլատրություն ստանալու հենց սկզբից՝ օգնությանն ակտիվ մասնակցություն ունեցան տասնյակ հազարավոր անհատ անձինք՝ պետական ու զինվորական պաշտոնյաներ, տարբեր կազմակերպություններ: Հանգանակություններ կատարվեցին Սիբիրի Տոմսկ քաղաքում, Սամարղանդի նահանգապետ, իշխան Վ. Գ. Ռոստովցևի ակտիվ մասնակցությամբ ողջ Թուրքմենստանում, Վլադիկավկազի հայերի նախաձեռնությամբ ռուսական դերասանական խումբը կազմակերպեց թատերական ներկայացում, որից ստացված հասույթը՝ 375 ռ., ուղարկվեց գաղթականներին[21]:

Անդրկովկասի մի շարք քաղաքներում, այդ թվում Թիֆլիսում, Բաթումում, Երևանում ստեղծվեցին փախստականների

[18] Տե՛ս Սիմոնյան Պ., նշվ.աշխ., էջ 387:
[19] Տե՛ս «Մուրճ», 1897, թիվ 5, էջ 732:
[20] Տե՛ս «Մշակ», 1897, թիվ 17.02.11, էջ 1:
[21] Տե՛ս «Մշակ», 1897, թիվ 13, էջ 2:

օգնության ընկերություններ, հիմնվեցին ապաստարաններ, անվճար ճաշարաններ:

Փախստականների օգնության կովկասյան գլխավոր վարչության վեցամսյա հաշվետվությունից պարզ է դառնում, որ արևմտահայ գաղթականների օգնության համար հավաքված գումարը կազմել է 47.724 ռուբլի, որը հատկացվել է հագուստի, սննդի և անկողնային պարագաների համար[22]:

Այդ օգնությունների հիմնական միջոցները տրամադրում էին տեղացիները: Օրինակ՝ Թիֆլիսում ապաստանած արևմտահայ գաղթականներին սննդով ապահովելու համար իշխան Գ. Շերվաշիձեի[23] ցուցումով Հավլաբար, Սոլոլակ, Դիդուբե թաղամասերում բացվեցին բարեգործական ճաշարաններ[24]: Հավլաբարում գործող ճաշարանը գործեց շուրջ մեկ տարի և արևմտահայ գաղթականներին տրամադրեց 8.948 ռ 87 կ.-ի անվճար կերակուր[25]: Ստացված օգնությունն ավելի կանոնակարգված և նպատակային տնօրինելու համար Ամիլախվարիի և Գ. Շերվաշիձեի հանձնարարությամբ Թիֆլիսում ստեղծվում է մասնաժողով[26], որի գրասենյակը գործում էր Աբաս-Աբադի հրապարակում: Կարգադրիչ մասնաժողովի նախագահ նշանակվեց Թիֆլիսին լավ ծանոթ Կ. Բեյտերին: Նա մասնաժողովի անդամներ ընտրելու և գաղթականների վիճակի ու քանակի մասին տեղեկանալու համար հրավիրեց խորհրդակցություն: Նիստին ներկա էին Թիֆլիսի ոստիկանապետը, մամուլի ներկայացուցիչներ,

[22] Տե՛ս «Մուրճ», 1897, թիվ 7–8, էջ 1137:
[23] Գեորգի Դմիտրիի Շերվաշիձե (1847–1918 թթ.) Թիֆլիսի նահանգապետ 1889–1897 թթ. (Լ. Ք.):
[24] Տե՛ս СПБ ведомости, Санкт-Петербург, 1898, № 107:
[25] Տե՛ս «Նոր Դար», 1899, թիվ 21, էջ 2:
[26] Տե՛ս «Մշակ», 1897, թիվ 19, էջ 1:

ԿՀԲԸ-ն նախագահը՝ Ա. Անանյանը, խորհրդի անդամներ և քաղաքացիներ: Նիստում, կազմակերպական հարցերից զատ, բարձրացված կարևոր հիմնդիրներից մեկը գաղթականներին աշխատանքով ապահովելու հարցն էր[27]:

Հայ գաղթականներին խնամող հանձնաժողովի աշխատակիցներ Ն. Աղբալյանին, Վ. Փափազյանին և Ս. Զուրաբյանին հանձնարարվեց ուսումնասիրել գաղթականների վիճակը և այդ ամենը հրապարակել մամուլում: Այս քայլով փորձ էր արվում դարձյալ հասարակության ուշադրությունը սևեռել գաղթականների օգնության խնդրին: Կարճ ժամանակ անց՝ հոկտեմբեր ամսին, վաճառականներ «Միլեանց» եղբայրները 200 գաղթականների բաժանեցին կոշիկներ և գուլպաներ: «Ադելխանյան և ընկերներ» կաշվեգործարանը նվիրեց մեծ քանակությամբ կոշիկներ: Նոյեմբերի 7-ին Թիֆլիսի քաղաքային վարչությունը հանձնեց գաղթականներին խնամող հանձնաժողովին 260 կտոր սպիտակեղեն և 70 կտոր կենցաղային իրեր[28]:

Թիֆլիսում 1897 թ. նոյեմբերին նահանգապետի տիկնոջ՝ Ն. Բիկովայի գլխավորությամբ, ստեղծվեց կանանց կոմիտե, նրանք կարողացան վարչությանը հատկացնել 1600 ռուբլի օգնություն[29]: Բացվեցին նաև բարեգործական ճաշարաններ, հիվանդանոցներ: Թիֆլիսի նշանավոր Թանդոյան Սբ. Աստվածածին եկեղեցում, տիկին Հ. Մարտիրոսյանի ջանքերով, կառուցվեց գաղթականների համար հիվանդանոց, որին օգնում էր նաև ԿՀԲԸ-ը[30]:

[27] Տե՛ս «Մշակ», 1897, թիվ 20, էջ 2, «Մուրճ», 1897, թիվ 2–3, էջ 395:
[28] Տե՛ս «Մուրճ», 1897, թիվ 10, էջ 1460–1461:
[29] Տե՛ս «Մուրճ», 1897, թիվ 11–12, էջ 1669:
[30] Տե՛ս «Մուրճ», 1898, թիվ 4, էջ 562:

Ախալքալաքում ևս օգնություն կազմակերպելու համար գումարվեց արտակարգ ընդհանուր ժողով, որին մասնակցեցին 30 անդամներ: Գաղթականներին նվիրեցին 126 արշին[31] կտորեղեն, 85 արշին զինվորականների օգտագործած հաստ մոխրագույն մահուդ և 608 արշին անկողնային պարագաներ: Սննդի և բժշկության համար հատկացվեց 115 ռուբլի[32]: Քաղաքային ավագ Արշակ Գրիգորյանի նախաձեռնությամբ 1897 թ. հունվարի վերջին սկսվեց հանգանկություն, հավաքեց 700 ռուբլի[33]: Նման մասնաժողովներ կազմակերպվեցին գրեթե ամենուր, քանի որ գաղթականներն ապաստանել էին ամբողջ Կովկասի կառավարչապետությունում:

Նոր Նախիջևանում ևս կազմակերպվեց մասնաժողով, որը հիմնականում կազմված էր հայերից: 1897 թ. ընթացքում հավաքվեց մոտ 3000 ռուբլի[34]: Ստավրոպոլում 1897 թ. փետրվարի 21-ին հայ գաղթականների համար, մի խումբ կանաց ջանքերով, կազմակերպվեց բարեգործական պարահանդես, հասույթը կազմեց 400 ռուբլի[35]: Վլադիկավկազում գործող թատերական խումբը նույնպես կազմակերպեց երկու ներկայացում և ստացված 600 ռուբլի եկամուտը հատկացրեց փախստականների օգնության ֆոնդին[36]:

Սուխումում, վրաց իշխանուհի Ելիսաբեթ Կ. Ծերեթելիի նախաձեռնությամբ կազմակերպվեց բարեգործական ներկայացում, հավաքված 210 ռուբլին ուղարկվեց Թիֆլիսի կառավարչա-

[31] 1 արշինը հավասար է 70.9սմ (Լ.Ք.):
[32] Տե՛ս «Մշակ», 1897, թիվ 79, էջ 2:
[33] Տե՛ս «Մուրճ», 1897, թիվ 2–3, էջ 395:
[34] Տե՛ս նույն տեղում, 1897, թիվ 1, էջ 162, «Նոր Դար», 1897, թիվ 42, էջ 2–3:
[35] Տե՛ս նույն տեղում, 1897, թիվ 2–3, էջ 397:
[36] Տե՛ս «Մշակ», 1897, թիվ 13, էջ 2:

պետին[37]: Սուխումիի ռուս կալվածատերերը դիմեցին Կարսի և Թիֆլիսի նպաստամատույց հանձնաժողովին նշելով, որ իրենք պատրաստ են մշակելու համար հող հատկացնել 400–500 հայ գաղթական ընտանիքների, եթե լուծվի փոխադրության հարցը: Նրանք պատճառաբանում էին, որ Փոքր Ասիայում հայերը միակն են, որ կարող են Սուխումիի շրջանում երկրագործությամբ և ծխախոտի մշակությամբ զբաղվել: Արդեն հունվարի կեսին Սուխումիի Գուդաուրի գավառամաս էին հասել 280 հայ գաղթականներ[38]:

Եկատերինոդար քաղաքում բացվեց հայ գաղթականների համար անվճար ճաշարան: Այստեղ 1897 թ. սկզբին Բագրատ աբեղա Վարդազարյանցը շրջեց տներով և երկու օրում հավաքեց 3450 ռուբլի գումար և 600 ռուբլու պատրաստի շորեր և կտորներ[39]: Եկատերինոդարում տարեվերջին կազմակերպված պարահանդեսի ժամանակ հավաքվեց 1.200 ռուբլի[40]: Ըստ 1898 թ. Եկատերինոդարից ստացված հաշվետվության 1897 թ. վերջից մինչև 1898 թ. կեսերը ստացվել է 1.664 ռ. 69 կ. օգնություն[41]: Եկատերինոդարից ստացվել է նաև հաշվետվությունը «գաղթական և տեղական աղքատների համար հաստատված ձրի ճաշարանից»: 1897 թ. նոյեմբերի 19-ից մինչև 1898 թ. կեսերը հավաքվել է 1.664 ռ. 69 կ. օգնություն, որը ծախսվել է սննդի, բուժօգնության, վառելափայտի համար[42]:

[37] Տե՛ս «Մուրճ», 1897, թիվ 2–3, էջ 396–397:
[38] Տե՛ս Մշակ, 1897, թիվ 30, էջ 3:
[39] Տե՛ս «Մուրճ», 1897, թիվ 1, էջ 159:
[40] Տե՛ս նույն տեղում, 1897, թիվ 11–12, էջ 1669:
[41] Տե՛ս նույն տեղում, 1898, թիվ 7–8, էջ 1160:
[42] Տե՛ս «Մուրճ», 1898, թիվ 7–8, էջ 1160:

Աստրախանը ևս անմասն չմնաց գաղթականների օգնության գործին: 1896 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Աստրախանից 2.600 ռուբլի փոխանցվեց ԿՀԲԸ-ն[43]: Քաղաքի կանայք կազմակերպեցին բարեգործական ներկայացում և ստացված մոտ 200 ռ. հասույթն ուղարկեցին ԿՀԲԸ-ն Երևանի մասնաճյուղին՝ տեղի գաղթականներին բաժանելու համար[44]:

Աստրախանում առաջնորդ Արիստակես Սեդրակյանը 1897 թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում Թիֆլիսի ԿՀԲԸ-ը հանգանակել էր 5.700 ռուբլի: Քաղաքի կանայք, իրենց հերթին, հավաքել էին վերնազգեստներ, մուշտակներ, ձմեռային կոշիկներ և այլն[45]: Դեկտեմբեր ամսին նրանք ուղարկեցին 6 մեծ արկղ 30 փութ[46] քաշով՝ Երևան, Կարս, Ալեքսանդրապոլ: Ներքին գործերի մինիստրի թույլտվությամբ կազմակերպեցին բարեգործական ներկայացում, որից ստացված 400 ռուբլուց 200-ը ուղարկեցին Հին Նախիջևան, 200-ը Երևան[47]: Արդեն 1898 թ. Աստրախանում հիմնվեց «հայուհաց ընկերություն», որի նպատակն էր օգնել տեղի հայ կարիքավորներին, որբերին խնամել և դաստիարակել[48]:

Բաքվում փախստականներին օգնելու գործը կազմակերպեց «Բաքվի մարդասիրական ընկերությունը», որը ստեղծեց 18 հոգուց ընտրված հատուկ հանձնաժողով: Առաջին նիստը տեղի ունեցավ նոյեմբերի 9-ին և որոշվեց կազմել հայ փախստականների մանրամասն ցուցակ, որը հնարավորությունը կտար հաս-

[43] Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ). ֆ. 28, ց. 1. գ. 357, թ. 66 ՀԱԱ, ֆ. 28. ց. 1. գ. 357, թ. 122 :
[44] ՀԱԱ. ֆ. 28. ց. 1. գ. 964. թ. 7:
[45] Տե՛ս «Մուրճ». 1897. № 1. էջ 158:
[46] Շանրություն ռուսական չափ. որ հավասար է 16.3 կգ (Լ.Գ.)
[47] Տե՛ս «Մուրճ». 1897, № 1. էջ 158. Մշակ. 1897. թիվ 12, էջ 2–3:
[48] Տե՛ս «Մուրճ». 1898. № 4. էջ 577:

կանալ ընտանիքների թիվը և առկա կարիքները: Հանձնաժողովը պետք է ուսումնասիրեր նրանց կացարանները և պարզեր նրանց կարիքները: Նույն օրը հանձնաժողովը զննեց կացարանները և միաժամանակ ճշտեց, թե ինչ օգնություն է հարկավոր գաղթականներին[49]: Հանձնաժողովն ամեն գնով փորձում էր աշխատունակ փախստականներին ապահովել նաև աշխատանքով: Օրինակ հանձնաժողովի անդամներից մեկի առաջարկով Ղարաբաղից հրավիրվեց գորգագործ մի կին, որը այդ արհեստը պետք է սովորեցներ փախստական կանանց[50]: Նրանց հատկացվեց նաև բժշկական օգնություն, այդ գործում մեծ աջակցություն ցուցաբերեցին բժիշկներ Ա. Աղամիրզյանը և Մ. Զսայլյանը[51]:

Օգնություն կազմակերպելն ու ինչ որ չափով թեթևացնելն արևմտահայ գաղթականների վիճակը ամենևին էլ չէր լուծում նրանց գոյատևման բարդ խնդիրը: Հարկավոր էր քայլեր ձեռնարկել գաղթականներին մշտական օգնության և որ ամենակարևորն էր իրենց ծննդավայր վերադարձնելու համար, ինչը կենսական անհրաժեշտություն էր արևմտահայերի համար: Քանի որ հայ ժողովրդի թվաքանակի աղետալի նվազումը խիստ բացասական ազդեցություն էր ունենում Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության վրա: Դա հենց սուլթանի որդեգրած քաղաքականության կարևոր մասն էր կազմում: 1890-ական թթ. հայաթափված հարյուրավոր բնակավայրեր բնակեցվեցին մահմեդական ցեղերով: Նրանք «մուհաջիրներ» (գաղթականներ)

[49] Տե՛ս «Արձագանք», 1897, թիվ 133, էջ 1:

[50] Տե՛ս **Տէր-Յարութիւնեանց Ա.**, Հայ գաղթականները Բագու եւ նրանց վերադարձը, Բագու, 1903, էջ 20:

[51] Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Բաքու քաղաքի հայության պատմությունը, Երևան 2011, էջ 110–111:

անվան տակ խորն արմատներ էին գցում Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում[52]: Սակայն «հայասեր» ցարական կառավարությունը այս անգամ ևս փորձեց՝ օգտագործելով գաղթականների համար կարևորագույն հարցը, սուլթանից զիջումներ կորզել: 1898 թ. Կ. Պոլսի դեսպան Ի.Ա. Զինովևը պահանջեց Աբդուլ Համիդից հետ ընդունել Ռուսաստանում ապաստանած հայ գաղթականներին: Սուլթանը մերժեց պատճառաբանելով, որ հայերի հողերը արդեն բնակեցված են քրդերով ու մուհաջիրներով և նրանց տեղաշարժը կարող է բերել նոր արյունահեղության: Սուլթանն անգամ առաջարկում է 100 հազար լիրա՝ պայմանով, որ հայերը մնան Կովկասում կամ արտաքսվեն Սիբիր: Սակարկության արդյունքում սուլթանը հասցրել է այդ գումարը մինչև 160.000 լիրայի: Ռուսական ինքնակալն այս պայմանին ևս չհամաձայնելով ստիպեց, որ սուլթանը 1900 թ. ապրիլի 2-ին կնքի համաձայնագիր: Ըստ այդ համաձայնագրի Արևմտյան Հայաստանի և Սև ծովի հարավային ափերի երկաթգծի կոնցեսիաներն անցում էին Ռուսաստանին և Աբդուլ Համիդը շարունակում էր վճարել 1877-1878 թթ. պատերազմի դեռ չմարած ծախսերը: Նիկոլայ II-ն իր հերթին պարտավորվեց այլևս սուլթանին չներկայացնել հայ գաղթականներին հետ ընդունելու պահանջը[53]:

Այսպիսով, 19-րդ դարի 90-ական թվականներին Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ շրջաններում սկսեց արևմտահայերի զանգվածային կոտորածը: Մազապուրծ արևմտահայերի մեծ մասը բռնեց գաղթի ճանապարհը: Նրանք առա-

[52] Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, էջ 544:

[53] Տե՛ս **Համբարյան Ա.**, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898–1908 թթ.), էջ 17:

ջինը իրենց հայացքն ուղեցին դեպի Ռուսաստանի տարածք, որը դարեր շարունակ թուրքական լուծը կրող հայությունը դիտել է որպես փրկության հանգրվան: Չնայած ցարական կառավարության որդեգրած անբարենպաստ դիրքորոշմանը, ռուս առաջադեմ մտավորականները, գրողները վճռականորեն պնդում ու պահանջում էին իշխանությունից պաշտպանել և հովանավորել արևմտահայերին: Ցարիզմի դիրքորոշմից անկախ՝ ռուս առաջադեմ մտավորականներն ու ժողովրդական լայն զանգվածները իրենց հոգատար ձեռք մեկնեցին և սատար եղան դժբախտության մեջ հայտնված արևմտահայ գաղթականներին: Նրանց կողմից հանրայնացված պահանջի արդյունքում՝ ցարական կառավարությունը ստիպված եղավ հրապարակել 1896 թ. դեկտեմբերի 11-ի հրամանագիրը, որով թույլատրվեց հանգանակություն սկսել ի նպաստ արևմտահայ գաղթականների: Այս հրամանագրից հետո ավելի աշխուժացավ օգնության գործը և մինչև 1897 թ. մայիսին Կովկասի կառավարչապետության դիվանում հայ գաղթականների համար հավաքվել էր արդեն 38.000 ռուբլի: Անդրկովկասի մի շարք քաղաքներում, այդ թվում Թիֆլիսում, Բաթումում, Երևանում ստեղծվեցին փախստականների օգնության ընկերություններ, հիմնվեցին ապաստարաններ, անվճար ճաշարաններ: Անգնահատելի էր Գր. Ջանշյանի կատարած հայանվեր գործը, որի արդյունքում հիմնվեցին թվով 12 որբանոցներ: Ստացված օգնությունները ավելի ճիշտ տնօրինելու համար ստեղծվում են գաղթականների հաշվով զբաղվող հանձնաժողովներ: Հարկավոր էր տվյալ վայրի գաղթականների մասին հավաքել ստույգ տվյալներ և օգնությունը բաժանել ըստ կարիքի և անհրաժեշտության: Նման հանձնաժողովներ ստեղծվեցին ողջ Անդրկովկասով մեկ: Եվ շնորհիվ

այդ օգնությունների տասնյակ հազարավոր արևմտահայեր փրկվեցին մահվան ճիրաններից:

Лилит С. Косян, *Институт истории НАН РА,* **Помощь Кавказской администрации беженцам из Западной Армении в 1890-ые годы.**

В 1890-ые годы подавляющее большинство армян, избежавших гибели в ходе массовой резни в Османской Турции поселились на Кавказе. Они первыми обратились с просьбой к администрации Кавказа. Независимо от позиции царского правительства, русская интеллигенция и широкие народные массы протянули руку помощи западноармянским беженцам.

С целью правильной организации помощи были созданы благотворительные, общественные и религиозные организации и общества. Уже до мая 1897 года в аппарате администрации Кавказа было собрано для армянских беженцев более 38 тысяч рублей. В ряде городов Закавказья, в том числе в Тифлисе, Батуми, Ереване создаются общества помощи беженцам, приюты, бесплатные столовые. Велика также роль и деятельность Г. Джаншяна, направленная на устройство поселений армян на Кавказе, в результате было основано 12 приютов.

Lilit S. Qosyan, *Institute of History of the NAS RA,* **The support of the Caucasian Administration to the migrants from Western Armenia in the 1890s.**

In the 1890s most of the Armenians, who survived during the massacres in the Ottoman Empire ended up in exile. They were the first to appeal to the Caucasian Administration with request. Regardless of the official position of tsarist government, the Russian

progressive intelligentsia and the broad masses of the people extended a helping hand to Western Armenian migrants.

For the effective organization of aid, various charitable, public and religious organizations and societies were created. By May 1897, 38,000 rubles had been collected for Armenian migrants at the Caucasian Administration Office. Relief societies were established in a number of Transcaucasian cities, including Tiflis, Batumi and Yerevan, where shelters and free canteens were opened for migrants. The role and activities of G. Janshyan aimed at arranging settlements for Armenians in the Caucasus was also remarkably large Armenian philanthropy work is also noteworthy, as a result of which 12 orphanages were established.

ԱՐՓԻՆԵ Ռ. ԲԱԲԼՈՒՄՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻԱՐԲԵՔԻՐԻ (ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ) ԳԱՎԱՌԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ – XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Բանալի բառեր՝ Արևմտյան Հայաստան, Դիարբեքիր, Տիգրանակերտ, Ծոփք, հայ բնակչության թվաքանակ, համիդյան կոտորածներ, Թեոդիկ:

Օսմանյան կայսրության՝ Արևմտյան Հայաստանը վիլայեթների (նահանգ) բաժանելու պահից սկսած Դիարբեքիրը եղել է կազմավորված 5 նահանգներից մեկը: XIX դարի երկրորդ կեսի ընթացքում, հատկապես՝ 1870–80-ական թվականներին կայսրության տարածքում իրականացված ավելի արմատական վարչական ձևափոխումներից հետո, Դիարբեքիրի նահանգը Արևմտյան Հայաստանի տարածքն ընդգրկող արդեն վեց նահանգներից մեկն էր՝ իր հերթին բաժանվելով երեք գավառների՝ Դիարբեքիր, Արղանա Մադեն և Մարդին: Ըստ հայագետ, աշխարհագրագետ Ռ. Հյուսենի՝ Դիարբեքիրի նահանգն ընդգրկում էր շուրջ 42.000 քառ. կմ տարածք[1], ըստ պատմաբան Գ. Բաղալյանի՝47.250 քառ. կմ[2]: Այն ներառում էր պատմական

[1] Sh'u Hewsen R. Armenia on the Tigris, in *Armenian Tigranakert/Diarbekir and Edessa/Urfa*, edited by **R. Hovannisian**, Mazda Publishers, Costa Mesa, California, 2006, էջ 66:

[2] **Բաղալյան Գ.**, Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրեին, մաս 9: Դիարբեքիրի վիլայեթի Դիարբեքիրի սանջակը

Չորրորդ Հայքի Մեծ Ծոփք, Բալահովիտ, Պաղնատուն, Աղձնիքի՝ Նփրկերտ գավառները, նաև՝ որոշ տարածքներ Հյուսիսային Միջագետքից:

Նահանգի կենտրոնական գավառը Դիարբեքիրն էր, որը հատկապես հայկական աղբյուրներում հաճախ հիշատակվում է որպես Տիգրանակերտ: Ժամանակին Դիարբեքիր քաղաքը նույնացվել է Տիգրանակերտ (Մարտիրոպոլիս, Նփրկերտ) քաղաքի հետ, մինչդեռ դրանք բոլորովին տարբեր բնակավայրեր էին, ընդ որում, վերջինս գտնվում էր Դիարբեքիրից՝ նախկինում՝ Ամիդ, հյուսիս-արևելք[3]: Հոդվածում կօգտագործենք երկու անվանումներն էլ, քանի որ, եթե ոչ Դիարբեքիր քաղաքը, ապա գավառն ու ամբողջ նահանգը կարելի է հիշատակել պատմական Տիգրանակերտ անունով, որն, ի վերջո գտնվում էր հենց այս նահանգի ու գավառի տարածքում:

Ստորև անդրադարձ է կատարվում Դիարբեքիրի գավառի բնակավայրերին ու հայ բնակչության պատմաժողովրդագրական պատկերին XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին: Գավառը բաժանվում էր Դիարբեքիր, Սևերեկ, Սլիվան, Բշերիկ, Տերըկ, Լճե գավառակների՝ հիմնականում ընդգրկելով տարածքներ պատմական Աղձնիքից: Հոդվածը շարադրելիս օգտագործվել են ինչպես հայկական աղբյուրներ, մամուլ, այնպես էլ՝ օտար սկզբնաղբյուրներ, ճանապարհորդական նոթեր և այլ նյութեր: XX դարի սկզբներին վերաբերող աղբյուրների մեջ

և Մարդինի ու Ջեզիրեի գավառները, «Վեմ համահայկական հանդես», ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2020, էջ 154: «Հայկական հարց» հանրագիտարանում հեղինակը նշում է 47.220, այլ տվյալի համաձայն՝ 49.609 քառ. կմ (տես՝ «Հայկական հարց», Երևան, 1996, էջ 114):

[3] Տե՛ս **Հակոբյան Թ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 234:

Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալները և դրանց ամփոփող գրականությունը առաջնային նշանակություն ունեն: Նախևառաջ կարևորվում է արևմտահայ մտավորական, հրապարակախոս Թեոդիկի հրատարակած աշխատանքը, որում հեղինակը ներկայացնում է Կոստանդնուպոլսի պատրիարքարանի տվյալները հայաբնակ բնակավայրերի, հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ յուրաքանչյուր նահանգում, գավառում, նաև հայ հոգևորականության ճակատագիրը ցեղասպանության տարիներին: Թեոդիկը ներկայացնում է նաև հայ բնակչության ընդհանուր թվաքանակը Տիգրանակերտի նահանգի նույնանուն գավառի գավառակներում, որի համաձայն գավառում հաշվվում էր 38.950 լուսավորչական, 1.700 կաթոլիկ և 2.550 բողոքական հայ[4]: Մեջբերված տվյալում, ներառված չէ Սևերեկի հայ բնակչության թվաքանակը, քանի որ Թեոդիկն այն ներկայացնում է որպես առանձին գավառ[5]. հոդվածում, համաձայն վարչական բաժանման, Սևերեկը ներառվել է Դիարբեքիրի գավառի տարածքում որպես առանձին գավառակ:

Գավառի հայ բնակչության ընդհանուր տվյալներ կան նաև Թեոդիկի հրատարակած «Ամենուն տարեցոյց» տարեգրքում, որի համաձայն պատերազմից առաջ գավառում հաշվվում էր 60.000[6] հայ բնակիչ: Այս տվյալները վերաբերում էին 1912 թ. և կազմվել էին Ապահովաց հանձնաժողովի կողմից Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալների, Կիլիկիո կաթողիկոսարանի արխիվային տարբեր նյութերի, թեմական

[4] Տե՛ս **Թէոդիկ**, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարին, Թեհրան, 2014, էջ 356:

[5] Տե՛ս նույն տեղում: Ընդհանուր հաշվարկում թերհաշվված է 800 հոգի (Ա.Բ.):

[6] Տե՛ս«Ամենուն տարեցոյց», 1921, Կ. Պոլիս, էջ 261:

տեղեկագրերի հիման վրա կազմված մեկ այլ վիճակագրություն է ներկայացնում Բյուզանդ Եղիայանը, որի համաձայն Տիգրանակերտում (թերևս խոսքը ամբողջ գավառին է վերաբերում) հաշվվում էր 51.750[7] հայ բնակիչ: Գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ թուրքական պաշտոնական տվյալներ է ներկայացնում ֆրանսիացի արևելագետ Վ. Քինեն, որը 1890 թ. համար տալիս է հայ բնակչության հետևյալ թվաքանակը. Տիգրանակերտի գավառ՝ հայ լուսավորչական՝ 28.984, հայ կաթոլիկ՝ 1.845, հայ բողոքական՝ 1.544, ընդամենը՝ 32.373, որից Տիգրանակերտ քաղաքում՝ հայ լուսավորչական՝ 10.480, հայ կաթոլիկ՝ 899, հայ բողոքական՝ 880, ընդամենը՝ 12.259[8]:

Դիարբեքիրի գավառը և հատկապես նույնանուն գավառակի տարածքը հայտնի էին որպես երկրագործական արտադրանքի կարևոր կենտրոններ: Մասնավորապես, հասարակական գործիչ, մտավորական Մարկոս Նաթանյանը գրում է. «Պարսպէն ներս չկ՝ա բնաւ պարտէզ կամ ծառատունկ, այլ պարսպէն դուրս, Տիգրիսի եզերքը այնքան առատ որ աննման աժանութիւն ունին՝ ամեն տեսակ մրգէղեննէր: Իսկ սեխ և ձմերուկն արդէն անուանի են յոյժ, մանաւանդ վերջինն 50-60 օխա ծանրութեամբ կը մեծնայ երբեմն և կը վաճառուի ոչ հատով, այլ մսի պէս կը կտրուի եւ ուզած չափով կը տրուի...»: Նաթանյանը նաև գրում է, որ Տիգրանակերտում բանջարեղենն ու մրգերը ավելի էժան էին, քան Խարբերդում, Բալուում, Արաբկիրում, Ակնում, Երզնկայում, Կարինում, Վանում, Բաղեշում ևն[9]:

[7] Տե՛ս **Եղիայան Բ.**, Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ. 1914–1972, Անթիլիաս, 1975, էջ 892:

[8] Տե՛ս **Ղազարեան Հ.**, Ցեղասպան թուրքը, Բ հրատ., Անթիլիաս, 2010, էջ 262:

[9] «Մասիս», 1885, թիվ 3768, 4 մայիս, Կ. Պոլիս:

Գավառակի և ամբողջ նահանգի կենտրոնն էր Դիարբեքիր քաղաքը (Ամիդ), որը Արևմտյան Հայաստանի հնագույն բնակավայրերից էր, ուներ բազմադարյան պատմություն, մշակույթ: Քաղաքի կենտրոնում շուկան էր, իսկ տները կառուցված էին շուկայի շուրջը: Քաղաքը արհեստագործական և հատկապես առևտրական կենտրոն էր: Քաղաքում գործում էին 33 արհեստներ, ընդհանուր առմամբ, քաղաքի շուկայում կար 950 խանութ[10]: Արհեստներից առավել զարգացած էր սավանագործությունը, որին տիրապետում էին հարյուրավոր անձինք: Այս արտադրանքն արտահանվում էր դեպի Մոսուլ և Բաղդադ:

Մեծ տեղ ուներ նաև պղնձագործությունը, ինչը կապված էր Արղանա Մադենի պղնձահանքերի մոտ լինելու հանգամանքով: Պղնձագործական իրերը ևս արտահանվում էին: Ոսկերչությամբ ու դերձակությամբ զբաղվողներ ևս կային, սակայն արդեն դրանք նախկին ծավալները չունեին: Մասնավորապես, դերձակների 50 արհեստանոց կար: Ինչ վերաբերում է առևտրին, ապա մեծ ծավալներ ուներ քաղաքից արտահանվող արտադրանքը՝ բուրդ, կաշվեղեն, մորթեղեն, մետաքս, խեժ: Իր հերթին, այս արտադրանքը քաղաք էր բերվում արտադրական ու արհեստագործական կենտրոններ հանդիսացող ավաններից, ինչպես օրինակ, Լճեն, Հայնին, Ջեզիրեն, Չնքուշը:

Քաղաքում գործում էր 6 եկեղեցի՝ երեք առաքելական, մեկ կաթոլիկ, երկու բողոքական: Անգլիացի ճանապարհորդ Ջ. Հեփվորֆը իր նոթերում մանրամասն անդրադարձ է կատարում Դիարբեքիրի տեղադրությանը, հնադարյան պատմության մանրամասներին: Հեփվորֆի տվյալների համաձայն 1890-ականնե-

[10] Տե՛ս «Հայ արհեստաւորները Տիգրանակերտի մէջ», *«Արմենիա»*, 1906, դեկտ. 26, Մարսէյ:

ին քաղաքն ուներ 30.000 բնակչություն[11]: Վերլուծելով XIX դարի վերջի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները, կարելի է վստահաբար ասել, որ Դիարբեքիր քաղաքը 1880–90-ական թվականներին ուներ շուրջ 30.000 բնակչություն, որից հայեր էին գրեթե կեսը[12]:

Դիարբեքիր նահանգը, ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս նահանգները, մեծապես տուժեց համիդյան կոտորածների տարիներին: Մասնավորապես, Դիարբեքիր քաղաքում 1895 թ. նոյեմբերին կազմակերպված զանգվածային կոտորածի օրերին սպանվեց 3000–5000՝ հիմնականում հայ բնակիչ[13]: Կոտորածների ալիքը տարածվեց նաև քաղաքի շրջակա բնակավայրերում, նաև՝ մյուս գավառներում: Ցավոք, կոտորածների հետևանքներն ավելի ցավալի էին ու երկարատև: Խնդիրն այն է, որ կոտորածներից հետո շատերը մնացել էին անօթևան, քանի որ Դիարբեքիրում արձանագրվել էր նաև ունեցվածքի, տների մեծ կորուստ. հրկիզվել ու ոչնչացվել էին բազմաթիվ տներ ու խանութներ: Շատերը մնացել էին առանց գոյության տարրական միջոցների, ահա ինչու տարածվեցին հիվանդությունները, սովը, որոնք ևս մարդկանց մահվան պատճառ դարձան: Մյուս կարևոր հանգամանքն այն էր, որ կոտորածների ընթացքում սպանվածների մեծամասնությունը տղամարդիկ էին, յուրաքանչյուրը մի ընտանիքի հենարան: Նաև շատ դժվար էր հաղթահարել այն վախի մթնոլորտը, որի մեջ հայտնվել էր հայ բնակչությունը: Այս-

[11] Տե՛ս **Hepworth Rev. G. H.**, Through Armenia on Horseback. London, 1898, էջ 178:

[12] Տե՛ս մանրամասն **Babluman A.**, "The Armenian population of Diarbekir (Tigranakert) kaza in 1880 – early of 1890s", «Բանբեր հայագիտության», Երևան, 2019, թիվ 3, էջ 5–16:

[13] Տե՛ս մանրամասն **Բաբլումյան Ա.**, Հայերի կոտորածները Դիարբեքիր քաղաքում 1895 թ., «Հայագիտության հարցեր», Երևան, 2020, թիվ 3, էջ 61–75:

պիսով, համիդյան կոտորածները մեծապես վատթարացրեցին հայ բնակչության թե՛ տնտեսական, թե՛ բարոյահոգեբանական դրությունը, նաև ուղիղ ազդեցություն ունեցան հայերի թվաքանակի և ընդհանրապես՝ բնակչության ժողովրդագրական պատկերի վրա: Սա է պատճառը, որ հետագա տարիներին հայ բնակչության թվաքանակն ու տնտեսական վիճակը հակառակ նրան, որ պետք է ավելի կարգավորվեր ու ամրանար, ուղղվեց նախկինում տիրող դրության վերականգնմանն ու իրավիճակի կայունացմանը:

Ցավոք, XX դարի սկզբներին ևս իրավիճակը Դիարբեքիրում մնում էր լարված: «Արմէնիա» թերթում հաջորդաբար մի քանի հաղորդագրություններ են տպվում Դիարբեքիրում տիրող իրավիճակի վերաբերյալ: Սա կապված էր նախ երիտթուրքերի հեղաշրջման հետ: Դիարբեքիրում, չնայած առաջին հայացքից ուրախությամբ ընկալվեց հեղափոխության լուրը, սակայն, այստեղ ավելի ուժեղ էին նախկին իշխանությունների հետևորդները, ավելին, նրանց համար անընդունելի էր «հայերի ազատութիւնն ու հաւասարութիւնը»[14]: Մի խումբ ազատականների խոսքը տվյալ դեպքում ոչինչ էր պաշտոնյաների մեծամասնության, բեյերի ու աղաների, շեյխերի մոտեցումների դեմ: Վերջիններս աներկյուղ հայտարարում էին, որ «անկարելի է ընդունինք և թողունք որ իսլամներն ու քրիստոնեաներն համահաւասար իրաւունքի տէր ըլլան և մէկ նկատուին, հակառակ պարագային՝ ամէնքն ալ կը ջարդենք և կը փճացնենք»[15]: Նույն թերթի թղթակիցը ավելացնում է, որ եթե նման վիճակ էր Դիարբեքիրում, ապա, հնարավոր չէ պատմել Սլիվանի, Բշերիկի, Տերըկի, Ջեզի-

[14] «Կոտորածի լուրեր Հայաստանէ», «Արմէնիա», 1908, հոկտ. 28, Մարսէյ:

[15] «Նամակ Թիւրքիայէ», Վշտայր, «Արմէնի», 1908, նոյ. 11:

ռեի, Սևերեկի, Բալուի, Ջերմուկի, Հազրոյի, Լճեի քրդաշատ գյուղախմբերում բնակվող քրիստոնյաների վիճակի մասին: Իրադրությունն ավելի սրվեց Միլլի աշիրեթի պետ Իբրահիմ փաշայի՝ իշխանությունների դեմ ապստամբելու պատճառով: Իբրահիմ փաշան, ի վերջո, սպանվեց և օսմանյան զորքերը մտան նրա ապաստան ու հենարան հանդիսացող Վերան Շեհիր քաղաքը: Ահա այս ընթացքում է, որ մեծ բռնություններ իրականացվեցին բնակչության նկատմամբ, կոտորվեցին բազմաթիվ մարդիկ: Սպանվածների մեջ կային նաև հայեր ու ասորիներ, թեև մեծ մասը եզդիներ էին: Սկզբում Դիարբեքիրից Պոլիս հեռագրվեց կոտորածի մասին, հետո սակայն պարզ դարձավ, որ դեպքը վերաբերում է Վերան Շեհիրին: Այս կոտորածի ընթացքում, ինչպես նշվում է «Արմէնիա» թերթի թղթակցության մեջ, հայերը մեծ մարդկային վնասներ չեն կրում, քանի որ հավաքվում են եկեղեցում, մինչդեռ նյութապես տուժում են մեծ չափով, քանի որ տներն ու խանութները կողոպտվում են անխտիր: Թղթակիցը նշում էր նաև, որ մոտ 50.000 մարդ կոտորածների ու ավերածությունների արդյունքում մնացել էր անօթևան, որից քրիստոնյա և մեծամասամբ՝ հայ էին մոտ 3.000-ը[16]: Կարելի է ենթադրել, որ այս դեպքերից հետո ևս շատերը ապահովության, օթևան գտնելու հույսով հեռացան այլ բնակավայրեր:

Այլ երկրներ և հատկապես ԱՄՆ արտագաղթի խնդիրները ևս արդիական էին Դիարբեքիրի, Բալուի, նահանգի հայաշատ մյուս բնակավայրերի համար: Այս առումով ևս ուշագրավ թղթակցություններ կան՝ գրված Դիարբեքիրից, որտեղ խոսվում է օրվա կարևոր խնդիր դարձած գաղթականության մասին:

[16] Տե՛ս «Օղում Իպրահիմ»-ի մահուան պարագաները, *«Արմէնիա»*, 1908, նոյ.11:

Չնայած նրան, որ անցագիր ստանալն արգելված էր, այնուամենայնիվ, շատերը փախուստի էին դիմում, վատնում 20–25 ոսկու չափ գումար, նույնիսկ այդ դեպքում՝ ոչ միշտ հաջողության հասնում: Հրապարակախոս Վշտակիրն անդրադառնում է գաղթի պատճառներին, մասնավորապես նշում, որ հայերին խեղելը, հայհոյելը, սովորական երևույթ էր դարձել, հասել ծայրահեղության. ահա ինչու, երիտասարդությունը արտասահմանի որևէ ազգականի, ծանոթի առաջարկին վստահելով, պատրաստ է ամեն զոհողության՝ գնալու «ազատ երկիր»[17]: 1906 թ. նոյեմբերի 18-ին Վշտակիրը գրում է Տիգրանակերտից. «Մեկնողներուն տեղը շրջակայքէն կուգան բռնել խեղճ գիւղացիներ, որք Քիւրդերու զուլումներէն ազատուելու յուսով քաղաք կը դիմեն, անդին իրենց տեղերը պարապ թողլով»[18]: Տվյալ դեպքում թղթակիցը խոսում է ժողովրդագրական այն միտման մասին, երբ գյուղերից, հատկապես փոքրաթիվ հայ բնակչություն ունեցող բնակավայրերից գոյության միջոցներ գտնելու և հիմնականում ապահովության ակնկալիքով բնակիչները հեռանում էին, հաստատվում ավելի խոշոր, նաև՝ հայաշատ բնակավայրերում: Այս միտման պատճառով է, որ կենտրոնական բնակավայրերում հայերի թվաքանակի նվազեցում հիմնականում չէր նկատվում, մինչդեռ նախկինում հայաբնակ բազմաթիվ գյուղական բնակավայրեր հայաթափ էին լինում:

Դիարբեքիրի գավառակ

Փորձենք որոշակիորեն հաշվարկել նաև հայ բնակչության թվաքանակը Դիարբեքիր քաղաքում և գավառի բնակավայրե-

[17] «Նամակ Թիւրքիաէն», Վշտակիր, «Արմէնիա», 1907, փետրվար 13:
[18] Նույն տեղում, յունուար 9:

ռում Հայոց ցեղասպանությունից առաջ: Համաձայն ուսումնասիրող Ս. Ծոցիկյանի՝ 1915 թ. առաջ Դիարբեքիր քաղաքն ուներ 40.000 բնակչություն, իսկ հայերի թվաքանակը մոտ 12.000 էր, ոմանց կարծիքով՝ մինչև 15.000[19]: Ըստ Տ. Մկունդի խմբագրությամբ հրատարակված Դիարբեքիրին նվիրված հուշամատյանի՝ այս ժամանակաշրջանում քաղաքի բնակիչների թիվը հաշվվում էր 23.000, 3.000 մարդ էլ հաշվվում էր որպես փախստական[20]: Միևնույն ժամանակ, հեղինակը գրքի մեկ այլ հատվածում գրում է. «Տիարպէքիրի հայութեան անձի կորուստն է 35–36000. իսկ շրջակայից անձի կորուստն է մօտաւորապէս 40–45000»[21]: Ըստ պատրիարքարանի՝ Թեոդիկի հրատարակած ցուցակի՝ Դիարբեքիր քաղաքում 1914 թ. դրությամբ ապրում էր 3.000 անձ[22]: Այս տվյալը, կարծում ենք, թյուրիմացության հետևանք է, քանի որ Դիարբեքիրում հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ եղած մյուս տվյալները մի քանի անգամ ավել են ցույց տալիս հայերի թվաքանակը, նաև՝ տարօրինակ է, որ Թեոդիկը բոլոր բնակավայրերի դեպքում հիմնականում տալիս է տների թիվը, իսկ Դիարբեքիր քաղաքի վերաբերյալ՝ անձերի թվաքանակ: Ավելին, XX դարի սկզբներին, չնայած համիդյան կոտորածներին զոհ գնացած, նաև հետագա տարիներին արտագաղթած հայերի թվաքանակին, հայ բնակչության թվաքանակը այստեղ չէր կարող լինել 3.000: Թեոդիկի հրատարակության մեկ այլ՝ տեքստային հատվածում, անդրադառնալով Տիգրանակերտի նահանգի հայ բնակչության ընդհանուր թվաքանակին, ներկայացվում է նաև Տիգրանակերտի գավառի հայերի տեղաբաշխ-

[19] Տե՛ս **Ծոցիկեան Ս.**, Արեւմտահայ աշխարհ, Նիւ Եորք, 1947, էջ 744–745:
[20] Տե՛ս **Մկունդ Տ.**, Ամիտայի արձագանգներ, 1950, ԱՄՆ, էջ 477:
[21] Նույն տեղում, էջ 253:
[22] Տե՛ս Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 797:

վածությունը ըստ գավառակների: Մասնավորապես, Տիգրանակերտի գավառակում, ըստ պատրիարքարանի ցուցակի, հաշվվում էր, 14.000 լուսավորչական, 1.300 կաթոլիկ, 1.300 բողոքական հայ[23]: Համաձայն այս տվյալի՝ գավառակի տարածքում ապրում էր ընդամենը 16.600 հայ, մեծ մասը՝ քաղաքում, քանի որ Դիարբեքիրի գավառակի գյուղական բնակավայրերում ապրում էր ընդամենը շուրջ 300 տուն հայություն: Դիարբեքիրում հայ բնակչության մեծաքանակ լինելու օգտին է խոսում մեկ այլ կարևոր աղբյուր. Դիարբեքիրում բրիտանական փոխհյուպատոս Թ. Մկրտչյանը դեռևս 1919 թ. հրատարակած իր հուշագրության մեջ նշում է, որ Հալեպում, այլ վայրերում գտնվող վերապրած տիգրանակերտցիների վկայությունների, եղած ցուցակների համաձայն «բուն քաղաքին հայ բնակչութեան կորուստը կը հաշուի 25-26000ի մօտ եւ գաւառներու կորուստը 60-65000ի»[24]: Ամերիկահայ ուսումնասիրող, հրապարակախոս՝ մասնագիտությամբ բժիշկ Ս. Կարայանն իր հետազոտության մեջ հիմք ընդունելով Թ. Մկրտչյանի բերած տվյալը, իր հերթին եզրակացնում է, որ Տիգրանակերտում 26.000 սպանվածներին պետք է գումարել նաև շուրջ 10000 բանակ զորակոչված և սպանված տղամարդկանց, նաև մոտ 9000 ենթադրյալ վերապրածների, որոնք ինչ-որ կերպ փրկվելով, հաստատվել էին Հալեպում և Լիբանանում: Կարայանի հաշվարկներով, Դիարբեքիրում 1915 թ. դրությամբ ապրում էր 42000-45000 հայ[25], ինչը, սակայն, մեր կարծիքով, խիստ չափազանցված է: Ավելին, կարծում

[23] Տե՛ս նույն տեղում, էջ 356:
[24] **Մկրտիչեան Թ.**, Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու գազանութիւնները, Գահիրէ, 1919, էջ 87:
[25] Տե՛ս **Karayan S.**, Armenians in Ottoman Turkey, 1914. A Geographic and Demographic Gazetteer, London, Gomidas Institute, էջ 269, 273:

ենք, Թ. Մկրտչյանի բերած տվյալում ևս որոշակի առումով կարող էին հաշվառվել նաև շրջակա բնակավայրերից Դիարբեքիրում ապաստանած կամ այստեղ աշխատող հայերը, կամ այս տարածքով տեղահանվողների մի մասը հաշվվեր որպես տեղաբնիկ: Պատմաբան, Կ. Պոլսի պատրիարքարանի 1913–1914 թթ. ցուցակների մեկ այլ հրատարակիչ Ռ. Գևորգյանը գրում է, որ Դիարբեքիրի 45.000 բնակչից հայ էր 14.000-ը[26]: Ի մի բերելով եղած բոլոր տվյալները, նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ XIX դարի վերջերին Դիարբեքիրում ապրում էր շուրջ 15.000 հայ, կարծում ենք, որ հայերի թվաքանակը այստեղ 1914 թ. դրությամբ պետք է հաշվարկել շուրջ 17.000:

Դիարբեքիրի գավառակը ներառում էր նաև մի քանի տասնյակ հայաբնակ բնակավայրեր: Մասնավորապես, ըստ Ռ. Գևորգյանի հրատարակած տվյալների՝ գավառակը ներառում էր 25 գյուղական բնակավայրեր՝ 2252 հայ բնակիչներով, որոնց կողքին ապրում էին ասորիներ, քրդեր, կզլբաշներ[27]: Թեոդիկը, ի տարբերություն Ռ. Գևորգյանի, նույն գավառակում հիշատակում է 47 հայաբնակ բնակավայրեր, նա գավառակի բնակավայրերը բաշխում է արևելյան և արևմտյան գյուղախմբերի միջև, ինչպես, իր վկայությամբ, արվել էր վիճակի նախկին առաջնորդ Զավեն եպիսկոպոսի՝ 1912 թ. պատրաստած ցուցակում: Արևմտյան գյուղախմբում Թեոդիկի թվարկած

23 գյուղերից Ռ. Գևորգյանը հիշատակում է միայն Ալի Բունար, Սելըմի, Տարպաշուր, Զարոխիկ, Խմերիկ, Գարա Քիլիսե գյուղերը: Գավառակի արևելյան գյուղախմբում Թեոդիկը հիշատակում է ևս 23 բնակավայր, այդ բնակավայրերից էին Գթրպը-ը, Իրինճիլը, Գապասագալը, Քապին, Անշան, Գարապաշը, Շառապին, Սաթի գյուղը, Արզօղլին, Պաղչեճիքը, Թավուղլին, Ճռնիկը, Տարաղլին, այլ գյուղեր:

Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուճյանի հրատարակած պատրիարքարանի ցուցակում թվարկված բնակավայրերը հիմնականում կան Թեոդիկի բերած անվանացանկում: Ցավոք, Դիարբեքիրի շրջանակի գյուղերից մի քանիսը միայն ունեին տասից ավել տուն հայ բնակիչ: Մյուս բնակավայրերը, ըստ Գարեգին Սրվանձտյանցի, ով մանրամասն ուսումնասիրություն է հեղինակել Արևմտյան Հայաստանի տարբեր գավառների հայ բնակչության վերաբերյալ, դեռևս 1878–80 թթ. ունեին 1–10 տուն հայություն:

Թեոդիկը հիշատակում է նաև մեկական տուն հայ բնակչությամբ մի շարք գյուղեր՝ Պալուճա, Զանախլի, Մխսի Օղլի, Գրթե, Վերի Կէօզլի, Գըրզալի, Կյավուր Վելի, Պալըղի, Տենկեճուկ, Մեծ Նասրիկ, Օրինագ, Էսկի Նասրիկ, Շեյխքենդ, Խտր Էլիաս,Գավսե[28]: Ուշագրավ է, որ թվարկված բնակավայրերը Սրվանձտյանցը չի հիշատակել: Այս գյուղերը ներառված չեն նաև պատրիրաքարանի՝ Ռ. Գևորգյանի և Պ. Փաբուճյանի կողմից հրատարակված ցուցակում, քանի որ, նշված 1–6 տուն հայությունը այս բնակավայրերում մշտապես չի ապրել, այլ սրանք եղել են գաղթական հայեր, ովքեր աշխատանքի կամ կեցության համար տվյալ ժամանակամիջոցին բնակվել են Դիարբեքիրի գավառակի գյուղերում: Մասնավորապես Թեոդիկն այս մասին գրում է, որ «Առաջնոյն Ալի Փունար եւ Հայեղիկ գիւղերէն զատ,

[26] Տե՛ս **Ke'vorkian R., Paboudjian P.**, Les Arme'niens dans l'empire Ottoman. A la veille du Ge'nocide, Paris, 1992, էջ 397:

[27] Տե՛ս նույն տեղում. էջ 398:

[28] Տե՛ս **Թեոդիկ**, նշվ. աշխ., էջ 364:

միւսներուն ժողովուրդը գաղթական եւ «մերիպա» էին, տեղափոխուելու ենթակայ»[29]:

Ցավոք, փաստ է, որ պատրիարքարանի տվյալները կատարյալ չեն եղել, ավելին, հաճախ հայերի թվաքանակը այս կամ այն բնակավայրում ավելին էր, քան դրանք ներկայացված են Թեոդիկի կամ Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի հրատարակած ցուցակներում: Այնուամենայնիվ, ստիպված ենք հաճախ որպես հիմք ու հաշվարկի հիմնական աղբյուր վերցնել այդ տվյալները, քանի որ դրանք ավելի ամբողջական են: Պատրիարքարանի տվյալների համաձայն՝ 1914 թ. դրությամբ Դիարբեքիրի գավառակի 45 գյուղական բնակավայրերում հաշվվում էր 330 տուն կամ՝ յուրաքանչյուր տան անդամների թիվը հաշվելով 8՝ 2.640 հայ: Գրեթե նույնքան թվաքանակ է հիշատակում Ռ. Գևորգյանը՝ 2.252[30]. Հեղինակը չի մասնավորեցնում յուրաքանչյուր բնակավայրի հայերի տների քանակը: Ընդհանուր առմամբ, կարելի է ենթադրել, որ Դիարբեքիրի գավառակում, ապրում էր շուրջ 20.000 հայ:

Սևերեկի գավառակ

Անդրադարձ կատարենք նաև գավառի մյուս գավառակներում հայ բնակչության թվաքանակին, զբաղմունքներին և այլ հարցերի: Դիարբեքիրի գավառի գավառակներից էր Թեոդիկի մոտ որպես չորրորդ գավառ հիշատակվող Սևերեկը: Սևերեկի հայերի նախնիները գաղթել էին Թլկուրանից ու Վերան Շեհիրից: Բարեկեցիկ էին, կային մեծատուն ընտանիքներ[31]: Ընդհանուր առմամբ, Սևերեկը հիշատակվում է որպես բարեկեցիկ բնակավայր, մասնավորապես, հայերն այստեղ զբաղվում էին երկրագործությամբ, արհեստներով և հատկապես՝ առևտրով: 1888 թ. հրատարակված մի հոդվածում, որը վերաբերում էր Խարբերդին, տվյալներ կան կառավարության մարդահամարի տետրերից, որտեղ բերվում է նաև Սևերեկում ապրող հայերի թվաքանակը՝ 3.100 շունչ[32]: Սևերեկի գավառակում, 1890 թ. դրությամբ, ըստ Վ. Քինեի, որը ևս մեջբերում է պաշտոնական մարդահամարի տվյալներ, հաշվվում էր 7.250 հայ բնակիչ[33]:

Համիդյան կոտորածներից անմասն չմնաց նաև Սևերեկի հայությունը: Ըստ Է. Բլիսի, որը համիդյան կոտորածների վերաբերյալ մանրամասն տվյալներ է հրատարակել, Սևերեկում քրիստոնյա 2.900 բնակչից գրեթե բոլոր տղամարդիկ՝ շուրջ 750 հոգի, սպանվեցին համիդյան կոտորածի ընթացքում, ինչը հնարավորություն տվեց իշխանություններին՝ մահմեդականացնելու բոլոր կանանց ու երեխաներին[34]: Սպանվածների նույն թվաքանակն է հիշատակվում նաև ամերիկյան մամուլի էջերում: Մասնավորապես, "The New York Times"-ի 1896 թ. հունվարի 23-ի համարում վերատպված է "Independent"-ում հրապարակված մի աղյուսակ, որտեղ ներկայացված են կոտորածների վերաբերյալ տվյալներ Խարբերդի ու Դիարբեքիրի նահանգների բնակավայրերի վերաբերյալ: Տրված է նաև բնակավայրի տների մոտավոր քանակը, հստակեցվում, որ յուրաքանչյուր տանը պետք է նկա-

---

[29] **Թեոդիկ**, նշվ. աշխ., էջ 364:

[30] Տե՛ս **Kevorkian R.**, Demographic Changes in the Armenian Population of Diarbekir, 1895-1914, in Armenian Tigranakert/Diarbekir and Edessa/Urfa, edited by R. Hovannisian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2006, էջ 266:

[31] Տե՛ս **Ծոցիկեան Մ.**, նշվ. աշխ., էջ 656–657:

[32] Տե՛ս «Արաքս», 1888, թիվ 2, էջ 30:

[33] Տե՛ս **Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 262–263:

[34] Տե՛ս **Bliss Rev. Edwin**, Turkey and the Armenian Atrocities, Fresno, Ca., Meshag publishing, 1982, էջ 487:

տի ունենալ 8-10 շունչ: Այսպես, Սևերեկն ըստ ցուցակի, ուներ 350 տուն հայ բնակիչ, սպանվել էր 750 հոգի[35]:

1900-ականներին և հատկապես 1914–1915 թթ. Սևերեկում հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հեղինակներից Ս. Պարսամյանը կրկնում է նույն Վ. Քինեի հրատարակած տվյալը՝ 7.250 հայ բնակիչ[36], ինչը պաշտոնական տվյալ էր: Մեկ այլ հեղինակի՝ Ս. Ծոցիկյանի տվյալների համաձայն պատերազմից առաջ Սևերեկն ուներ 15.000 բնակչություն, որից 8.000-ը հայ էին[37]: Սևերեկի վերաբերյալ հուշամատյանի հեղինակ Պ. Արապյանը բերում է նշված տվյալներից խիստ տարբերվող թվաքանակներ: Նա գրում է, որ 1900-ական թվականներին Սևերեկ քաղաքի բնակչությունը 30-35.000 էր, որից քրիստոնյա էր 15-16.000-ը[38]: 1914 թ. դրությամբ, Սևերեկ քաղաքի վերաբերյալ հեղինակը ներկայացնում է տվյալ՝ 14.500 տուն[39], ինչը, կարծում ենք, տպագրական սխալ է, թերևս տների փոխարեն նշված է շնչերի քանակը: Մեր ենթադրությունները հաստատում է Արևմտյան Հայաստանի նահանգների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ ծավալուն ուսումնասիրության հեղինակ Ս. Կարայանը, ով վստահեցնում է, որ 1973 թ. անձամբ հետաքրքրվել է Պ. Արապյանից այս թվի ստույգ լինելու վերաբերյալ, որին ի պատասխան Արապյանը վստահեցրել է, որ դա սխալմունք է, և թիվը վերաբերում է շնչերին և ոչ տներին[40]: Պ. Արապյանը

[35] Տե՛ս The Armenian Genocide: Prelude and Aftermath. As Reported in the U.S. Press: The New York Times, vol. 1 (1890–1914), compiled and edited by Rev. **V. Ohanian and A. Ketibian**, 2018, p. 382–383.

[36] Տե՛ս **Պարսամեան Ս.**, Յուշարձան Ջերմուկի, Պոսթըն, 1969, էջ 135:

[37] Տե՛ս **Ծոցիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 656–657:

[38] Տե՛ս **Արապեան Թ.**, Յուշամատեան Սեւերակի, Պէյրութ, 1971, էջ 19:

[39] Տե՛ս նույն տեղում, էջ 21:

[40] Տե՛ս **Karayan S.**, նշվ. աշխ., էջ 298:

հուշամատյանի մեկ այլ հատվածում մեջբերում է տվյալ, որը հեղինակի խնդրանքով 1954 թ. իրեն է փոխանցել Սևերեկում ապրող և ավելի քան 15 տարի անձնագրային գրասենյակում աշխատող ոմն Իսմայիլ Հաճի էֆենդին: Վերջինիս վստահեցրել է, որ Սևերեկում դեռևս պահպանվում են հայերի վերաբերյալ բոլոր տվյալները և կատարած հաշվարկների արդյունքում նշել, որ Սևերեկում 1914 թ. ապրում էր 14.000 հայ առաքելական, 1000 ասորի, 750 հայ բողոքական, 500 կաթոլիկ, 250 հրեա, 13.000 թուրք, 7.000՝ քուրդ, 3.000 զազա բնակիչ[41]: Բերված տվյալների համաձայն՝ Սևերեկում 1914 թ. ապրում էր շուրջ 15.000 հայ, նշենք, սակայն, որ այս տվյալը ևս խիստ տարբերվում է մյուս աղբյուրներում եղած տվյալներից: Թեոդիկի բերած տվյալների համաձայն՝ Սևերեկ քաղաքն ուներ ընդամենը 400 տուն հայ բնակիչ, քաղաքում գործում էր Ս. Թորոս եկեղեցին[42], իսկ Ռ. Գևորգյանի տվյալի համաձայն Սևերեկ քաղաքում ապրում էր 5.450 հայ բնակիչ[43]: Կարծում ենք, որ Թեոդիկի բերած տվյալը խիստ նվազ է ցույց տալիս հայերի թվաքանակը թե՛ քաղաքում, թե՛ գյուղերում: Ուշագրավ է այն փաստը, որ Սևերեկի մասին հիշատակելուց հետո, Թեոդիկը ներկայացնում է Սևերեկի հայ բնակչության մարդահամարը, որի համաձայն Սևերեկում հաշվվում էր 950 լուսավորչական, 100 կաթոլիկ, 300՝ բողոքական[44], այս տվյալն առավել քան նախորդները հեռու է ճշգրիտ լինելուց: Տվյալ դեպքում ավելի հավանական է Ռ. Գևորգյանի մատնանշած տվյալը, ուստի Սևերեկ քաղաքում, կարծում ենք, ապրում էր շուրջ 6.000 հայ բնակչություն:

[41] Տե՛ս **Արապեան Թ.**, նշվ. աշխ., էջ 32–34:

[42] Տե՛ս **Թէոդիկ**, նշվ. աշխ., էջ 803:

[43] Տե՛ս **Kevorkian R.**, նշվ. աշխ., էջ 268:

[44] Տե՛ս **Թեոդիկ**, նշվ. աշխ., էջ 803:

Թ. Արապյանը ներկայացնում է 1915 թ. առաջ Սևերեկի ու շրջակա 8 հայկական գյուղերի բնակչության թվաքանակը: Համաձայն այդ ցուցակի՝ Մսեպին գյուղում հաշվվում էր 500, Պագճարիում՝ 300, Հալապիում՝ 225, Հոշինում՝ 200, Մազրայում՝ 175, Հատրոյում՝ 125, Խալոքանում՝ 75, Սումագլիում՝ 50 տուն հայ բնակիչ[45]: Հատկանշական է, որ Սևերեկի գյուղերը զուտ հայաբնակ էին, բնակիչները զբաղվում էին հողագործությամբ. մասնավորապես, Հալապիի, Խալոքանի հայերը ունեին խաղողի այգիներ, զբաղվում էին գինեգործությամբ, Պեքչերի/Պագճարի գյուղը ունևոր էր, ուներ նաև եկեղեցի, դպրոց[46]: Սևերեկի շրջանակի մեջ էր նաև Թլկուրանը, այն, իր նախկին շուքից զրկվելով, զրկվել էր նաև հայ բնակչությունից, որը գաղթել էր այս և այն կողմ, մասնավորապես՝ Սևերեկ[47]: Սևերեկի մոտ էր գտնվում Երկուշ գյուղը, որը ձիթաստաններով վայր էր, ուր ապրում էին զազաներ, հայեր, թուրքեր, ասորիներ, կային նաև հայ զազաներ[48]: Ուշագրավ է այն փաստը, որ Սևերեկի հայտնի յոթ գյուղերից, որոնք հիշատակվում են որպես զուտ հայաբնակ, Թեոդիկը հիշատակում է միայն հինգը՝ Նիսիպին, Օշին, Հատրո, Մազրա, Սմագլի: Բացի այս հայաշատ գյուղերը, որոնց բնակչության թվաքանակը Թեոդիկը ներկայացնում է 10-20 տուն, նա հիշատակում է նաև ևս 10 բնակավայրեր՝ մինչև 10 տուն հայ բնակչությամբ: Մյուս կողմից, Ռ. Գևորգյանը Սևերեկի գավառակում հիշատակում է բացի քաղաքը՝ Չաքաղ, Կարաբաղչե, Խարբի, Գորի, Օշին, Մազրա, Սմագլի գյուղերը, որոնցից մյուս աղբյուրներում հիշատակված են միայն վերջին երեքը: Նշված յոթ բնակավայրերում, ըստ Ռ. Գևորգյանի, ապրում էր 3.825, ընդհանուր՝ գավառակում՝ 9.275 հայ բնակիչ[49]:

[45] Տե՛ս **Արապեան Թ.**, նշվ. աշխ., էջ 21:
[46] Տե՛ս նույն տեղում, էջ 58–61:
[47] Տե՛ս **Ծոցիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 659:
[48] Տե՛ս նույն տեղում, էջ 658–659:

Սևերեկի գավառակի՝ աղբյուրներում թվարկված տարբերությունները, նաև հայերի թվաքանակի տարբերությունները խոսում են այն փաստի մասին, որ դրանք չեն ներկայացնում իրական վիճակը և չեն կարող խիստ ճշգրտորեն ներկայացնել հայերի իրական թվաքանակը տվյալ բնակավայրերում:Այնուամենայնիվ, հստակ է, որ Սևերեկ գավառակը եղել է հայաշատ գավառակ, ավելին, հիշատակվող բնակավայրերից շատերը եղել են զուտ հայաբնակ, ինչը խոսում է այն մասին, որ տվյալ գյուղերում հայերի թվաքանակը չէր կարող լիներ 10-20 տան սահմաններում, ինչպես բերված է պատրիրաքարանի՝ Թեոդիկի հրատարակած տվյալներում, միևնույն ժամանակ նշենք, որ մյուս կողմից էլ խիստ չափազանցված են Արապյանի տվյալները այս անգամ նաև Սևերեկի գյուղերի վերաբերյալ: Ինչպես քաղաքի դեպքում, այնպես էլ գյուղերի՝ որպես առավել հավանական տվյալ ընդունենք Ռ. Գևորգյանի հրատարակած տվյալները, միևնույն ժամանակ շեշտենք այն փաստը, որ Ռ. Գևորգյանի մոտ որպես հայաբնակ այս գավառակում հիշատակվում է ընդամենը 7 գյուղ, սակայն դրանց թիվն, ինչպես հավաստում են մյուս աղբյուրները, ավելին էր: Ուստի ամփոփելով՝ նշենք որ Սևերեկի գավառակում ապրում էր շուրջ 11000 հայ բնակիչ:

Տերըկի գավառակ

Սևերեկից հարավ էր գտնվում Տերըկի գավառակը: Տերըկ կամ Դերիկ գավառակում Գ. Սրվանձտյանցը հիշատակում է

[49] Տե՛ս **Kevorkian R.**, նշվ. աշխ., էջ 268:

միայն Տերըկ (60 տ.), Բեյրոկ (5տ.), Ս. Դանիել (2 տ.) բնակավայրերը[50], մինչդեռ Թեոդիկի մոտ դրանք ավել էին: Ռ. Գևորգյանի հրատարակած տվյալների համաձայն՝ Տերըկի գավառակում հաշվվում էր 356 տուն՝ 1782 հայ բնակիչ, որից քաղաքում էին ապրում 1250-ը: Ռ. Գևորգյանը այս գավառակում է հիշատակում նաև Բեյրոկ (532 շ.) և Վերան Շեհիր (1339 շ.) բնակավայրերը[51]: Վրիպում է, թերևս, որ Վերան Շեհիրի համար բերված տվյալը ներառված չէ գավառակի հայության ընդհանուր գումարում: Թեոդիկը Վերան Շեհիր բնակավայրը հիշատակում է որպես Սևերեկ առանձին գավառի գավառակ, հայերի թվաքանակը հաշվելով 120 տուն[52]:

Այսպիսով, գավառակի տարածքում 1914 թ. դրությամբ ապրում էր շուրջ 3.000 հայ:

Սլիվանի գավառակ

Դիարբեքիրի գավառի հայաշատ գավառակներից էր Սլիվանի գավառակը, որի կենտրոնական բնակավայրն էր Նփրկերտը՝ ըստ Սրվանձտյանցի՝ 80 տուն հայ բնակչությամբ[53]: Այստեղ կանգուն էր Ս. Սարգիս եկեղեցին, ևս երկու եկեղեցիներ ավերակ էին: Սա պատմական Տիգրանակերտի տեղում կառուցված բնակավայր էր, որը Աղձնիք նահանգի գավառներից Նփրկերտի անունով էլ կոչվում էր այդպես: Ընդհանուր առմամբ, Գ. Սրվանձտյանցն այս գավառակում հիշատակում է շուրջ 70 բնակավայր, որոնցում ընդհանուր առմամբ հաշվվում էր 1374 տուն

[50] Տե՛ս **Սրուանձտեանց Գ.**, Թորոս Աղբար Հայաստանի նամփորդ, հ. 1–2, Կ. Պոլիս, 1879–1884, էջ 232:
[51] Տե՛ս **Kevorkian R.**, նշվ. աշխ., էջ 268:
[52] Տե՛ս **Թէոդիկ**, նշվ. աշխ., էջ 803:
[53] Տե՛ս **Սրուանձտեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 234:

հայ բնակիչ[54]: Հիշատակության արժանի են հատկապես Հելեն՝ 70, Ֆերա՝ 80, Քնիադ՝ 60, Հուսեյնա՝ 70, Հաջիջա՝ 50, Թրպե Սրբի՝ 60 տուն հայ բնակչությամբ գյուղերը[55]: Մյուս բնակավայրերից շատերն ունեին 10-30, մի քանիսը՝ 1-10 տուն հայություն:

Կարևոր է նշել, որ ըստ պատրիարքարանի տվյալների, այս գավառակի բազմաթիվ բնակավայրեր, ինչպես օրինակ՝ Թրպե Սրբի, Հելեն, Քնիադ, Զաթալ, Պաշ Պյոյուք, Ատիշ, Հաշթեր և այլք, Հայոց ցեղասպանության նախօրյակին զուտ հայաբնակ էին: Այս գավառակում ևս, ինչպես Արևմտյան Հայաստանի բազմաթիվ այլ բնակավայրերում հայության թվաքանակը նախկինում ավելին էր եղել, մինչդեռ XX դարի սկզբներին նվազել էր: Ըստ Թեոդիկի, մասնավորապես, Սլիվանի գավառակի Զերրե գյուղում հաշվվում էր 26 տուն հայ, մինչդեռ նախապես այս բնակավայրում հայության թվաքանակը եռապատիկ էր եղել[56]: Գավառակի գյուղերից էր նռենիներով շրջապատված Ատիշը, որն ըստ Ս. Ծոցիկյանի, ունեցել է 360 տուն հայ բնակիչ[57]: Հիշատակություն կա նաև այն մասին, որ գյուղը հիմնադրվել էր Անիից գաղթած հայերի կողմից:

Ռ. Գևորգյանի տվյալների համաձայն՝ Սլիվանի գավառակում 1914 թ. դրությամբ ապրում էր 13824 հայ, որից 4200-ը՝ Նփրկերտում, նաև՝ 2333 ասորի, 26000 քուրդ[58]:

Թեոդիկի հրատարակած պատրիարքարանի տվյալների համաձայն Սլիվանի գավառակում 1914 թ. դրությամբ ապրում

[54] Տե՛ս նույն տեղում, էջ 234–236: Հանրագումարը կատարվել է մեր կողմից (Ա.Բ.):
[55] Տե՛ս նույն տեղում:
[56] Տե՛ս **Թէոդիկ**, նշվ. աշխ., էջ 369:
[57] Տե՛ս **Ծոցիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 760:
[58] Տե՛ս **Kevorkian R.**, նշվ. աշխ., էջ 271:

էր ընդհանուր առմամբ 2106 տուն հայ բնակչություն[59]: Այս ցուցակի համաձայն՝ բացի գավառակի կենտրոնական բնակավայրը, գյուղական շուրջ 70 բնակավայրերում հաշվվում էր 1827 տուն հայություն: Յուրաքանչյուր տան անդամների թիվը հաշվելով 8, նշված շուրջ 70 գյուղական բնակավայրերում ստացվում է՝ ապրում էր շուրջ 15000 հայ բնակիչ, գավառակում՝ շուրջ 18000:

Բշերիկի գավառակ

Դիարբեքիրի գավառի մյուս գավառակն էր Բշերիկը, որը գտնվում էր Սլիվանից հարավ, ևս սահմանակից էր Բիթլիսի նահանգին: Այս գավառակում Սրվանձտյանցը հիշատակում է շուրջ 40 հայաբնակ բնակավայր, որոնցից Ղանթարն ուներ 30, Քերիկը՝ 60, Գոնդե-Ջանոն՝ 105, Ղոջանը՝ 50, Սինանը՝ 50, Զիքարլուն՝ 30, Բլեյ-դարը՝ 50, Ջերջըլը՝ 32, Բասորիկը՝ 40 տուն հայ բնակչություն[60]: Գավառակի մյուս բնակավայրերը ունեին մինչև 30 տուն հայություն: Ռ. Գևորգյանը ևս հիշատակում է 1880 թ. տվյալները, իսկ 1914 թ. վերաբերյալ ներկայացնում միայն ընդհանուր տվյալներ, այն է՝ գավառակի 40 բնակավայրերում՝ 5038 հայ բնակիչ, որից կենտրոնական բնակավայրում՝ Էլմետինում՝ 1339 հոգի[61]:

Պատրիարքարանի՝ Թեոդիկի հրատարակած տվյալների համաձայն 1914 թ. դրությամբ Բշերիկի գավառակի այստեղ արդեն հիշատակվող շուրջ 50 բնակավայրերում հաշվվում էր 822

[59] Տե՛ս **Թեոդիկ**, նշվ. աշխ., էջ 368–371: Հանրագումարը կատարվել է մեր կողմից (Ա.Բ.):

[60] Տե՛ս **Սրուանձտեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 232–234:

[61] Տե՛ս **Kevorkian R.**, նշվ. աշխ., էջ 269:

տուն հայ բնակիչ[62]: Տան անդամների թիվը ընդունելով 8-ը (շատ դեպքերում ավելին էր, քան 8-ը)՝ ստացվում է, որ այս գավառակում ապրում էր 6576 հայ բնակիչ: Ռ. Գևորգյանի հրատարակած ցուցակների համաձայն գավառակի կենտրոնական Էլմետին բնակավայրում ապրում էր 1339 հայ, մինչդեռ Թեոդիկի մոտ բերվում է 10 տուն: Տվյալ դեպքում կարելի է ենթադրել, որ Ռ. Գևորգյանի տվյալն ավելի մոտ է իրականությանը, քանի որ խոսքը գնում էր գավառակի կենտրոնական բնակավայրի մասին, որը շրջապատված էր բազմաթիվ գյուղերով, ինչը ենթադրում էր, որ այստեղ ևս պետք է լիներ հայության ոչ պակաս թվաքանակ, քան մյուս բնակավայրերում: Կարելի է ենթադրել, որ Էլմետինում ապրում էր ոչ պակաս քան 1000 հայ բնակիչ, գավառակում՝ շուրջ 7500:

Լճեի գավառակ

Դիարբեքիրի գավառի հյուսիսային գավառակն էր Լճեն: Ըստ Գ. Սրվանձտյանցի այս գավառակում կար 36 հայաբնակ բնակավայր, որոնցից հայաշատ էին հատկապես Լճեն, Օփը, Հարբախնան, Հայնին, Տրնեն, մի քանի այլ բնակավայրեր: Նշված բնակավայրերից գրեթե յուրաքանչյուրն ուներ եկեղեցի: Եկեղեցիներ կային ավելի նվազ հայությամբ բնակավայրերում, օրինակ, Սառնիս գյուղում, որն ուներ 17 տուն հայություն, ըստ Սրվանձտյանցի, կար 4 եկեղեցի՝ Ս. Թովմաս, Ս. Սարգիս, Ս. Հակոբ, Ս. Թորոս, ինչը վկայում է այն մասին, որ ժամանակին

[62] Տե՛ս **Թեոդիկ**, նշվ. աշխ., էջ 374–375: Հանրագումարը կատարվել է մեր կողմից (Ա.Բ.):

բնակավայրն ունեցել է ավելի մեծաթիվ հայություն: Լճեի գավառակում, ըստ Վ. Քինեի, հաշվվում էր 4.910 հայ բնակիչ[63]:

Լճե գավառակի առանձին գյուղախումբ էր կազմում Հայնին, որտեղ ապրում էին հայեր, զազա քրդեր, նաև՝ քրդացած հայեր: Հայնին այն բնակավայրերից էր, որ մեծապես տուժել էր համիդյան կոտորածների ժամանակ: Հայնիում, ըստ Բ. Ժամկոչյանի, որը նշված բնակավայրի վերաբերյալ առանձին հուշամատյանի հեղինակ է, կոտորածների ընթացքում սպանվեց 80 մարդ, հրկիզվեցին 50-ից ավել տներ, ավերվեցին խանութները: Հեղինակի հավաստմամբ, կոտորածներից հետո Հայնիից 100-ից ավել տուն հայեր գաղթեցին Դիարբեքիր, Ֆարղին, այլ բնակավայրեր[64]: Ավելի քան վեց ամիս այստեղ ոչ եկեղեցիներն էին բացվում, ոչ՝ պաշտամունք կատարվում: Ժամկոչյանը նշում է, որ բնակչության թվաքանակի վերաբերյալ հստակ վիճակագրություն չկա, հավելում, որ ենթադրաբար Հայնիում կար 1.500-2.000 տուն բնակչություն, որի կեսը հայեր էին[65]: Ինչ վերաբերում է Հայնի ավանին, ապա ըստ Սրվանձտյանցի 1878թ. դրությամբ այստեղ հաշվվում էր 295 տուն[66], ըստ Թեոդիկի՝ 1914 թ. դրությամբ՝ 260 տուն հայություն[67]:

Թեոդիկի հրատարակած տվյալների համաձայն Լճեի գավառակում բացի կենտրոնական բնակավայրը հիշատակված ևս 13 բնակավայրերում հաշվվում էր 749 տուն հայ[68], մինչդեռ Սրվանձտյանցի հավաքագրած տվյալների համաձայն գավառակում հաշվվում էր 1.099 տուն հայություն[69]: Սրվանձտյանցի կողմից հիշատակված մի շարք բնակավայրեր հատկապես Հայնի և Բեշար նահիեներից, ինչպես օրինակ՝ Տպնե՝ 60, Ռիզ՝ 60, Նորշեն՝ 30, Մրզակ՝ 30, Կարաս՝ 20 տուն հայ բնակչությամբ, այլ բնակավայրեր չեն հիշատակվում Թեոդիկի հրատարակած ցուցակներում: Կարելի է ենթադրել, որ գավառակի որոշ բնակավայրերում հայ բնակչության թվաքանակը որոշակիորեն նվազել էր, սակայն անհասկանալի է, թե ինչպես կարող էր շուրջ 20-60 տուն հայություն ունեցող բնակավայրերում ընդհանրապես հայեր չլինեին, մանավանդ որ եթե համեմատենք երկու տվյալները, ապա երևում է, որ տների քանակը նվազել է չնչին համամասնությամբ: Ակնհայտ է, որ պատրիարքարանի տվյալներում պարզապես բացակայում է Լճեի գավառակում ներառված ավելի քան 10 բնակավայրերի հայ բնակչության թվաքանակը: Միևնույն ժամանակ Թեոդիկը հիշատակում է Լճեի և Հայնիի բնակավայրերից Աչքանն ու Գաթինը, որոնք դժվար է նույնացնել Սրվանձտյանցի հիշատակած բնակավայրերից որևէ մեկի հետ: Ինչ վերաբերում է Ռ. Գևորգյանի հրատարակած ցուցակի տվյալներին, ապա դրանց համաձայն գավառակում հաշվվում էր 35 բնակավայր, որոնք այն բնակավայրերն էին, որ հիշատակված էին Սրվանձտյանցի մոտ: Ռ. Գևորգյանը 1914 թ. դրությամբ նշում է միայն Լճե կենտրոնի հայության թվաքանակը՝ 2.650 մարդ: Ընդհանուր, գավառակում Ռ. Գևորգյանի հրատարակած տվյալների համաձայն ապրում էր 5.980 հայ բնակիչ[70]: Այս գավառակի դեպքում ևս, կարծում ենք, 1914 թ. դրութ-

[63] Տե՛ս **Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 262–263:

[64] Տե՛ս **Ժամկոչեան Բ.**, Հայնի: Տեղագրական, ազգագրական, պատմագրական, Պէյրութ, 1951, էջ 273:

[65] Տե՛ս նույն տեղում, էջ 20:

[66] Տե՛ս **Սրուանձտեանց Գ. վրդ.**, նշվ. աշխ., էջ 238:

[67] Տե՛ս **Թէոդիկ**, նշվ. աշխ., էջ 378:

[68] Տե՛ս նույն տեղում, էջ 377–378:

[69] Տե՛ս **Սրուանձտեանց Գ. վրդ.**, նշվ. աշխ., էջ 237–239: Հանրագումարը կատարվել է մեր կողմից:

[70] Տե՛ս **Kevorkian R.**, նշվ. աշխ., 274:

յամբ բերված պատրիարքարանի տվյալները խիստ թերի են: Նշենք նաև, որ ուսումնասիրող Ս. Կարայանի կատարած հաշվարկների համաձայն, որում նա ներառել է այս կամ այն հիշատակվող բնակավայրերի վերաբերյալ եղած կամ՝ հին, կամ՝ 1914 թ. վերաբերող տվյալներ, եթե դրանք կան, Լճե գավառակում հաշվվում է 13.678 հայ[71]:

Կարծում ենք, որ գավառակում 1915 թ. դրությամբ ապրում էր շուրջ 1.000 տուն հայություն, որից շուրջ 250-ը՝ Լճեում, հետևաբար գավառակի հայ բնակչության թվաքանակը կարելի է հաշվարկել շուրջ 7.500:

Այսպիսով, Դիարբեքիրի գավառը Արևմտյան Հայաստանի հայաշատ գավառներից էր: Գավառի Դիարբեքիր, Սևերեկ, Սլիվան, Բշերիկ, Տերըկ, Լճե գավառակներում հայ բնակչության կենսագործունեության կարևոր ոլորտներն էին երկրագործությունը, արհեստներն ու առևտուրը: Հատկապես խոշոր առևտրական, արհեստագործական կենտրոն էր Դիարբեքիր քաղաքը, որտեղ զարգացած էին մի քանի տասնյակ արհեստներ, արտահանվում էր մեծ թվով արտադրանք:

Տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ Դիարբեքիրի նահանգի նույնանուն գավառի հարյուրավոր հայաբնակ բնակավայրերում XIX դարի վերջերին - XX դարի սկզբներին հայ բնակչության թվաքանակը հիմնականում չէր աճել, ավելին, համեմատաբար փոքր բնակչություն ունեցող գյուղերում այն ավելի շուտ պակասել էր, քան մնացել նույնը, նաև կային բնակավայրեր, որոնք 1914 թ. դրությամբ այլևս հայաբնակ չէին: Բազմաթիվ էին բնակավայրերը, որոնք թեև հայաբնակ, բայց ունեին

[71] Տե՛ս **Karayan S.**, նշվ. աշխ., էջ 283–286:

ընդամենը մի քանի տուն հայ բնակիչ: Միևնույն ժամանակ, տվյալ բնակավայրերում ավելանում էր քուրդ, թուրք բնակչությունը: Նման փոփոխությունների պատճառը նախ համիդյան կոտորածներն էին, նաև՝ նոր կոտորածների վախը: Պակաս կարևոր չէին տնտեսական պատճառները, հայ բնակչության նկատմամբ վարվող հարկային քաղաքականությունը և այլ պատճառներ: Այնուամենայնիվ, բերված տվյալները նաև ցույց են տալիս, որ նշված գավառում հիշատակված հարյուրավոր այլ՝ հայաշատ, հաճախ՝ զուտ հայաբնակ բնակավայրերը 1914 թ. դրությամբ մնում էին հայության կենսագործունեության կարևոր օրրաններ: Դիարբեքիրի կամ Տիգրանակերտի նահանգի նույնանուն գավառում 1914 թ. դրությամբ, համաձայն մեր հաշվումների, ապրում էր շուրջ 67.000 հայ բնակիչ:

Арпине Р. Баблумян, *Институт истории НАН РА, к.и.н.*, **Армянское население провинции Диарбекир (Тигранакерт) Западной Армении в конце XIX – начале XX веков.**

Диарбекир был одной из шести провинций Западной Армении. В конце XIX – начале XX веков провинция Диарбекир была разделена на три санджака (уезд) (административная единица Османской империи) – Диарбекир, Аргана Маден и Мардин. В статье рассматривается историко-демографическая картина армянского населения в населенных пунктах санджака Диарбекир, который в свою очередь, был разделен на казы Диарбекир, Северек, Сливан, Бшерик, Терек, Лдже. Каза Диарбекир, особенно город Диарбекир, был известен как важный центр сельскохозяйственной продукции, а также ремесел и торговли. По нашим подсчетам, в 1914 г. в городе проживали около 17.000 армян.

Важными центрами жизнедеятельности армян санджака Диарбекир были также города Северек, Лдже, Нпркерт, другие поселения.

В конце XIX – начале XX веков численность армян во многих населенных пунктах санджака Диарбекир не выросло, более того, в деревнях с меньшим населением оно скорее уменьшилось. Было много поселений, в которых проживало всего несколько семей армян. Причиной этого были, прежде всего, гамидовские массовые истребления, после – страх новой резни. Экономические причины, налоговая политика в отношении армянского населения, другие причины также важны. В то же время в этих поселениях росло курдское и турецкое население.

По нашим подсчетам, в одноименном санджаке (уезд) провинции Диарбекир (Тигранакерт) проживало около 67 тысяч армян.

Arpine R. Bablumyan, *Institute of History of the NAS RA, Candidate of Sciences in History,* **The Armenian population of Diarbekir (Tigranakert) sanjak of Diarbekir (Tigranakert) province of Western Armenia at the end of the 19th – beginning of the 20th centuries.**

Diarbekir (Tigranakert) was one of the six provinces of Western Armenia, which in its turn was divided into three sanjaks (one of the administrative divisions in the Ottoman Empire, smaller than vilayets – provinces) – Diarbekir, Arghana Maden and Mardin. The article refers to the historical-demographic image of the Armenian population of Diarbekir sanjak in the late 19th and the early 20th centuries. Diarbekir sanjak was in itself divided into Diarbekir,

Severek, Slivan, Bsherik, Terik, Lje kazas, mainly including areas of historic Aghdznik. Diarbekir kaza, especially the city of Diarbekir, was known as an important center of cultivation of agricultural products, as well as handicrafts and trade. We can assume that there were about 17,000 Armenian population in this settlement in 1914. Apart from Diarbekir city, other settlements such as Severek, Lje, Nprkert and others were important centers for Armenians.

In the late 19th and the early 20th centuries, the number of Armenians in the hundreds of Armenian-populated settlements of Diarbekir sanjak did not increase, moreover, in the villages with smaller population, it decreased or remained the same. There were many settlements that had only few families of Armenians. The reason for such changes was first of all the Hamidian Massacres, also the fear of new massacres. The economic reasons, the tax policy towards the Armenian population and other reasons could not be underestimated. At the same time, the Kurdish and Turkish population was increasing in these settlements.

Thus, according to our calculations there were about 67,000 Armenians living in Diarbekir sanjak of Diarbekir (Tigranakert) province.

ԿԱՐԵՆ Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԼԻՑՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2000-2003 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Բանալի բառեր՝ Իրանի հայ համայնք, Հայոց ցեղասպանություն, ոգեկոչման արարողություն, տարելից, խորհրդարան, պատգամավոր:

Հայոց ցեղասպանության տարելիցներին նվիրված հիշատակի արարողությունները Իրանի հայ համայնքում կազմակերպվում են յուրաքանչյուր տարվա ապրիլ ամսին: Թեմական խորհուրդը ստեղծում է հատուկ մարմին՝ Կենտրոնական հանձնախումբ, որը համայնքի կողմից ստանում է լիազորություն՝ կազմակերպելու ոգեկոչման արարողությունները:

Հանձնախումբը յուրաքանչյուր տարի ընտրում է որևէ կարգախոս Թուրքիայից պահանջատիրության և Հայ դատի արդար լուծման համատեքստում, որի շրջանակներում էլ ընթանում են աշխատանքները:

Ի տարբերություն սփյուռքի մի շարք հայ գաղթօջախների, իրանահայերը որևէ լուրջ քայլ չեն կատարել իրանական խորհրդարանում՝ մեջլիսում, Հայոց ցեղասպանության ճանաչման նախագիծ առաջ քաշելու ուղղությամբ, գիտակցելով, որ ներկա պայմաններում կառավարությունը քաղաքական պատճառներով (սահմանակից Թուրքիայի հետ հարաբերությունները

չվատթարացնելու միտումով) պատրաստ չէ ընդառաջ գնալու այդ քայլին: Թեև պետք է խոստովանել, որ տարբեր ժամանակներում մեջլիսի մի շարք հայ պատգամավորներ բարձրացրել են այդ հարցը[1]:

Հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանության հիշատակի արարողությունների համատեքստում կարևորվում է հազարավոր հայերի մասնակցությամբ քայլերթը Թեհրանի կենտրոնում, որի ընթացքում հնչում են Թուրքիային ուղղված բողոքի խոսքեր: Թյուրքախոս բնակչությամբ Ատրպատականի փոքրաթիվ հայ համայնքում[2] հիշատակի արարողությունը իրականացվում է խաչքար-հուշակոթողների մոտ:

Հայոց ցեղասպանության 85-րդ տարելիցին Թավրիզում տեղի են ունեցել ոգեկոչման արարողություններ[3], իսկ Թեհրանում տեղի ունեցած երթին հազարավոր հայեր իրենց բողոքի ձայնն են բարձրացրել ՄԱԿ-ի գասենյակի առջև՝ պահանջելով ճանաչել Հայոց ցեղասպանությունը[4]:

Նույն հարցով ապրիլի 30-ին Իրանի կառավարությանը կոչ է արել խորհրդարանում հարավային իրանահայության պատգամավոր Արտավազդ Բաղումյանը[5]:

Սպահանի պետական համալսարանի «*Ղալամ*» ուսանողական պարբերաթերթը թիվ 87 համարում, անդրադառնալով ապրիլի 19-ին համալսարանում Նոր Ջուղայի ոգեկոչման հանձնախմբի կազմակերպած դասախոսությանը, որին մասնակցել է

[1] Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 82:

[2] Այսօր Թավրիզ քաղաքում հայ բնակչությունը խիստ սակավաթիվ է, մինչև 1000 հոգի, որը կազմում է իրանահայության մոտ 2%-ը (Կ.Մ.):

[3] Տե՛ս «Ալիք» Թեհրան, 01.06.2000:

[4] Տե՛ս «Ալիք», 25.04.2000:

[5] Տե՛ս «Ալիք», 04.05.2000:

շուրջ 200 ուսանող, գրել է. «*Իրանը դեռևս պաշտոնապես չի դատապարտել Հայոց ցեղասպանությունը*»[6]:

Հիշարժան է պարսիկ գիտաշխատող *Քավե Բայաթի*՝ Հայոց ցեղասպանության ճանաչման և ժխտման հարցերով զեկուցումը 2001 թ. ապրիլի 17-ին ՀՈՒՍԿ-ի (Հայկական հարցերի ուսումնասիրման կենտրոն) և Հայ հասարակական միության «Հայ ակումբ» սրահում տեղի ունեցած դասախոսությունը[7]: Ահա թե ինչ է գրել այդ մասին «Արաքս» շաբաթաթերթը. «*Ձեռնարկը հատկապես շահավետ էր նրանով, որ եղեռնի մասին խոսվում էր պարսկերենով՝ Խորհրդարանի պատգամավորների եւ մեծ թվով պարսիկ հյուրերի համար*»[8]:

Սակայն ոչ բոլոր ձեռնարկներն է, որ հաջողվում է: 2001 թ. ապրիլի 20-ին Հայ ակումբի սրահում նախատեսված «*1915-ի ապրիլ. Հայացք դրսից*» խորագրով գիտաժողովին պետք է մասնակցեին խորհրդարանի պատգամավորներ, մտավորականներ ու հայ համայնքի ներկայացուցիչներ[9]: Հրավիրյալների չներկայանալու պատճառով այդ թեմատիկայով առաջին գիտաժողովը տեղի չունեցավ:

Մեծ Եղեռնի 86-րդ տարելիցի կապակցությամբ համայնքային միությունները Թեհրանում կազմակերպել են շուրջ 20 ձեռնարկներ, որից 10-ը՝ դասախոսություն, նույնքան էլ՝ գեղարվեստական ծրագրեր[10]: Նշելի է, որ ապրիլի 21-ին Սպահանի պետական համալսարանի հայագիտական բաժնի ուսանողների և Մեծ եղեռնի ոգեկոչման հանձնախմբի նախաձեռնությամբ կազ-

[6] «Այիք», 14.05.2000:
[7] Տե՛ս նույն տեղում, 18.04.2001:
[8] «Արաքս», Թեհրան, ԺԵ տարի, թիվ 14–15 (97–98), մարտ-ապրիլ, 2001, էջ 7:
[9] Տե՛ս նույն տեղում, էջ 6:
[10] Տե՛ս «Այիք», 13.04.2001:

մակերպված դասախոսությանը ելույթ է ունեցել Թեհրանից հայտնի մտավորական Քավե Բայաթը[11]:

Պաշտոնական հայտարարության բացակայության սովորական դարձած պայմաններում ապրիլի 23-ին Իսլամական խորհրդարանում ելույթ է ունեցել հարավային իրանահայության պատգամավոր Ժորժիկ Աբրահամյանը՝ բարձրացնելով Հայոց ցեղասպանության հարցը Պաղեստինի հակամարտության համատեքստում[12]:

Նշելի է, որ 2001 թ. ապրիլի 24-ին Նոր Ջուղայում բողոքի քայլարշավին մասնակցել է 3.000 հայորդի[13]: Ինչ վերաբերում է Թավրիզի հայ համայնքին, ապա ապրիլի 26-ին Վան-Վասպուրական պատմական հարցերի կենտրոնում մեծարվել են վերապրողները, իսկ Հայ ճարտարապետների և ճարտարագետների միության նախաձեռնությամբ ապրիլի 25-ին կազմակերպվել է «Հայկական ճարտարապետության եղեռն» թեմայով ցուցահանդես[14]:

Ցեղասպանության հիշատակման արարողությունները լուսաբանել է իրանական մամուլը: «*Համբասթեգի*» և «*Էնթեխաբ*» օրաթերթերը մեծ տեղ են հատկացրել քայլարշավի ավարտին ընթերցված բանաձևին, «*Հայաթէ նօ*» օրաթերթն էլ ներկայացնելով Մեծ եղեռնի մասին՝ ավելացրել է, որ դրա հեղինակների դատապարտվելու դեպքում նույնը չէր կրկնվի տարբեր վայրերում: «*Աբրար*» օրաթերթը գրել է. «*Հազարավոր մարդիկ դատապարտեցին Թուրքիայի և սիոնիստական վարչակարգի ոճրագործությունները հայերի և պաղեստինցիների դեմ: Համաշխ-*

[11] Տե՛ս «Այիք», 22.04.2001:
[12] Տե՛ս նույն տեղում, 28.04.2001:
[13] Տե՛ս նույն տեղում, 25.04.2001:
[14] Տե՛ս նույն տեղում, 30.04.2001:

արհային բողոքը Հայոց ցեղասպանության դեմ կարգելեր XX դարում ցեղասպանությունների կրկնումը»: Ըստ թերթի՝ թուրքական և սիոնիստական վարչակարգերը դիտարկվել են հավասար չարիք: Մինչդեռ *«Ռեսալաթ»* օրաթերթը գրել է. *«Իրանահայությունը Թուրքիայից պահանջում է, որ ստանձնի ցեղասպանության իր պատասխանատվությունը»*[15]:

Ուշագրավ է, որ ապրիլի 23-ին Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի բակում 24 ժամով հացադուլի նստած հայորդիները կարգախոսներով միացել են բողոքի համահավաքի մասնակիցներին: Ընդունվել է օրվա բանաձևը, որով կոչ է արվել Թուրքիային՝ Հայոց ցեղասպանության պաշտոնապես ճանաչում, վնասների հատուցում և արցախահայության արդար պահանջների զորակցում: Բանաձևի 4-րդ և 5-րդ կետերով ներկաները Իրանից ակնկալել են նեցուկ կանգնել Հայոց ցեղասպանության ճանաչմանը և միջազգային ատյաններում պաշտպանել հայ ժողովրդի արդար իրավունքները[16]: Ապրիլի 26-ին էլ Նոր Ջուղայի «Արարատ» միության սրահում տեղի է ունեցել պարսկերենով դասախոսություն, որն «Ալիք» օրաթերթի գնահատմամբ *«Կարելի է աննախադեպ համարել»*[17]: Միջոցառմանը համայնքային գործիչներից բացի մասնակցել են հայկական դպրոցների պարսիկ տեսուչները, պետական կառույցներից հրավիրված ներկայացուցիչները, սակայն չեն մասնակցել:

Հիշարժան են Շահինշահիրի Ս. Վարդանանց դպրոցի սրահում տեղի ունեցած ոգեկոչման ծրագրերը, այդ թվում՝ ապրիլի 22-ին շրջանի պարսիկ ուսուցիչների համար տեղի ունեցած դասախոսությունը, որի բանախոսներն են եղել համայնքային գործիչներ Ազատ Մաթյանը և Սաքո Մկրտչյանը: Ձեռնարկին հրավիրվել են շուրջ 300 հոգի, սակայն կրկին ոչ բոլոր հրավիրյալներն են մասնակցել: Ըստ էության նկատելի է եղել որոշակի զգուշավորություն: Մինչդեռ երիտասարդների մասնակցությամբ այստեղ ևս տեղի է ունեցել հացադուլ[18]:

Հայոց ցեղասպանության թեմայի վերաբերյալ Իրանում անհամեմատ մեծ լսարան կարող է ապահովել միայն հեռուստատեսությունը: Ահա, թե ինչու կարևորում ենք 2001 թ. մայիսի 19-ին Իրանի հեռուստատեսության 4-րդ ալիքից Հայոց ցեղասպանության մասին BBC-ի արտադրած վավերագրական ֆիլմի սփռումը[19]:

Ինչ վերաբերում է Մեծ եղեռնի 87-րդ տարելիցի կապակցությամբ համայնքում կազմակերպված ոգեկոչման արարողություններին, ապա միայն Թեհրանում կազմակերպել են թվով 15 տարբեր ձեռնարկներ[20]:

Հատկանշական է, որ 2002 թ. ապրիլի 24-ին Թեհրանում տեղի ունեցած քայլարշավի ավարտին հյուսիսային իրանահայության պատգամավոր Լևոն Դավթյանն ընթերցել է Իսլամական խորհրդարանի 30 պատգամավորի կողմից ստորագրված նամակը, որտեղ նրանք կոչ են ուղղել Իրանի Իսլամական Հանրապետությանը՝ ճանաչել 1915 թ. Հայոց ցեղասպանությունը[21]: Այդուհանդերձ պետք է նշել, որ խորհրդարանը մեծ դեր չի խաղում Իրանի քաղաքական կյանքում: Քաղաքական հիմնական

[15] «Ալիք», 13.05.2001:
[16] Տե՛ս նույն տեղում, 13.05.2001:
[17] Նույն տեղում, 13.05.2001:

[18] Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 15.05.2001:
[19] Տե՛ս նույն տեղում, 20.05.2001:
[20] Տե՛ս նույն տեղում, 18.04.2002:
[21] Տե՛ս նույն տեղում, 25.04.2002:

լծակները գտնվում են երկրի առաջնորդի, ինչպես նաև հանրապետության նախագահի ձեռքում[22]:

Հարկ է նշել, որ վերոնշյալ ստորագրահավաքին փաստորեն մասնակցել է Իսլամական խորհրդարանի մոտ 10%-ը (խորհրդարանն ունի 290 պատգամավոր): Ըստ այդմ կարելի է փաստել ղեկավարության դիրքորոշումը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում:

Հետաքրքիր է, որ 2002 թ. ապրիլի 28-ին Սպահանի պետական համալսարանում կազմակերպված քննարկման ընթացքում, որին բանախոսությամբ հանդես է եկել «Ալիք» օրաթերթի պատասխանատու խմբագիր Սեդա Դավթյանը, շուրջ 400 պարսիկ ուսանողների անունից դատապարտվել է Հայոց ցեղասպանության իրողությունը և պահանջվել է, որ այն պաշտոնապես ճանաչվի Իսլամական խորհրդարանի կողմից՝ որպես արդար դատ ունեցող ազգերի պաշտպան երկիր[23]:

Հիրավի, հանրային ընկալումներում կարևոր են հարցի վերաբերյալ պարսիկ մտավորականների տեսակետները: ՀՈՒՍԿ-ի նախաձեռնությամբ և Թեհրանի Հայոց հասարակական միության համագործակցությամբ տեղի ունեցած «Հոգեմտավոր արժեքների կորուստ» թեմայով քննարկմանը բանախոսությամբ հանդես եկած թարգմանիչ Ահմադ Նուրիզադեն, մասնավորապես, անդրադարձել է հայ մտավորականության եղեռնի հարցին[24]: Հարկ է նշել, որ 2003 թ. ՀՈՒՍԿ-ը, որտեղ գրանցված են

[22] Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, էջ 81:
[23] Տե՛ս «Ալիք», 29.04.2002:
[24] Տե՛ս նույն տեղում:

500 իրանցի բարեկամներ, կազմակերպում է «Հայ դատն այսօր» խորագրով խորհրդաժողով[25]:

Հայոց ցեղասպանության 88-րդ տարելիցի կապակցությամբ համայնքում կազմակերպվել է 17 միջոցառում[26]: Նշելի է, որ 1992 թ. և 2009 թ. Կիլիկիո կաթողիկոսության ազգային ընդհանուր ժողովներին մասնակցած և վարչության անդամ ընտրված Լևոն Դավթյանը[27]կրկին դիմել է խորհրդարանին՝ կոչ անելով Իրանի կառավարությանը պաշտոնապես ճանաչելու Հայոց ցեղասպանությունը:

Ապրիլի 24-ին թեհրանահայության քայլարշավին մասնակցել է ավելի քան 20.000 հայորդի[28]: Կիլիկիո կաթողիկոսության միաբան Տ. Գեղարդ աբդ. Քյուսպեկյանի խոսքով՝ «*Ապրիլի 24-ի քայլարշաւը մեզի համար ուխտագնացութիւն էր եւ փորձեցինք մեր ձայնը միացնելով թեհրանահայութեանը՝ հասցնել ի լուր աշխարհի*»[29]:

Համեմատելով նախորդ տարիների հետ՝ հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանության 88-րդ տարելիցին նվիրված ծրագրերը շատ քիչ արձագանք են գտել իրանական մամուլում: Թեհրանում տեղի ունեցած քայլարշավի մասին անդրադարձել է «*Համշահրի*» օրաթերթը ապրիլի 25-ի համարում՝ մեջբերելով պատգամավոր Լևոն Դավթյանի խոսքից մի հատված՝ «*Համահավաքը ոչ միայն մի քայլ է հայերի իրավունքների իրականացման առումով, այլև խիստ ազդեցիկ է փարածաշրջանում օտարների*

[25] Տե՛ս **Բաղալյան Գ.**, Իրան հանրագիտարան, Երևան, 2011, էջ 497:
[26] Տե՛ս «Ալիք», 21.04.2003:
[27] Տե՛ս «Իրանահայոց հանրագիտարան», Կազմեց **Ժանետ Տիգրանուհի Լազարյանը**, Երևան, 2012, էջ 65:
[28] Տե՛ս «Ալիք», 26.04.2003:
[29] Նույն տեղում, 12.05.2003:

միջամտությունը կանխելու համար»[30]: Նմանօրինակ անդրադարձ են կատարել «*Համբասթեգի*» և «*Աբրար*» օրաթերթերը՝ ապրիլի 26-ի համարներում[31]: Մինչդեռ «*Էրթեմադ*» օրաթերթն իր ապրիլի 22-ի համարում տպագրել է իբր Ատրպատականի գրողների, թերթերի և խմբակցությունների բաց նամակն՝ ուղղված երկրի պատասխանատուներին, որում հայերին ամբաստանել է, թե իբր վերջիններս կոտորել են 1,5 մլն ադրբեջանցի Ուրմիայում, Խոյում և Սալմաստում: Մինչդեռ հայտնի է, որ 1915–1916 թթ. տագնապալից օրերին, երբ Ատրպատական ներխուժած թուրքական բանակը սպառնալիք էր ստեղծել հայ բնակչության համար, Պարսկահայ խորհուրդը փրկարար դեր ստանձնեց վտանգված վայրերի հայ ազգաբնակչության համար[32]: Այդ նամակի հեղինակները երկրի իշխանություններից պահանջել են ապրիլի 24-ին իրենց ևս իրավունք տալ Թեհրանում ՄԱԿ-ի գրասենյակի դիմաց նստացույց անել:

«*Ֆարհանգե աշթի*» օրաթերթն էլ ապրիլի 26-ի համարում տարածել է ապատեղեկատվություն, թե իբր երկրի հյուսիս-արևմուտքում հայերը բախվել են ազերիների հետ, որի հետևանքով սպանվել է մեկ ազերի, և բախումն ընդլայնվել է Թեհրանում:

Ի պատասխան մի խումբ ազերիների կողմից պետական այրերին ուղղված Հայոց ցեղասպանությունը մերժելու նպատակով բաց նամակի, «*Թոսեէ*» օրաթերթը հրապարակել է «Ազգայնական հակումներ՝ կրոնների հակամարտության դրոշի ներքո» խորագրով հոդվածը՝ նշելով, որ բաց նամակում խոսվել է այն մասին, որ ապրիլի 24-ին իրանահայության բողոքի քայլարշավները անարգանք են մուսուլման Թուրքիային: Սակայն նման մոտեցումները միանգամայն անհիմն համարելով՝ հոդվածագիրը հիշեցրել է, որ իրանահայությունը որպես Իրանի միատարր ժողովրդի մի մասը՝ Իրանի դեմ Իրաքի 8-ամյա պատերազմի ընթացքում, երբ պատերազմում էին երկու իսլամական երկրներ, տվել է բազմաթիվ նահատակներ:

«*Նավիդե Ազարբայջան*» պարբերաթերթի հոդվածագիր Ջամալ Այրոմլուն քննադատել է ՀՅԴ, Հնչակյան և Ռամկավար կուսակցություններին՝ հայերին անվանելով «հակաթուրք հոգեկան հիվանդությամբ տառապողներ»: Ակնհայտ է, որ վերոնշյալը պանթուրքական քարոզչության դրսևորում է եղել:

Հարկ է նշել, որ Ատրպատականը որպես թիրախ ընտրած պանթուրքական կազմակերպությունները ունեն խիստ ընդգծված հակահայկական մոտեցումներ: Նրանք ոչնչով չեն տարբերվում Ադրբեջանում և Թուրքիայում գործող պանթուրքական կազմակերպություններից[33]:

Ամփոփելով նշենք, որ հայկական դպրոցների պարսիկ տեսուչների մասամբ ներգրավումը և ուսանողների դեպքում լիովին մասնակցությունը հիշատակի արարողություններին ցույց է տվել, որ եթե առաջին խումբը, որպես պետական աշխատակից, ցուցաբերել է որոշակի զգուշավորություն, ապա երկրորդ խումբը՝ երիտասարդները, ավելի անկաշկանդ դիրքորոշում են ունեցել՝ մասնակցելով ստորագրահավաքին:

Ադրբեջանական քարոզչամեքենային ինչ որ չափով հաջողվել է կազմակերպել հակահայկական քարոզչություն Հայոց ցեղասպանության 88-րդ տարելիցին:

---

[30] Նույն տեղում, 07.05.2003:
[31] Տե՛ս նույն տեղում:
[32] Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Իրանն այսօր, Երևան, 1999, էջ 291:

[33] Տե՛ս **Մկրտչեան Ս.**, Պանթիւրքական հոսանքները ժամանակակից Իրանում, Երեւան, 2018, էջ 143:

Карен Г. Мкртчян, *Институт истории НАН РА, к.и.н.,* **Упоминание годовщины Геноцида армян в армянской общине Ирана в 2000-2003 годах.**

В статье показывается, что организованные армянской общиной Ирана различные мероприятия по упоминанию годовщин Геноцида армян, находят свой широкий отклик в общественном сознании иранского общества. Отмечается, что депутаты-армян Иранского меджлиса поднимают проблему Геноцида в контексте израило-палестинского конфликта, и что вопрос начинает «получать гражданство».

Karen G. Mkrtchyan, *Institute of History of the NAS RA, Candidate of Sciences in History,* **Commemoration anniversaries of the Armenian Genocide in the Armenian community of Iran in 2000-2003.**

It is shown in the article that various events organized by the Armenian community of Iran to commemorate the anniversaries of the Armenian Genocide find their wide response in the public consciousness of the Iranian society. It is noted that the deputies of the Armenians of the Iranian Majlis raise the problem of the Genocide in the context of the Israeli-Palestinian conflict, and that the issue is beginning to "obtain citizenship".

ՀՌԻՓՍԻՄԵ Է. ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ 17-ՐԴ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Բանալի բառեր՝ Ֆրանկոֆոնիա, ՖՄԿ (Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն), գագաթնաժողով, Երևան, Հայաստան, միջոցառում, բանաձև:

1970 թ. հիմնադրված Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը (ՖՄԿ[1]) ֆրանսերենի և համընդհանուր արժեքների ամրագրման ու տարածման միջազգային հաստատություն է, որում ընդգրկված են 54 լիիրավ, 7 ասոցացված և 27 դիտորդի կարգավիճակ ունեցող պետություններ: Այս երկրներից 32-ում ֆրանսերենն ունի պաշտոնական լեզվի կամ երկրորդ պաշտոնական լեզվի կարգավիճակ: ՖՄԿ-ում ընդգրկված երկրների բնակչության ընդհանուր թիվը կազմում է 900 մլն, որից 274 մլն-ը ֆրանկոֆոն են: ՖՄԿ-ում ներգրավված երկրները սփռված են աշխարհի հինգ մայրցամաքներում:

Նշենք, որ ՄԱԿ-ի անդամ երկրների մեկ երրորդից ավելին անդամակցում է այս կազմակերպությանը[2]:

[1] Ֆրանսերենով անվանումը՝ Organisation Internationale de la Francophonie, կարգախոսը՝ égalité, complémentarité, solidarité, գագաթնաժողովները՝ Sommet de la francophonie (Հ.Վ.):

[2] Տե՛ս ՀՀ ԱԳՆ, https://www.mfa.am/hy/international-organisations/8 (05.02.2021):

Հայաստանի Հանրապետությունը ՖՄԿ-ում դիտորդի կարգավիճակ է ձեռք բերել 2003 թ. Ուագադուգուի, ասոցացված անդամի կարգավիճակ 2008 թ. Քվեբեկի, լիիրավ անդամի կարգավիճակ 2012 թ. Քինշասայի գագաթնաժողովում՝ դառնալով ՖՄԿ 54-րդ անդամ-երկիրը: ՖՄԿ 17-րդ գագաթնաժողովը 2018 թ. անցկացվել է Հայաստանում, որի խորագիրն էր «Ապրել միասին՝ հարգելով համերաշխությունը, մարդասիրական արժեքներն ու բազմազանությունը՝ իբրև խաղաղության և բարօրության հիմք ֆրանկոֆոն տարածաշրջանում»: Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի շրջանակներում կայացած միջոցառումները Հայաստանում մեկնարկել են հոկտեմբերի 7-ից, իսկ բուն գագաթնաժողովը կայացել է հոկտեմբերի 11-12-ին:

Կազմակերպության կարգախոսն է հավասարություն, փոխլրացում, համերաշխություն: Կազմակերպությունը, սկզբում ձևավորվելով որպես փոքրիկ ակումբ հյուսիսային ֆրանսախոս երկրներում, դարձել է կարևոր միջազգային կառույց, որն ունի մշակութային, գիտական, տնտեսական, արդարադատության ու խաղաղության հարցերով բազմաթիվ մասնաճյուղեր անդամ երկրներում:

ՖՄԿ գործունեության հիմքն է հանդիսանում աջակցությունն անդամ երկրների կողմից որդեգրած քաղաքականության ամրապնդմանը և համագործակցության բազմակողմանի ծրագրերի իրականացումը: ՖՄԿ գերակայությունների և հիմնական գործողությունների առանցքն են հանդիսանում.

- ժողովրդավարության, մարդու իրավունքների առաջխաղացմանն ուղղված արժեքների ամրապնդումը,
- խաղաղության ապահովումը, հակամարտությունների կանխարգելումը,

- կառավարումը և խնդիրների լուծումը,
- ֆրանսերեն լեզվի, լեզվա-մշակութային բազմազանության առաջխաղացումը,
- մշակութային և քաղաքակրթական երկխոսությունը,
- հանրակրթության ու բարձրագույն ուսուցման, գիտության աջակցությունը,
- Ֆրանկոֆոնիայի անդամ պետությունների միջև համագործակցության զարգացումը՝ ի շահ բնապահպանական հիմունքներով այդ երկրների զարգացման և ժողովուրդների միջև համերաշխության ապահովման[3]:

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ պետությունների և կառավարության ղեկավարների հանդիպումները Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովների շրջանակում տեղի են ունենում 1986 թ. ի վեր և հրավիրվում են երկու տարին մեկ անգամ:

Գագաթնաժողովներում քննարկվում են միջազգային քաղաքականությանը, համաշխարհային տնտեսությանը, ֆրանկոֆոնիայի շրջանակներում համագործակցությանը, մարդու իրավունքներին ու կրթությանը, մշակույթին ու ժողովրդավարությանն առնչվող հարցեր: Գագաթնաժողովների ընթացքում.

- սահմանում են Ֆրանկոֆոնիայի կազմակերպման կողմնորոշումները,
- ընդունում են բանաձևեր, որոնք անհրաժեշտ են Ֆրանկոֆոնիայի պատշաճ գործունեության և դրա նպատակների իրականացման համար,

[3] ՖՄԿ պաշտոնական կայք՝ https://www.francophonie.org/node/81 (05.02.2021):

➢ ընտրվում է Ֆրանկոֆոնիայի կազմակերպության գլխավոր քարտուղարը,

➢ որոշում են Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության նոր լիիրավ, ասոցացված անդամների կամ դիտորդ-անդամների ընդունելությունը

Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովները 1986–2018 թթ.

Գագաթն աժողով	Տարեթիվը	Քաղաքը	Պետությունը
I	(1986)	Վերսալ	Ֆրանսիա
II	1987, սեպտեմբերի 2–4	Քվեբեկ	Կանադա
III	1989, մայիսի 24–25	Դակար	Սենեգալ
IV	1991, նոյեմբերի 19–21	Փարիզ	Ֆրանսիա
V	1993, հոկտեմբերի 16–18	Պորտ Լուի	Մավրիկիոս
VI	1995, դեկտեմբերի 2–4	Կոտոնու	Բենին
VII	1997, նոյեմբերի 14–15	Հանոյ	Վիետնամ
VIII	1999, սեպտեմբերի 3–5	Մոնկտոն	Կանադա
IX	2002, հոկտեմբերի 18–20	Բեյրութ	Լիբանան
X	2004, նոյեմբերի 26–27	Ուագադուգու	Բուրկինա Ֆասո
XI	2006, սեպտեմբերի 28–29	Բուխարեստ,	Ռումինիա
XII	2008, հոկտեմբերի 17–19	Քվեբեկ[4]	Կանադա
XIII	2010, հոկտեմբերի 22–24	Մոնտրյո	Շվեյցարիա
XIV	2012, հոկտեմբերի 12–14	Կինշասա	Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն
XV	2014, նոյեմբերի 29–30	Դակար	Սենեգալ
XVI	2016, նոյեմբերի 15–20	Անտանանարիվու	Մադագասկար
XVII	2018 հոկտեմբերի 11-12	Երևան	Հայաստանի Հանրապետություն

Մադագասկարի մայրաքաղաք Անտանանարիվոյում 2016 թ. տեղի ունեցած Ֆրանկոֆոնիայի 16-րդ գագաթնաժողովում, ՀՀ նախօրոք ներկայացրած հայտի համաձայն, անդամ երկրները միաձայն որոշում են ընդունել 2018 թ. Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության XVII գագաթնաժողովն անցկացնել Հայաստանում: Անտանանարիվուի գագաթնաժողովում ՀՀ ԱԳ նախարար Է. Նալբանդյանի կողմից ընթերցվել է ՀՀ Նախագահի ուղերձը, որում նշված էր.

«Հայաստանի և հայ ժողովրդի համար մեծ պատիվ է հյուրընկալել Ֆրանկոֆոնիայի բարձրագույն հանդիպումը: Սա վկայությունն է մեր երկրի հանդեպ դրսևորված վստահության և համերաշխության, որը կազմակերպությանն իր անդամակցությանը հաջորդած տարիների ընթացքում կարևոր ներդրում է ունեցել ֆրանկոֆոնիայի արժեքների տարածման գործում: Այս որոշումը նաև կարևոր ուղերձ է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բոլոր ֆրանկոֆոն երկրներին, որոնց համար առաջիկա գագաթնաժողովն առիթ է հանդիսանալու կրկին արժևորել Ֆրանկոֆոնիան մեր տարածաշրջանում: Մենք հաստատակամ ենք ապահովելու Ֆրանկոֆոնիայի այս կարևոր իրադարձության հաջողությունը: Մեր երկիրը կգործադրի բոլոր ջանքերը բարձր մակարդակով այն անցկացնելու՝ դրանով իսկ տոնելով նաև Կազմակերպությանը Հայաստանի անդամակցության տասնամյակը: Այսօր մենք հանձնառություն ենք ստանձնում՝ լավագույնս կազմակերպելու Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովը»[5]:

2018 թ. Հայաստանում պատմական նշանավոր իրադարձություններով հագեցած տարի էր՝ Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի առաջին Հանրապետության 100-ամյակ, Երևանի հիմնադրման 2800-ամյակ: Հյուրընկալելով Ֆրանկոֆոնիայի

[4] Անցկացվել է Քվեբեկի հիմնադրման 400-րդ տարելիցի տոնակատարության շրջանակներում (Հ.Վ.):

[5] https://www.mfa.am/hy/press-releases/2016/11/27/summit-fr-arm/6709 (24.06.2021):

17-րդ գագաթնաժողովը՝ մայրաքաղաք Երևանն իր հազարամյա պատմության էջերը հարստացրեց ևս մեկ բացառիկ ու պատմական իրադարձությամբ: Միջոցառումը բացառիկ էր իր տեսակով, քանի որ պետությունների ու կառավարությունների ղեկավարների ներկայացուցչական մակարդակով ու ձևաչափով միջոցառումն ամենամասշտաբայինն էր:

Հայաստանի Հանրապետությունը, դառնալով Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի կազմակերպող երկիր, ստանձնեց գագաթնաժողովի նախագահությունը մինչև 2020 թ.:

Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի անցկացումը Երևանում փաստեց Հայաստանի՝ Ֆրանկոֆոնիայի և նրա արժեքների ուղղությամբ ծավալած գործունեության ճանաչումը: Գագաթնաժողովը տեղի ունեցավ Երևանի Կ. Դեմիրճյանի անվան Մարզահամերգային համալիրում, մի վայրում, ուր դեռևս 2015 թ. հոկտեմբերին Հայաստանն արդեն հյուրընկալել էր Ֆրանկոֆոնիայի 31-րդ նախարարական համաժողովը: Պետական բոլոր հաստատությունները մոբիլիզացվել էին՝ բարձր մակարդակով կազմակերպելու Ֆրանկոֆոնիայի և Հայաստանի համար առաջնային կարևորություն ունեցող այս միջոցառումը: Երևանի թանգարանները, համերգային սրահները, հյուրանոցները, ռեստորաններն ու ծառայությունները լրջորեն նախապատրաստվեցին հյուրընկալելու ֆրանկոֆոն տարածության տարբեր մշակույթներ ներկայացնող բազմաթիվ այցելուներին:

Երևանյան գագաթնաժողովի խորագիրն էր **«Ապրել միասին՝ հարգելով համերաշխությունը, մարդասիրական արժեքներն ու բազմազանությունը՝ իբրև խաղաղության և բարգավաճման հիմք ֆրանկոֆոն տարածաշրջանում»**: Համընդհանուր արժեքների վրա խարսխված այս խորագիրը հնարավորություն տվեց արտացոլել Ֆրանկոֆոնիայում խաղաղությունը, համերաշխությունը և զարգացումը:

Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի տարբերանշան ընտրվեց նուռը՝ ի նշան ֆրանկոֆոն ողջ տարածքի խաղաղության և բարգավաճման: Նուռը հանդիսանում էր գագաթնաժողովը հյուրընկալող երկրի՝ Հայաստանի խորհրդանիշերից մեկը:

Գագաթնաժողովի նախապատրաստական աշխատանքների շրջանակում 2018 թ. հոկտեմբերի 4-ին Մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ պաշտոնական պատվիրակություններին դիմավորելու փորձնական արարողություն, որում ներգրավված էին ոստիկանության և անվտանգության աշխատակիցներ, ՊՆ պատվո պահակախումբը, ԱԳՆ աշխատակիցները: Փորձին ներկա էին ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, ՀՀ ԱԳՆ գլխավոր քարտուղար Վահագն Մելիքյանը, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Կամո Արեյանը[6]: Հոկտեմբերի 11–12-ը ոչ աշխատանքային օրեր էին՝ միջոցառումը բարձր մակարդակով իրականացնելու նպատակով:

Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի շրջանակներում կայացած միջոցառումները մեկնարկեցին հոկտեմբերի 7-ից, իսկ գագաթնաժողովը կայացավ հոկտեմբերի 11–12-ին: Միջոցառումների շրջանակում հոկտեմբերի 7-ին տեղի է ունեցել ՖՄԿ Մշտական խորհրդի նիստը[7], հոկտեմբերի 8–9-ը՝ ՖՄԿ 35-րդ նախարարական համաժողովը[8], հոկտեմբերի 9–12-ը Ֆրանկաֆոնիա-

---

[6] Տե՛ս https://armenpress.am/arm/news/949861/ (24.06.2021):

[7] Ֆրանկոֆոնիայի մշտական խորհուրդ համախմբում է անդամ երկրների դեսպաններին՝ պլենիպոտենցիար գագաթնաժողովը, ինչպես նաև վերահսկում է դրա որոշումների կատարման գործընթացը (Հ.Վ.):

[8] Ֆրանկոֆոնիայի նախարարական համաժողովը միավորում է ֆրանկոֆոն նախարարին կամ արտաքին գործերի նախարարին ամեն տարի՝ ապահովելու գա-

յի ավանի բացումն ու աշխատանքները[9], հոկտեմբերի 10-ին՝ Տնտեսական ֆորումը[10], իսկ հոկտեմբերի 11-ին՝ Երևանի Հան-

գաթնաժողովի քաղաքական շարունակականությունը: Համաժողովն ապահովում է նախորդ գագաթնաժողովի կողմից ընդունված որոշումների իրականացումը (Հ.Վ.):

[9] Ֆրանկոֆոնիայի ավանների կազմակերպման ավանդույթը սկիզբ է առել 2008 թ. Քվեբեկի գագաթնաժողովից և հետագա տարիներին դրանց կազմակերպման ձևերն ու մասշտաբները տարբերվել են՝ կապված ընդունող երկրում ավանի համար, տրամադրած տարածքից, ենթակառուցվածքներից և ամենակարևորը՝ ֆրանկոֆոն երկրների ու գործակալությունների մասնակցությունից: Ֆրանկոֆոնիայի ավանի նպատակն է ներկայացնել կազմակերպության մշակութային բազմազանությունը, որը նաև երևանյան գագաթնաժողովի օրակարգի կարևոր խնդիրներից էր: Մասնակիցներին հյուտկացված տաղավարների միջոցով հնարավորություն ընձեռվեց ցուցադրել Ֆրանկոֆոնիայի երկրների մշակույթն ու կենցաղը: Քանի որ Հայաստանն առաջարկել էր Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովն անցկացնել «Ապրել միասին» կարգախոսի ներքո, ըստ այդմ՝ ավանն իր հերթին ուներ «Ապրել ու ստեղծել միասին» կարգախոսը: Ֆրանկոֆոնիայի ավանում գագաթնաժողովի մասնակից երկրները, ՖՄԿ գործընկերները ու գործակալությունները հնարավորություն ունեին ցուցադրել իրենց երկրների մշակութային բազմազանությունը: Ներկայացված էին արհեստագործական իրեր, մասնակից պետությունների զբոսաշրջային հնարավորությունները, արվեստի, մշակույթի գործեր, ինչպես նաև ազգային խոհանոցը: Ավանը գագաթնաժողովի շրջանակներում անցկացվող բաց միջոցառում էր, որտեղ գագաթնաժողովի մասնակիցները, լրագրողները, հայաստանյան հանրությունը կարող էր հանդիպել միմյանց՝ ոչ պաշտոնական միջավայրում: Ֆրանկոֆոնիայի ավանում տեղադրված էին տաղավարներ, բեմահարթակ և ցուցադրությունների համար տարածքներ: Մասնակիցները հանդես էին գալիս պարային և համերգային կատարումներով: Դա հնարավորություն տվեց բացահայտելու երիտասարդ ֆրանկոֆոն տաղանդավոր կատարողներին և ներկայացնելու Ֆրանկոֆոնիայի մշակութային բազմազանությունը: Հոկտեմբերի 9-ին պաշտոնապես բացվեց Ֆրանկոֆոնիայի ավանը, որը տեղակայված էր Երևանի Օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի հարակից տարածքում: Ֆրանկոֆոնիայի ավանը՝ տեղակայված լինելով քաղաքի սրտում, մշակութային և լեզվական բազմազանության հարթակ էր, վայր, որը մեկ հարկի տակ միավորում էր աշխարհի 5 մայրցամաքներից տասնյակ երկրներ՝ իրենց մշակութային բազմազանությամբ (տե՛ս http://francophonieerevan 2018.am/hy/erevan-2018/le-village-de-la-francophonie.html (24.06.2021)):

[10] Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի շրջանակներում առաջին անգամ հոկտեմբերի 10-ին «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում կազմակերպվել էր տնտեսական ֆորում՝ ՀՀ նախագահ Ա. Սարգսյանի բարձր հովանու ներքո: 2014 թ. Դաքարում անցկացված Ֆրանկոֆոնիայի 15-րդ գագաթնաժողովի ընթացքում մասնակիցները պատրաստակամություն էին հայտնել առավել խորացնել Ֆրանկոֆոնիայի տնտեսական ուղղությունը՝ ընդունելով Ֆրանկոֆոնիայի առաջին տնտեսական ռազմավարությունը: Ռազմավարության նպատակն է ուժեղացնել ֆրանկոֆոն տնտեսական գոտին՝ դիմագրավելով տնտեսական, սոցիալական, էներգետիկ և բնապահպանական մարտահրավերների հանգեցնող խնդիրներին, ինչպես նաև հակազդել գլոբալ տնտեսական և ֆինանսական համակարգերում

ռապետության հրապարակում տեղի ունեցավ հանդիսավոր Գալա համերգ:

2018 թ. հոկտեմբերի 11-ին Երևանի Մարզահամերգային համալիրում հանդիսավոր կերպով մեկնարկեց Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթնաժողովին մասնակցելու համար Երևան ժամանած պատվիրակությունների դիմավորման պաշտոնական արարողությունը: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Միկայել Ժանը դիմավորում էին գագաթնաժողովի մասնակից երկրների պատվիրակություններին: Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովին մասնակցելու համար Հայաստան էր ժամանել 84 երկրի պատվիրակություն: Գագաթնաժողովին մասնակցեց 38 երկրի ղեկավար:

ՖՄԿ 17-րդ գագաթնաժողովի բացմանը ելույթներով հանդես են եկել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, Կանադայի վարչապետ Ջասթին Թրյուդոն, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Միկայել Ժանը և այլ երկրների առաջնորդներ ու պատվիրակությունների ղեկավարներ:

ՀՀ վարչապետն իր ելույթում նշել է. «Այսօր ցանկանում եմ վերստին ասել, որ Հայաստանի համար մեծ պատիվ է, որ այս գագաթնաժողովի կազմակերպումը վստահվել է Հայաստանին: Այդ առնչությամբ մենք լիովին գիտակցում ենք մեզ վրա դրված պատասխանատվությունը և ցանկանում ենք, որ այս իրադարձությունը բոլորի հիշողություններում մնա որպես Կազմակերպության ինստիտուցիոնալ կյանքի բացառիկ պահերից մեկը,

ահող անհամաչափություններին (տե՛ս https://armenpress.am/arm/news/950365.html (24.06.2021)):

ինչպես նաև ֆրանկոֆոն համակեցության և համերաշխության կարևոր դրսևորում: Հայաստանը Ֆրանկոֆոնիայի երիտասարդ անդամ է, դիտորդի կարգավիճակով անդամակցությունից ի վեր ընդամենը 15 տարի է անցել, մինչդեռ մշակութային և լեզվական բազմազանության, ֆրանսերենի և Ֆրանկոֆոնիայի հիմնարար արժեքների խթանման նրա հանձնառության ապացույցի կարիք չկա» [11]:

ՀՀ վարչապետը ընդգծել է նաև որ Հայաստանը հպարտ է Ֆրանկոֆոնիայի կազմակերպությանն իր անդամակցությամբ, որը համագործակցության, երկխոսության և փոխանակումների մի ընդարձակ տարածք է, և բազմազանության և համերաշխության նկատմամբ հարգանքի մթնոլորտում կազմակերպության անդամ պետություններին և կառավարություններին համախմբում է խաղաղության, ժողովրդավարության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի շուրջ. «Մենք իրապես հավատարիմ ենք մեզ միավորող այդ կապերի բնույթին, որոնք այնքան լավ բնորոշվում են «Ապրել միասին Ֆրանկոֆոնիայում» գաղափարախոսությամբ: Նրանք միասին կազմում են այդ համընդհանուր բարիքը, այդ հարստությունը, որ մեզ համար կարևոր է պահպանել ամեն գնով, այդ մեծ հնարավորությունը ֆրանկոֆոն ողջ տարածքի համար: «Ապրել միասին՝ հարգելով համերաշխությունը, մարդասիրական արժեքներն ու բազմազանությունը՝ իբրև խաղաղության և բարօրության հիմք ֆրանկոֆոն տարածաշրջանում». սա է Հայաստանի կողմից առաջարկված թեմայի նշանակությունը, որը կարտացոլվի նաև մեր աշխատանքներում»:

[11] https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/10/11/Nikol-Pashinyan-speech-at-the-17th-Francophone-Summit/ (24.06.2021):

«Ապրել միասին»-ի ընդգծումը կարևոր է նաև պոպուլիզմի և ծայրահեղականության աճի համատեքստում: Ատելության խոսքի և անհանդուրժողականության դրսևորումների դեմ մենք ունենք բարոյական պարտավորություն, ունենք դրանց հակադրելու «Ապրել միասինի» արժեքներն ու սկզբունքները և համախմբվելու՝ դրանք կյանքի կոչելու համար: Անկասկած, մենք պետք է շարունակենք ամեն ջանք գործադրել բոլորիս կայուն մարդկային զարգացման ձգտումն ի կատար ածելու համար: Այսպիսին է մեր կողմից առաջարկվող Կոչը, որն իրենից ներկայացնում է հզոր ուղերձ հանուն Ֆրանկոֆոնիայի հիմնադիր հայրերի կողմից ժառանգված խաղաղության, համերաշխության և մարդասիրության»[12]:

«Հույս ունեմ, որ այս գագաթնաժողովը կնպաստի Ֆրանկոֆոնիայի զարգացմանն ամբողջ աշխարհում, և Հայաստանը կդառնա Ֆրանկոֆոնիայի դիվանագիտական ակտիվ գործունեության կենտրոններից մեկը», - նշել է վարչապետը[13]:

Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնն իր խոսքում շեշտել է, որ Երևանում այսօր մի մեծ ընտանիք է հավաքվել, ընտանիք, որը ներառում է բոլոր մայրցամաքները. «Մենք բոլորս պատկանում ենք այդ ընտանիքին և չունենք մաշկի նույն գույնը, մեր աստվածները չեն կրում նույն անունները, ոմանք նաև Աստծուն չեն հավատում: Մենք ապրում ենք շատ տարբեր կլիմայական պայմաններում, մեր երգերը նման չեն իրար: Մենք ունեցել ենք նաև վերքեր, որոնք նոր են սկսում փակվել: Այնուամենայնիվ,

[12] 2018 թ. Երևանում կայացած Ֆրանկոֆոնիայի XVII գագաթնաժողովի պաշտոնական կայք http://francophoniecervan2018.am/hy/actualits/ceremonie-ouverture.html (05.02.2021):

[13] https://www.primeminister.am/fr/press-release/item/2018/09/12/Nikol-Pashinyan-attended-inaugurate-Francophone-NGO-forum/ (24.02.2021):

այս բազմազան ընտանիքը միասնական է՝ համախմբված մեկ լեզվի շուրջ: Այս լեզուն մենք ընկալում և արտահայտում ենք բազմազանությամբ, սակայն բոլորս իրար հասկանում ենք[14]: Այս լեզուն չի պատկանում որևէ մեկին, այն բոլորինն է: Այս լեզուն կարողացել է ընդունել բոլորի մտքերը: Մեր կապն արտահայտվում է ոչ միայն այս լեզվի միջոցով, այլ աշխարհին ուղղված մեր տեսլականով: Մեր տեսլականը պարբերաբար վերաիմաստավորվում և թարմացվում է: Եղբայրությունը, խաղաղությունը արդարությունը կազմում են մեր կազմակերպության հիմնաքարերը»,- նշել է Է. Մակրոնը: [15] Նա հավելել է, որ Ֆրանկոֆոնիայի երևանյան գագաթնաժողովը կազմակերպվում է մի յուրահատուկ պահի, երբ տեսանելի են աշխարհում տեղի ունեցող հսկայական փոփոխություններ: Ֆրանսիայի նախագահի խոսքով՝ աշխարհն այսօր լի է ստով, ատելության քարոզչությամբ, այն կանոնները, որոնց շուրջ վերջին տասնամյակներին կարողացել են համախմբվել, այլևս չեն գործում: «Ի՞նչ կարող է անել Ֆրանկոֆոնիան այս իրադարձությունների ընթացքում: Այն, ինչ մենք պետք է անենք, հետևյալն է՝ ստեղծել բոլորին սթափության հրավիրելու իրավիճակ: Ֆրանկոֆոնիան պետք է լինի այն հարթակը, որտեղ կարտահայտվի համախմբված սթափությունը: Նրա գնահատմամբ՝ Ֆրանկոֆոնիան չպետք է լինի հարթակ,

[14] Le Monde ամսագիր https://www.lemonde.fr/afrique/article/2018/10/11/a-erevan-emmanuel-macron-plaide-pour-une-francophonie-de-reconquete_5368039_3212.html (22.02.2021):

[15] 2018 թ. Երևանում կայացած Ֆրանկոֆոնիայի XVII գագաթնաժողովի պաշտոնական կայք http://francophonieerevan2018.am/hy/actualits/emmanuel-macron.html (05.02.2021):

որտեղ հնչում են դատարկ բառեր, այլ այն արժեքների հարթակը, որոնց շուրջ իրենք միավորվել են»[16]:

Կանադայի վարչապետ Ջ. Թրյուդոն ավելի կարճ ելույթ ունեցավ՝ պնդելով բոլորի իրավունքները:

Բացման հանդիսավոր արարողությունն ավարտվեց Մ. Ժանի ուղերձով, ով ընդգծեց կազմակերպության առաքելությունն ու դրա պատմությունը:[17]

Գագաթնաժողովի բացման արարողությանը հաջորդել են լիագումար նիստը, այնուհետ ՖՀԿ աշխատանքների վերաբերյալ նախարարական համաժողովի նախագահության զեկույցը, ՖԽՎ գնահատականը գագաթնաժողովի թեմայի վերաբերյալ, լիիրավ անդամների դռնփակ նիստեր միջազգային իրադարձությունների վերաբերյալ: Գագաթնաժողովի վերջին օրը կայացել է Ֆրանկոֆոնիայի գլխավոր քարտուղարի զեկույցը, զեկույցի և գագաթնաժողովի թեմայի ընհանուր քննարկումը, հայտարարության, բանաձևերի և գագաթնաժողովի այլ փաստաթղթերի ընդունումը: Տեղի են ունեցել ասոցացված անդամների հայտարարությունները, սահմանվել է հաջորդ գագաթնաժողովի վայրը և ամսաթիվը, կայացել է Ֆրանկոֆոնիայի կազմակերպության գլխավոր քարտուղարի ընտրությունը, ապա գագաթնաժողովի արդյունքների ամփոփումը, եզրափակիչ մամուլի ասուլիսը:

Երևանյան գագաթնաժողովում ընտրվել է Ֆրանկոֆոնայի նոր գլխավոր քարտուղարը՝ Ռուանդայի ԱԳ նախարար Լուիզ Մուշիկիվաբոն: «Ես անհամբեր եմ իմ փորձը և իմ կամքը ծա-

[16] Նույն տեղում:

[17] Տե՛ս նույն տեղում:

ռայելու մեր Ֆրանկոֆոնիայի ծառայությանը»[18],- նշել էր նորանշանակ տիկին քարտուղարը:

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ղեկավարի պաշտոնում նրա նշանակումը չորս տարի շարունակ ապահովում է Աֆրիկայի «վերադարձը»: Այդ կազմակերպությունը միշտ ղեկավարել են աֆրիկացիները մինչ կանադացի Մ. Ժանը: «Ֆրանսերենի էպիկենտրոնը անկասկած գտնվում է Կոնգո գետի ավազանում»[19], - նշել է Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնը: Հայաստանյան գագաթնաժողովի օրերին անցկացվել են նաև Ֆրանկոֆոն մամուլի միջազգային միության 47-րդ նստաշրջանը (Ծաղկաձոր, 2018 թ. հոկտեմբերի 9-12-ին)՝ «Լրատվամիջոցները և միգրացիան» թեմայով, PicsArt ընկերության հայաստանյան մասնաճյուղում կայացել է Ֆրանկոֆոն երիտասարդական ֆորումը (սեպտեմբերի 11-12-ին)՝ Հայաստանի Ֆրանկոֆոն երիտասարդական խորհրդարանի նախաձեռնությամբ և ՀՀ արտաքին գործերի նախարարության աջակցությամբ, Ֆրանկոֆոն հասարակական կազմակերպությունների 11-րդ համաժողովը (սեպտեմբերի 12-14-ին)՝ ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Միկայել Ժանի մասնակցությամբ:

Գագաթնաժողովի արդյունքում կառավարությունների ու պետությունների ղեկավարները ընդունեցին մի շարք կարևոր փաստաթղթեր, այդ թվում՝

[18] Le Figaro ամսագիր, https://www.lefigaro.fr/langue-francaise/francophonie/2019/01/03/37006-20190103ARTFIG00149-louise-mushikiwabo-prend-officiellement-ses-fonctions-a-la-tete-de-la-francophonie.php (22.02.2021):

[19] FRANCE24 հեռուստաալիք https://www.france24.com/fr/20181012-rwandaise-mushikiwabo-designee-francophonie-oif (24.02.2021):

- Երևանի հռչակագիրը (Déclaration d'Erevan),
- «Միասին ապրել» կոչը (Appel pour le Vivre ensemble),
- Ֆրանկոֆոնիայի ռազմավարությունը կանանց և տղամարդկանց միջև հավասարության խթանման համար (Stratégie de la Francophonie pour la promotion de l'égalité entre les femmes et les hommes),
- Բանաձև ճգնաժամային իրավիճակների, հետճգնաժամային և խաղաղաշինության վերաբերյալ (Résolution sur les situations de crise, de sortie de crise et de consolidation de la paix), Բանաձև քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության վերաբերյալ (Résolution sur l'éducation à la citoyenneté et aux droits de l'Homme),
- Բանաձև ՝ Փարիզի սկզբունքների՝ մարդու իրավունքների մասին 25-ամյակի կապակցությամբ (Résolution sur le 25e anniversaire des Principes de Paris sur les droits de l'Homme),
- Բանաձև մշակութային մասնակցության մասին (Résolution sur la participation culturelle),
- Բանաձև գիտելիքների փոխանցման և հետազոտությունների խթանման վերաբերյալ (Résolution sur le transfert de connaissances et la valorisation de la recherche)
- Բանաձև անտեսված արևադարձային հիվանդու-թյունների վերաբերյալ (Résolution sur les maladies tropicales négligées)

Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի կարևոր արդյունքներից խոսելիս՝ հարկ է ընդգծել, որ նման լայնածավալ միջոցառումը դրական ազդեց Հայաստանի միջազգային հեղինակության վրա: Հայաստան էին ժամանել 84 երկրների պատվիրակություններ, որոնցից 38-ը ներկայացված էին երկրի ղեկավարի մակարդակով: Գագաթնաժողովի շրջանակներում Հայաստան

էին ժամանել ավելի քան 3.500 հյուր, իսկ Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի լուսաբանման, «Ֆրանկոֆոն լրագրողների միջազգային միության» կոնֆերանսին մասնակցելու համար՝ շուրջ 600 լրագրող: Գագաթնաժողովը լավ հնարավորություն էր աշխարհի շուրջ 274 մլն ֆրանսախոսների շրջանում Հայաստանի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման առումով: Գագաթնաժողովը թերևս էլ ավելի կարևորվեց Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնի և Կանադայի վարչապետ Ջ. Թրյուդոյի Հայաստան կատարած այցով:

ՖՄԿ 17-րդ գագաթնաժողովի ժամանակ ընդունվեցին կարևոր փաստաթղթեր, այդ թվում՝ Երևանյան հռչակագիրը, որի նախապատրաստական աշխատանքներում բավական մեծ ջանքեր էին գործադրվել: Ինչպես նախկինում ընդունված բանաձևերում, որտեղ ՖՄԿ անդամ երկրներն իրենց աջակցությունն են հայտնել «բանակցություններին՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միասնական և անբաժան հենք հանդիսացող սկզբունքների հիման վրա», ինչպես նաև կոչ են արել հակամարտության բոլոր կողմերին զերծ մնալ ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից, այնպես էլ ներկա փաստաթղթում անդրադարձ կար ղարաբաղյան հակամարտությանը: Հռչակագրի 18-րդ և 19-րդ կետերում նշված էր.

«Քննադատել միջազգային հումանիտար իրավունքի ցանկացած խախտում, ինչպես նաև հումանիտար հարցերի ինստրումենտալիզացիան և քաղաքականացումը, կոչ անել պաշտպանել հակամարտության գոտիների քաղաքացիական բնակչությանը և երաշխավորել նրանց հիմնարար իրավունքները և ազատություններն, ինչպես նաև ապահովել արագ և անխոչընդոտ հումանիտար մուտք»[20]: «ՄԱԿ նպատակներին և սկզբունքներին համաձայն՝ մենք վերահաստատում ենք մեր հավատարմությունը՝ ֆրանկոֆոն տարածությանն առնչվող ճգնաժամերի և հակամարտությունների խաղաղ կարգավորմանը՝ մասնավորապես միջազգայնորեն ճանաչված բանակցային ձևաչափերի շրջանակներում, բոլոր իրավիճակներում խթանելու երկխոսությունը և միջնորդությունը՝ այդ ճգնաժամերի և հակամարտությունների կարգավորմանը հասնելու համար, ինչպես նաև աջակցում ենք հակամարտությունների կանխարգելման կարգավորման գործընթացում կանանց աճող դերակատարմանը»[21]:

ՖՄԿ Երևանյան գագաթնաժողովը կարևոր էր նաև հենց կառույցի ընդլայնման և զարգացման տեսանյունից: Գագաթնաժողովի շրջանակներում տեղի ունեցան կազմակերպության գլխավոր քարտուղարի ընտրություններ և այդ պաշտոնում ընտրվեց Ռուանդան ներկայացնող Լուիզ Մուշիկիվաբոն: Միևնույն ժամանակ, Միացյալ Արաբական Էմիրությունները, Կոսովոն և Սերբիան ստացան Ֆրանկոֆոնիայի ասոցացված անդամի, իսկ Գամբիան, Իռլանդիան, Լուիզիանան (ԱՄՆ) և Մալթան՝ դիտորդի կարգավիճակ[22]:

Այսպիսով, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հիմնական կարգախոսներն ու նպատակները՝ նպաստել խաղաղությանը, ժողովրդավարությանը, մարդու իրավունքների, ֆրանսերենի, մշակութային ու լեզվաբանական բազմազանության առաջխաղացմանը, համագործակցության խրախուսմանը, մշակույթների և քաղաքակրթությունների երկխոսության ակտիվաց-

[20] https://armenpress.am/arm/news/950830.html (24.06.2021):
[21] https://armenpress.am/arm/news/950830/arm/ (24.06.2021):
[22] https://armenpress.am/arm/news/950830.html (05.02.2021):

մանը, անդամ երկրների միջև համերաշխության ամրապնդմանը, իրենց գործնական կիրառությունը գտան երևանյան գագաթնաժողովի օրերին և դրանից հետո:

Ամփոփելով Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության երևանյան գագաթնաժողովի արդյունքները՝ կարելի է նշել, որ այն հաջողված և բավական լավ փորձ էր Հայաստանի համար՝ մեծամասշտաբ միջոցառումներ կազմակերպելու և միջազգային կապերի զարգացման և ամրապնդման տեսանկյունից:

Рипсимэ Э. Вардересян, *Институт истории НАН РА,* 17-й **саммит Франкофонии в Ереване.**

В 2018 году в Армении прошел 17-й Саммит Франкофонии под названием «Жить вместе, уважая солидарность, гуманитарные ценности и разнообразие, как основа мира и благополучия во франкоязычном регионе».

Саммит собрал делегации 84 стран во главе с лидерами 38 стран. Саммит МОФС в Ереване стал возможен с точки зрения расширения и развития структуры: Объединенные Арабские Эмираты, Косово, Сербия стали ассоциированными членами Франкофонии, а Гамбия, Ирландия, Луизиана (США), Мальта получили статус наблюдателя. В рамках Саммита состоялись выборы Генерального секретаря организации, в ходе которых был избран Луис Мушикивабо из Руанды.

По итогам саммита главы правительств и государств приняли ряд важных документов, в том числе Ереванскую декларацию (Déclaration d'Erevan). Призыв «жить вместе» (Appel pour le Vivre ensemble), Стратегия франкофонии по поощрению равенства между женщинами и мужчинами (Stratégie de la Francophonie pour

la promotion de l'égalité entre les femmes et les hommes), Резолюция о кризисных ситуациях, выходе из кризиса и миростроительстве (Résolution sur les situations de crise, de sortie de crise et de consolidation de la paix), Резолюция о гражданстве и образовании в области прав человека (Résolution sur l'éducation à la citoyenneté et aux droits de l'Homme), Резолюция о 25-летии Парижских принципов прав человека (Résolution sur le 25e anniversaire des Principes de Paris sur les droits de l'Homme), Резолюция о культурном участии (Résolution sur la participation culturelle), Резолюция о передаче знаний и продвижении исследований (Résolution sur le transfert de connaissances et la valorisation de la recherche), Резолюция о забытых тропических инфекционных заболеваний (Résolution sur les maladies tropicales négligées) и т.д.

Hripsime E. Varderesyan, *Institute of History of the NAS RA,* **17th Francophonie Summit in Yerevan.**

The 17th Summit of la Francophonie was held in Armenia in 2018 with the title "Living Together, Respecting Solidarity, Humanitarian Values and Diversity as a Basis for Peace and Welfare in the Francophone Region".

The summit brought together the delegations of 84 countries, led by the leaders of 38 countries. The IOF Yerevan Summit was possible in terms of the expansion and development of the structure: in Yerevan the United Arab Emirates, Kosovo, Serbia received an associate member of the Francophonie, and Gambia, Ireland, Louisiana (USA) and Malta – observer status. Elections for the post of Secretary-General of the Organization were held within the framework

of the summit, and Louise Mushikiwabo, representing Rwanda, was elected to that position.

As a result of the summit, the Heads of Government and States adopted a number of important documents, including the Yerevan Declaration (Déclaration d'Erevan). The call to "live together" (Appel pour le Vivre ensemble), Strategy of the Francophonie for the promotion of equality between women and men (Stratégie de la Francophonie pour la promotion de l'égalité entre les femmes et les hommes), Resolution on crisis, post-crisis and peacebuilding situations (Résolution sur les situations de crise, de sortie de crise et de consolidation de la paix), Resolution on citizenship and human rights education (Résolution sur l'éducation à la citoyenneté et aux droits de l'Homme), Resolution on the 25th anniversary of the Paris Principles on Human Rights (Résolution sur le 25e anniversaire des Principes de Paris sur les droits de l'Homme), Resolution on cultural participation (Résolution sur la participation culturelle), Resolution on knowledge transfer and research promotion (Résolution sur le transfert de connaissances et la valorisation de la recherche), Resolution on Neglected Tropical Diseases (Résolution sur les maladies tropicales négligées), etc.

ՍԱՐԳԻՍ Մ. ՄԿՐՏՉԵԱՆ
ԵՊՀ արեւելագիտութեան ֆակուլտետ

ԻՐԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՊԱՆԹԻՒՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Բանալի բառեր՝ *Իրան, Հայաստան, Արցախ, Ղարաբաղեան երկրորդ պատերազմ, Թուրքիա, Ադրբեջան, Հայոց ցեղասպանութիւն, պանթիւրքիզմ, անջատողականութիւն, Ռուսաստան, քրդեր, կրօն:*

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դէմ Ադրբեջանի, Թուրքիայի և միջազգային ահաբեկիչների սանձազերծած լայնամասշտաբ պատերազմը, որը տևեց 44 օր և մարդկային, հողային և նիւթական մեծ վնասներ պատճառեց մեր ժողովրդին, հայ ազգային քաղաքական մտքին ևս մէկ անգամ յիշեցրեց պանթիւրքիզմի վտանգի մասին:

Մինչ օրս հրապարակուած մեր մենագրութեան[1] մէջ և բազմաթիւ յօդուածներում ցոյց ենք տուել, որ պանթիւրքիզմն իբրեւ գաղափարախօսութիւն ու քաղաքական շարժում գոյութիւն ունի ոչ միայն Թուրքիայի և Ադրբեջանի Հանրապետութիւններում, այլ նաև Իրանի թիւրքախօս շրջաններում, որտեղ կան անհատներ և կազմակերպութիւններ, որոնցից որոշները՝ բացայայտ,

[1] Տե՛ս **Մկրտչեան Ս.**, Պանթիւրքական հոսանքները ժամանակակից Իրանում (երկրորդ հրատարակութիւն). Երևան, 2019:

որոշներն էլ՝ թաքուն կերպով աշխատում են Մեծ Թուրանի ծրագրի իրականացման ուղղութեամբ:

Սոյն յօդուածի նպատակն է ցոյց տալ, թէ վերջին տարիներին ինչ փոփոխութիւններ են տեղի ունեցել Իրանում գործող պանթիւրքական կազմակերպութիւնների ղեկավարների և գործիչների ծրագրերում և ինչպէս է արտացոլուել նման մօտեցումները Արցախեան վերջին՝ 44-օրեայ պատերազմի ընթացքում:

Այդ կազմակերպութիւններից մէկը՝ **«Ադրբեջանի ազգային դիմադրական կազմակերպութիւնը»**[2], հիմնադրուել է 2006 թուականին: Նրա պաշտօնաթերթն է **«Արազ նիւզ»**[3]-ը: 2016 թ. դեկտեմբերի 24-ին ԱԱԴԿ-ի կազմակերպմամբ Անկարայում, «Թիւրք Օջախլարի»-ում տեղի է ունեցել «Հարաւային Ադրբեջանը: Թիւրքական աշխարհի ոսկէ կամուրջը»[4] անունը կրող համագումարը: Համագումարին մասնակցել են «Թուրքիայից, Հարաւային և Հիւսիսային Ադրբեջաններից, Բալկաններից և թիւրքական աշխարհի այլ շրջաններից թիւրքեր: Բանախօսները անդրադարձել են «Հարաւային Ադրբեջանի ռազմավարական, մշակութային, տնտեսական և պատմական կարևորութեանը տարածաշրջանում և թիւրքական աշխարհում[5]»: Յատկանշական է, որ համագումարը տեղի էր ունենում Անկարայում, ինչը նշանակում է, որ վերջին տարիներին Թուրքիայի Հանրապետութիւնը իր տարածքում թոյլ էր տալիս Իրանի հողային ամբողջականութիւնը վտանգող և Իրանի նկատմամբ անջատողական նկրտումներ ունեցող կազմակերպութիւնների անարգել գործունէութիւնը:

[2] Տե՛ս https://diranish.org/ (03.04.2021):
[3] www.araznews.org/fa/ (03.04.2021):
[4] http://www.araznews.org/fa/?p=30699 (03.04.2021):
[5] Նոյն տեղում:

ԱԱԴԿ-ը 2017 թ. հրատարակած իր գործունէութեան մէկ տարուայ տեղեկագրում՝ Իրանի ներսում իրականացրած ծրագրերի շրջանակներում որպէս հաշուետուութիւն մատնանշում էր «Իրանի թուրքերի ինքնութեան վերածնունդը» գրքի տարածումը, ուսումնական նիւթերի տպագրութիւնն ու տարածումը ուսանողների շրջանում, քաղաքական գործունէութիւնը մարզական միջավայրերում և մարզադաշտերում և այլն, իսկ երկրից դուրս՝ կազմակերպութեան հիմնադրութեան 11-ամեակի նշումը Անկարայում և Վաշինգտոնում, Աբուլֆազլ Էլչիբէյի մահուան 17-րդ տարելիցի նշումը Անկարայում և այլն:

2020 թ. սեպտեմբերի 27-ին, այսինքն՝ Հայաստանի և Արցախի դէմ Ադրբեջանի և Թուրքիայի Հանրապետութիւնների սանձազերծած պատերազմի առաջին օրը, հրապարակուել է մի յայտարարութիւն՝ «Հայաստանը ամբողջ տարածաշրջանի խաղաղութեան և հանդարտութեան գլխաւոր արգելքը[6]» վերնագրով: Նրա տակ ստորագրել են «Ադրբեջանի կենտրոնական կուսակցութիւնը», «Ադրբեջանի ազգային դիմադրական կազմակերպութիւնը», «Հարաւային Ադրբեջանի դեմոկրատական կուսակցութիւնը» և «Հարաւային Ադրբեջանի թիւրքական դեմոկրատական դաշինք կազմակերպութիւնը», որում գրուած է, որ «Մէկ անգամ նորից Հայաստանի զաւթիչ բանակը Ադրբեջանի գրաւուած տարածքներում....խախտել է հրադադարը....Հայաստանի բանակը յարձակուելով բնակավայրերի վրայ Ադրբեջանի ոչ զինուորական քաղաքացիների նահատակութեան և վիրաւորուելու պատճառ է դարձել....Վիրաւորուած են Ադրբեջանի ժողովրդի զգացումները....Ադրբեջանի թուրք ազգը Հարաւային

[6] https://diranish.org/%D8%A8%D8%A7%DB%8C%DA%AF%D8%A7%D9%86%DB%8C/3380 (02.04.2021):

Ադրբեջանում ամենայն զգայնութեամբ հետևում է Հիւսիսային շրջանի իրադարձութիւններին....Մենք՝ այս յայտարարութեան ստորագրողներս՝ մեր ամբողջական համերաշխութիւնը յայտնելով Ադրբեջանի ազգին և պետութեան, Ադրբեջանի բանակի պատասխան գործողութիւնները Ադրբեջանի Հանրապետութեան քաղաքացիների և երկրի հողային ամբողջականութեան պաշտպանութեան կապակցութեամբ նրա օրինական իրաւունքն ենք համարում[7]»: Նշելի է, որ այս կազմակերպութիւնները խօսում են Ադրբեջանի Հանրապետութեան հողային ամբողջականութեան մասին այն պայմաններում, երբ իրենք սպառնում են Իրանի հողային ամբողջականութեանը: Աւելին՝ սրանով պարզէ դառնում այն իրողութիւնը, որ դեռ Ղարաբաղեան երկրորդ պատերազմը չսկսուած՝ Իրանում գործող պանթիւրքական կազմակերպութիւններն արդէն տեղեակ էին, որ պաշտօնական Բաքուն դիմելու է սադրանքների եւ հրադադարի խախտման մէջ նախապէս մեղադրելու է հայկական կողմին, որից յետոյ իբր՝ պատասխան գործողութիւններ, կամ՝ «հակայարձակում» է ձեռնարկելու Արցախի դէմ: Սա ցոյց է տալիս, որ ի տարբերութիւն նախորդ տարիների, անցած պատերազմում ոչ միայն Ադրբեջանն ու Թիւրքիան, այլեւ Իրանի փաստօրէն՝ բոլոր պանթիւրքական կազմակերպութիւնները գործում էին որպէս մէկ միասնական բանակ:

Ուստի նոյն՝ 2020թ. սեպտեմբերի 27-ի մէկ այլ յայտարարութեան[8] մէջ, որի հրատարակման վայր է նշուել Թաւրիզը, եւ որը կրում է «Բռնազաւթուած Ղարաբաղի իրադարձութիւնների կապակցութեամբ Ադրբեջանի ազգային դիմադրական կազմակերպութեան ուսուցողական և ռազմավարական յայտարարութիւնը» վերնագիրը, խօսելով «հայ բռնազաւթիչների», «բռնազաւթուած Ղարաբաղի», Հայաստանին՝ «ֆաշիստական Իրանի հովանաւորութեան», ԻԻՀ-ում ՀՀ դեսպանատան գործունէութեան, «Իրան-Երևան-ՓՔՔ համագործակցութեան» և այլ յորինուած թեմաների մասին, ներկայացուում է նաև Իրանի կատարած առաջին քայլը՝ զօրքի տեղափոխումը Իրան-Հայաստան-Ադրբեջան սահմանին: Ուստի վերջում յանձնարարութիւններ են տրուում կազմակերպութեան բջիջներին՝ դէպի Հայաստան բեռնափոխադրումները լուսանկարելու և իրենց ուղարկելու, դէպի Հայաստան էլեկտրաէներգիայի, գազի և վառելիքի տարանցման ցանցը բացայայտելու ու խափանելու և այլնի մասին:

Վերջին տարիներին նոյնաբովանդակ գործունէութիւն էր ծաւալել նաեւ «**Հարաւային Ադրբեջանի ուսանողական շարժում**» (AZOH)[9] կազմակերպութիւնը (**Southern Azerbaijan Student Movement**), որի կայքէջի «ԱԶՈՀ-իմասին» բաժնում գրուած է՝ «ԱԶՈՀ-ի անդամահաւաքի համակարգը ուղղուած է ուսանողներին և նրա հիմնական նպատակը մտաւորական, վերլուծող, քաջ, պայքարի մշակոյթին ծանօթ ու դրանում ընդգրկուած կազմակերպական կադրերի դաստիարակումն է՝ազգային շարժման մէջ ներգրաւելու համար»[10]:

Կազմակերպութիւնը բացի http://www.azoh.net/ կայքից, ունի մէկ այլ կայք՝ «**Օյրենջը**» անունով, որտեղ հրատարակւում են լուրեր, յօդուածներ, հարցազրոյցներ հիմնականում՝ հակաիրանական, հակահայկական, հակաքրդական և հակառուսական

[7] https://diranish.org/%D8%A8%D8%A7%DB%8C%DA%AF%D8%A7%D9%86%DB%8C/3380 (02.04.2021):

[8] Տե՛ս https://diranish.org/%D8%A8%D8%A7%DB%8C%DA%AF%D8%A7%D9%86%DB%8C/3376 (02.04.2021):

[9] http://www.azoh.net/ (12.04.2017):

[10] Նոյն տեղում:

ուղղուածութեամբ[11]: Կայքում լայնօրէն արտացոլում են «Հարաւային Ադրբեջանի ազգային քաղաքական գործիչների» ձերբակալութիւնների մասին լուրերը: Դեռեւս 2017թ. ապրիլին ԱԶՈՀ-ի կայքում (http://www.azoh.net/) հրատարակուել էր հետեւեալ վերնագրով լուրը. «Փետրուարի 26-ը զաւթիչ հայերի կողմից Խոջալուի ցեղասպանութեան օրն է»[12]: Այնտեղ նշւում էր, որ «Հայաստանի զինուած ուժերը, ռուսական զինուած ուժերի հովանաւորութեամբ, յարձակուեցին Խոջալուի վրայ և Խոջալուի խաղաղ բնակիչներից 613 հոգու վայրագ ձևով սպանեցին: Այդ ցեղասպանութեան զոհերից են 63 երեխայ, 106 կին, 70 ծեր....Խոջալուի ցեղասպանութիւնը Մեքսիկայի, Չեխիայի, Յորդանանի, Հոնդուրասի, Պերուի, Ջիբուտիի, Բոսնիա և Հերցեգովինայի, Ռումինիայի, Շոտլանդիայի և ԱՄՆ մօտ 22 նահանգի կողմից պաշտօնապէս ճանաչուել է.... Խոջալուի սպանդը հայերի կողմից ցեղասպանութիւն է, սակայն մշտապէս պետութիւնների կրօնական ու քաղաքական յարաբերութիւնների ազդեցութեան ներքոյ է եղել: Որպէս օրինակ նշենք, որ եւրոպական բազմաթիւ երկրներ, ինչպէս Ռուսաստանը, որը զաւթիչ Հայաստանի ընդգծուած հովանաւորն ու դաշնակիցն է, մինչև հիմա մարդկութեան դէմ կատարուած այս ողբերգութեան պաշտօնական ճանաչումից խուսափել է»[13]:

---

[11] Տե՛ս https://www.oyrenci.org/ (05.04.2021):

[12] http://www.azoh.net/%D8%AE%D8%A8%D8%B1/1118-%DB%B2%DB%B6-%D9%81%D9%88%D8%B1%DB%8C%D9%87-%D8%B1%D9%88%D8%B2-%D9%86%D8%B3%D9%84-%DA%A9%D8%B4%DB%8C-%D8%AE%D9%88%D8%AC%D8%A7%D9%84%DB%8C-%D8%AA%D9%88%D3%B3%D8%B7-%D8%A7%D8%B1%D9%85%D9%86%DB%8C-%D9%87%D8%A7%DB%8C-%D8%A7%D8%B4%D8%BA% D8%A7%D9%84%DA%AF%D8%B1-%D8%A7%D8%B3%D8%AA.html (12.04.2017):

[13] Նոյն տեղում:

Ընդհանուր առմամբ 2020թ. նախապատերազմեան շրջանի լուրերում կրկին հիմնական շեշտը դրւում էր Հայաստանի «զաւթիչ» լինելու, «Խոջալուի ցեղասպանութեան», Իրանի և Ռուսաստանի «հայամէտութեան», եւրոպական երկրների կողմից Հայաստանին հովանաւորելու հարցում կրօնական գործօնի դերակատարութեան, հայերի ու քրդերի համագործակցութեան և նմանատիպ պնդումների վրայ:

Կազմակերպութեան կայքէջում (https://www.oyrenci.org/) պարբերաբար վերահրատարակւում էին Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետութեան հիմնադիր Մոհամմադ Ամին Ռասուլզադէի և ժամանակին Ատրպատականում ստեղծուած Ադրբեջանի Ինքնավար Հանրապետութեան հիմնադիր Միր Ջաֆար Փիշևարիի յօդուածներն ու մտքերը: Հրատարակուած մի շարք լուրերի վերնագրերը և այդ լուրերից համառօտագրութիւնները վկայում էին այն մասին, որ «Հարաւային Ադրբեջանի ուսանողական շարժում» կազմակերպութիւնը զբաղուած էր ոչ միայն հակահայկական քարոզչութեամբ, այլեւ ակտիւ տեղեկատուութիւն էր հաւաքում՝ Արցախի դէմ նախապատրաստուող պատերազմին օժանդակելու համար:

Այդ գործունէութիւնը շարունակւում է նաեւ պատերազմից յետոյ: Այսպէս՝ «Հայաստանի օգտին Իրանի վարչակարգի լրտեսութեան բացայայտումը» հրապարակման մէջ նշւում է, որ 2021 թ. փետրուարի 27-ին Թուրքիայի յայտնի օրաթերթերից մէկը գրել է, որ «Իրանի վարչակարգը Լեռնային Ղարաբաղի պատերազմի ժամանակ սահմանին տեղակայել է ռադարային զարգացած համակարգեր և անլար ունկնդրման կայան և դրանց միջոցով ձեռք բերուած տեղեկութիւնները փոխանցել է Հայաստանի

զինուած ուժերի գլխաւոր շտաբին[14]»: Ոչ մի տեղ չի նշւում, որ ինչ է Թուրքիայի այդ յայտնի օրաթերթի անունը:

Իսկ «Զարիֆ: Հայաստանի հողային ամբողջականութիւնը Իրանի կարմիր գիծն է» վերտառութեամբ հրապարակումը մատնանշում է, որ «Իրանի Արտաքին գործերի նախարար Մոհամմադ Ջաւադ Զարիֆը, 2021 թ. յունուարի 27-ին, Հայաստանի Արտաքին գործերի նախարար Արա Այուազեանի հետ հանդիպման ժամանակ իր հակաադրբեջանական դիրքորոշումների ծիրում վստահեցրեց, որ Թեհրանը բոլոր առումներով հովանաւորելու է Երևանին[15]»: Այս համատեքստում նշւում է, որ «Շարունակւում են Իրանի վարչակարգի զինուած ուժերի գործողումներն ու տեղափոխութիւնները Արազի ափերի ուղղութեամբ՝ Ադրբեջանի և Հայաստանի սահմանակից շրջաններ»[16]: Դրանից կատարւում է հետևեալ եզրայանգումը՝ «Իրանի վարչակարգը երկակի խաղ է խաղում Ադրբեջանի նկատմամբ: Մի կողմից այդ վարչակարգի պատասխանատուները խօսքով հովանաւորում են Ադրբեջանին, միւս կողմից վարչակարգը գործնականում հովանաւորում է Հայաստանին: Անկասկած Իրանի որևէ ռազմական գործողութիւն Ադրբեջանի դէմ մեծ

[14] https://www.oyrenci.org/%d8%a7%d9%81%d8%b4%d8%a7%db%8c-%d8%ac%d8%a7%d8%b3%d9%88%d8%b3%db%8c-%d8%b1%da%98%db%8c%d9%85-%d8%a7%db%8c%d8%b1%d8%a7%d9%36-%d8%a8%d9%87-%d9%86%d9%81%d8%b9-%d8%a7%d8%b1%d9%85%d9%86%d8%b3%d8%aa%d8%a7/ (04.04.2021)

[15] https://www.oyrenci.org/%d8%b8%d8%b1%db%8c%d9%81-%d8%aa%d9%85%d8%a7%d9%85%db%8c%d8%aa-%d8%a7%d8%b1%d8%b6%db%8c-%d8%a7%d 8%b1%d9%85%d9%86%d8%b3%d8%aa%d8%a7%d9%86-%d8%ae%d8%b7-%d9%82%d8%b1%d9%85%d8%b2-%d8%a7%db%8c%d8%b1%d8%a7/ (04.04.2021)

[16] https://www.oyrenci.org/%d8%aa%d8%ad%d8%b1%da%a9%d8%a7%d8%aa-%d9%88-%d8%a7%d8%b9%d8%b2%d8%a7%d9%85-%d9%86%db%8c%d8%b1%d9%88%d9%87%d8%a7%db%8c-%d9%86%d8%b8%d8%a7%d9%85%db%8c-%d8%b1%da%98%db%8c%d9%85-%d8%a7%db%8c%d8%b1%d8%a7/ (04.04.2021)

սխալ է լինելու և Հարաւային Ադրբեջանը այդպիսի դաւաճանական գործողութեան հանդէպ լուռ չի մնալու»[17]:

Նշենք, որ ԱՀՈՀ-ի հակահայկական և հակաիրանական դիրքորոշումները նորութիւն չեն և չեն սահմանափակւում Արցախեան վերջին 44-օրեայ պատերազմով:

Պանթիւրքական լայնամասշտաբ քարոզչութիւն է ծաւալումնաև «**Գունազ թի վի**[18]»-ն, որն իրեն հռաչակել է «**Հարաւային Ադրբեջանի ազատութեան ձայնը**»: Հեռուստատեսութիւնը հիմնադրուել է 2004-ին Ահմադ Ուբալիի միջոցով և իր հաղորդումները 24 ժամեայ դրութեամբ սփռում է ԱՄՆ-ի Չիկագօ քաղաքից թէ՛ համացանցի և թէ՛ արբանեակի միջոցով: Հեռուստատեսութիւնն իր նպատակներից է յայտարարել «Ադրբեջանի թուրքերի և Իրան կոչուող աշխարհագրական տարածքի այլ շրջանների թուրք քաղաքացիների մշակութային ցեղասպանութեան և լեզուական ձուլման դէմ պայքարը[19]»: Ուշադրութեան արժանի է «Իրան կոչուող աշխարհագրական տարածք» ձևակերպումը, ինչը նշանակում է, որ այդ հեռուստատեսութեան ղեկավարութիւնը Իրանը որպէս երկիր չի ճանաչում: Նկատի ունենալով ԱՄՆ-ի և ԻԻՀ-ի թշնամական յարաբերութիւնները հասկանալի է, թե ինչու են Ամերիկայի Միացեալ Նահանգները թոյլ տալիս Իրանի դէմ պայքար մղող և անջատողական գաղափարներ տարածող հեռուստատեսութեան հաղորդումները սփռուեն իր տարածքից: Սակայն «Գունազ թի վի»-ի լուրերն ու հաղորդումները միայն հակաիրանական չեն, այլ նաև հակահայկական, հակառուսական և հակաքրդական:

[17] Նոյն տեղում:

[18] https://www.gunaz.tv/(12.03.2021):

[19] https://www.gunaz.tv/fa/about (12.03.2021):

Օրինակ, 2021թ. մարտի 11-ին հրատարակուել է լուր՝ «Թուրքիայի հակազդեցութիւնը Իրաք կատարած Պապի այցելութեան յատուկ նամակադրոշմում Մեծ Քուրդիստանի կեղծ քարտէզի տպագրութեան կապակցութեամբ[20]», որտեղ գրուած է, որ Թուրքիայի Արտաքին գործերի նախարարութիւնը Իրաքի պաշտօնեաներից պահանջել է յարգել տարածաշրջանի երկրների հողային ամբողջականութիւնը, քանզի Իրաքի հիւսիսի քրդական շրջանի որոշ պաշտօնեաներ օգտագործելով Պապի այցելութիւնը փորձել են Իրաքի հարևան երկրների հողային ամբողջականութեան նկատմամբ իրենց զառանցանքներն ու դատարկ պատկերացումները ցուցադրել[21]: Նոյն օրը «Գունազ թի վի»-ով նոյնաբովանդակ յայտարարութիւն է տարածել Հարաւային Ադրբեջանի ազգային ազատագրական ճակատ (ԳԱՄԱՋ) կազմակերպութիւնը, որը տպագրուել է «Գունազ թի վի»-ի կայքէջում[22]:

2021 թ. ապրիլի 1-ին հրատարակուել է լուր՝ «Սկանդալային պնդում: Ռուսաստանն է «Իսկանդեր» կրակել Շուշիի ուղղութեամբ[23]» վերտառութեամբ, որում վկայակոչելով պաշտպանութեան ոլորտում մասնագիտացած ադրբեջանական մի լրատուամիջոցի, ասում է, որ Հայաստանին վաճառած Ռուսաստանի Իսկանդերները տարբեր են այն Իսկանդերներից, որ արձակուել են Շուշիի վրայ և դրանք կարող էին արձակուել Գիմրիում գտնուող Ռուսաստանի յենակէտից:

[20] https://www.gunaz.tv/fa/new/%DA%AF%D9%88%D9%86%D8%A7%D8%B2-%D8%AA%DB%8C-%D9%88%DB%8C-%DB%B2%DB%B1-%D8%A7%D8%B3%D9%81%D9%86%D8%AF-%DB%B1%DB%B3%DB%B9%DB%B9-%D9%88%D8%A7% DA%A9%D9%86%D8%B4-%D8%AA%D8%B1%DA%A9%DB%8C%D9%87 (14.03.2021)

[21] Տե՛ս նոյն տեղում:

[22] Տե՛ս https://www.gunaz.tv/fa/new/GAMAC1-1615481412 (14.03.2021)

[23] https://www.gunaz.tv/fa/new/%C4%B0sg%C9%99nd%C9%99rRus%C5%9Eu%C5%9 Fa-1617277971 (01.04.2021):

Հեռուստատեսութեան հիմնադիր Ահմադ Ուբալին 2021 թ. մարտի 23-ին, իսրայէլական «Վայ նետ նիւզ[24]» կայքէջին տուած հարցազրոյցում ուշագրաւ յայտարարութիւններ էր անում՝ «Հարաւային Ադրբեջանը Իսրայէլի բարեկամն է[25]», «Իրանում մի շարժում կայ, որը հետապնդում է Իրանի և Ադրբեջանի ադրբեջանցիների միաւորումը՝ Թաւրիզ մայրաքաղաքով[26]» և ի վերջոյ «Ես՝ Իրանի դէմ Իսրայէլի կամ այլ երկրների ռազմական գործողութիւններին ոչ դէմ եմ, ոչ կողմ, սակայն իրականութիւն է, որ եթէ ռազմական գործողութիւն սկսուի՝ ժողովուրդը իշխանութեան թիկունքին չի կանգնելու և Արևմուտքն այդ կապակցութեամբ սխալ հաշուարկ է կատարել[27]»:

««Թիւրքական խորհուրդ»-ի պատուիրակութեան ներկայացուցիչները այցելեցին Աղդամ[28]» վերնագրով լրատուութեան մէջ, որը հրատարակուել է 2021 թ. ապրիլի 12-ին, գրուած է, որ Թուրքիայից, Ադրբեջանից, Ուզբեկստանից, Ղազախստանից և Ղրղիզստանից նախարարներ և բարձրաստիճան պաշտօնեաներ Բաքւում մասնակցում են «Թիւրքական խորհուրդի լրատուամիջոցների և տեղեկատուութեան երրորդ նիստին: Նրանք այցելել են Աղդամ, որը Ղարաբաղի պատերազմում ազատագրուեց հայերից և տեսան հայերի կողմից աւերուած քաղաքի գերեզմանատունը[29]:

Հետևեալ մի քանի լուրերի վերնագրերն անգամ բաւական են ապացուցելու «Գոնազ թի վի»-ի ղեկավարութեան վերաբե-

[24] https://www.ynetnews.com/category/3083 (01.04.2021):

[25] Նոյն տեղում:

[26] Նոյն տեղում:

[27] Նոյն տեղում:

[28] https://www.gunaz.tv/fa/new/SHA144-1618133066 (12.04.2021):

[29] Տե՛ս նոյն տեղում:

ռումն ու դիրքորոշումը հայերի նկատմամբ. «Իսլամական համագործակցութեան կազմակերպութեան պատասխանատուները դատապարտեցին հայերի վայրագութիւնը[30]» (հրատարակուած 2021 թ. ապրիլի 8-ին), «Սիբիրը Հայաստանի պատմական հողն է[31]» (հրատարակուած 2021 թ. ապրիլի 11-ին), «Արևմտեան Ադրբեջանի (Երևան) մտաւորականները դիմեցին ԻՒՆԵՍԿՕ-ին[32]» (հրատարակուած 2021 թ. մարտի 25-ին) և այլն:

«Գունազ թի վի»-ի բաժինը աւարտենք ևս երկու վերնագիր նշելով. «Ադրբեջանի Արտաքին գործերի նախարար: Իսրայէլական զարգացած զէնքերը կարևոր դեր են ունեցել Ադրբեջանի յաղթանակում[33]» (հրատարակուած 2021 թ. մարտի 25-ին) և «Նախագահ Ալիևը Ուզբեկստանի «Տարուայ մարդ» հռչակուեց[34]» (հրատարակուած 2021 թ. ապրիլի 4-ին):

Իրանի դէմ գործող պանթիւրքական կենտրոն է «**Թաւրիզի հետազոտական կենտրոնը**[35]», որը հիմնադրուել է 2016 թ. ապրիլի 2-ին և գտնւում է Անկարայում: Կենտրոնի նպատակներից է ուսումնասիրել աշխարհի տարբեր կէտերում, յատկապէս Իրանում և Ադրբեջանում գտնուող թիւրքերի լեզուն, մշակոյթը, քաղաքական, հասարակական, տնտեսական և մշակութային կա-

[30] https://www.gunaz.tv/fa/new/%DA%AF%D9%88%D9%86%D8%A7%D8%B2-%D8%AA%DB%8C-%D9%88%DB%8C-%DB%B1%DB%B9-%D9%81%D8%B1%D9% 88%D8%B1%D8%AF%DB%8C%D9%86-%DB%B1%DB%B4% DB%B0%DB%B0-%D9%85%D9%82%D8%A7%D9%85%D8%A7%D8%AA-%D8%B3%D8%A7%D8%B2%D9%85%D8%A7%D9%86 (10.04.2021):

[31] https://www.gunaz.tv/fa/new/BuzbasErm%C9%99ni-1618147344 (11.04.2021):

[32] https://www.gunaz.tv/fa/new/Q%C9%99rbiAz%C9%99rbaycanUNESKO-1616680070 (11.04.2021):

[33] https://www.gunaz.tv/fa/new/Ceyhun.Bayramovisrail-1617616918 (11.04.2021):

[34] https://www.gunaz.tv/fa/new/%C6%8Fliyev%C4%B0linAdam%C4%B1-1617525582 (11.04.2021):

[35] http://tebaren.org/fa/ (08.04.2021):

ռուցուածքը, նրանց կենսակերպը և յարաբերութիւնները այլ ժողովրդների հետ:

2020 թ. սեպտեմբերի 30-ին «**Թաւրիզի հետազոտական կենտրոն**»-ի կայքում հրատարակուել է «Թուրք-ադրբեջանցի մի խումբ ազգային և քաղաքացիական գործիչների յայտարարութիւն: Ղարաբաղը Ադրբեջանի հող է[36]» վերնագրով, որտեղ գրուած էր, որ Ադրբեջանի Հանրապետութեան բանակը ի պատասխան Հայաստանի ոտնձգիչ բանակի գործողութիւնների՝ ռազմական գործողութիւններ է ձեռնարկել և ազատագրել Ղարաբաղի մի մասը, որը անցնող 28 տարիների ընթացքում Հայաստանի տիրապետութեան տակ էր: 1990-ական թուականներին տեղի ունեցած Ղարաբաղի պատերազմի ընթացքում հայերը ադրբեջանցի թուրքերի նկատմամբ ցեղասպանութիւն գործեցին և Իրանի այն ժամանակուայ պատասխանատուները հովանաւորեցին Հայաստանին, որը պատճառ դարձաւ միլիոնաւոր թուրքերի զգացումները վիրաւորուեն: «Այժմ մենք, Իրանում ադրբեջանցի մի խումբ ազգային և քաղաքացիական գործիչներս մեր կտրուկ և բացայայտ հովանաւորութիւնն ենք յայտնում այդ տարածքների ազատագրման գործընթացին՝ Հայաստան երկրի բռնազաւթումից և ԻԻՀ պատասխանատուներից պահանջում ենք նկատի առնելով Իրանի միլիոնաւոր թուրքերի զգացումներն ու հաւաքական խիղճը՝ վերջ տալ Հայաստանի պետութեան և նրա բռնազաւթումներին հովանաւորութեանը[37]»:

Աւելին՝ դեռեւս 2018 թ. ապրիլի 21-ին «Թաւրիզի հետազոտական կենտրոն»-ի և «Թուրքիայի՝ երկրից դուրս գտնուող թուրքերի և ազգակից հասարակութիւնների վարչութեան» հա-

[36] http://tebaren.org/fa/?p=1444 (08.04.2021):

[37] Նոյն տեղում:

մագործակցութեամբ Անկարայում տեղի էր ունեցել «Հայերի ճնշումների հարիւրերորդ տարելիցի առիթով պատմական ճշմարտութիւններ: Հայերի ճնշումները Իրանի Արևմտեան Ադրբեջան[38] նահանգում[39]» բնաբանով խորհրդաժողով: Խորհրդաժողովում Թուրքիայից, Ադրբեջանից և Իրանից բանախօսները քննարկել են վերջին հարիւր տարիների ընթացքում հայ զինեալ խմբերի «ճշնումների» և նրանց կողմից «շրջանի թուրքերի ցեղասպանութեան» թեման: Խորհրդաժողովն սկսել էր մէկ րոպէ լռութեամբ ի յարգանս Թուրքիայի Հանրապետութեան հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթիւրքի, Թուրքիայի ազատագրական պայքարի նահատակների, աշխարհի բոլոր վայրերում թիւրքական աշխարհի նահատակների, և Թուրքիայի ու Ադրբեջանի Հանրապետութիւնների հիմների ունկնդրմամբ:

Խորհրդաժողովում նշուել էր, որ շուրջ հարիւր տարի առաջ միայն Արևմտեան Ատրպատականի Ուրմիա, Սալմաստ և Խոյ քաղաքներում հայ և ասորի զինեալ խմբերի միջոցով մօտ 130.000 թիւրք է սպանուել, իսկ այդ թիւը շրջանի այն ժամանակուայ բնակչութեան մէկ երրորդն էր և այդ ծրագրի նպատակը շրջանը թիւրքերից մաքրելն ու Մեծ Հայաստան նախագծի իրականացումն էր: Խորհրդաժողովին համալսարանական դասախօսներից և փորձագէտներից բացի մասնակցել են նաև պետական համակարգում դեր ունեցած անձինք, ինչպէս՝ Թուրքիայի ազգային մեջլիսի նախկին պատգամաւոր Խալես Ուլուչ Գուրքանը:

Խորհրդաժողովի մասին նոյնիսկ մեր այս կարճ ներկայացումը ցոյց է տալիս, որայն կրում էր հակահայկական և հակարանական բնոյթ, տեղի էր ունենում Անկարայում, որ նշանակում է Անկարան հովանաւորում էր այն և նաև Թուրքիայի նախկին պետական այրերը չէին վարանում մասնակցել նմանատիպ խորհրդաժողովին, որն իր հերթին բացայայտում է նրանց մտայնութիւնը:

Յատկանշական էր, որ «Հայերի ճնշումների հարիւրերորդ տարելից» ասելով նկատի էր առնում 1918 թուականի ապրիլ ամիսը, երբ Օսմանեան Թուրքիայի բանակը ներխուժելով Ատրպատական՝ իրականացրեց տեղի հայ եւ ասորի ազգաբնակչութեան այն մնացորդների ոչնչացումը, որոնք փրկուել էին նախորդ՝ 1914 թուական ներխուժումից: Սա ցոյց է տալիս, որ Իրանում գործող պանթիւրքական կազմակերպութիւնները հանդիսանում են Թիւրքիայի ցեղասպանական քաղաքականութեան ժառանգորդները, ուստի եւ ուղղակիօրէն պատճէնում են ոչ միայն սեփական յանցագործութիւնները ժխտելու, այլեւ դրանք իրենց զոհերին վերագրելու Թուրքիայի պետական քաղաքականութեան կրողներն ու տարածողները Իրանի Ատրպատականում:

«**Անկարայի իրանական ուսումնասիրութիւնների կենտրոն**[40]»-ը (IRAM), Իրանի և նրան առընչուող հարցերի ուսումնասիրութեան նպատակով հիմնադրուել է Անկարայում, 2016 թ.: Թէև կենտրոնի կայքում գրուած է, որ նպատակը Իրանի վերաբերեալ գիտական, ճիշտ և անաչառ ուսումնասիրութիւնների իրականացումն է, սակայն նոյնիսկ մի թեթևակի հայեացքը կայքում հրատարակուած յօդուածներին և ուսումնասիրութիւններին

[38] Ատրպատական:
[39] http://tebaren.org/fa/?p=977 (30.03.2021):

[40] https://iramcenter.org/fa/home/ (28.03.2021):

պարզից էլ պարզ է դարձնում կենտրոնի ղեկավարների հակահիրանական, հակահայկական և պանթիւրքական մօտեցումները:

Օրինակ, 2020թ. դեկտեմբերի 5-ին Կենտրոնի շիագիտութեան բաժնի պատասխանատու Մուշթաղ Ալիհիլոյի (Mushtaq Al-Hilo) ստորագրութեամբ լոյս է տեսել «Ղարաբաղի տագնապը, ճեղք յեղափոխութեան արժէքների և Իրանի արտաքին քաղաքականութեան միջև[41]» վերնագրով մի յօդուած, որտեղ հեղինակը գրում է, որ Ղարաբաղի հարցի կապակցութեամբ նկատի ունենալով, որ Իրանի պատմական, մշակութային, կրօնական, էթնիկական ընդհանրութիւնները Ադրբեջանի հետ անգամներ աւելի շատ են, քան Հայաստանի հետ, սպասելի էր, որ Իրանը առանց այլևայլի պաշտպանէր Ադրբերջանին, սակայն նա թէև երևութապէս անկողմնակալի դեր որդեգրեց, սակայն գործնականում պաշտպանեց Հայաստանին: Դրա պատճառը երեք տասնամեակ առաջ Իրանի արտաքին գործերի այն ժամանակուայ նախարար Ալի Աքբար Վելայաթին՝ Լիբանանի Հեզբոլլահի առաջին գլխաւոր քարտուղար Սուբհի Թեֆիլին բացատրել էր. «Հայաստանը մի պատնէշ է թիւրքալեզու հանրապետութիւններին Թուրքիային հասնելու ճանապարհին: Մենք կը կանգնենք Հայաստանի կողքին, որպէսզի արգելք լինենք թիւրքալեզու երկրների Թուրքիային հասնելուն[42]»: Հեղինակն աւելացնում է, որ Ղարաբաղի վերջին պատերազմի ժամանակ Իրանը տեսնելով իր երկրի թիւրքերի լայնածաւալ հովանաւորութիւնը Ադրբեջանին, բարձրաստիճան հոգևորականների միջոցով յայտարարեց, որ Ղարաբաղը իսլամական հող է, սակայն իրականում

[41] https://iramcenter.org/fa/nagorno-karabakh-crisis-the-gap-between-the-values-of-the-revolution-and-irans-foreign-policy/ (28.03.2021):

[42] Նոյն տեղում:

երկրի արտաքին քաղաքականութեան մէջ փոփոխութիւն չկար, իսկ վերջում երբ տեսաւ, որ պատերազմը այլ ելք ունեցաւ և յաղթեց Ադրբեջանը՝ բացայայտ կերպով պաշտպանեց Ադրբեջանին:

Մէկ այլ յօդուածում՝ «Արդեո՞ք Իրանը Ղարաբաղի պատերազմի պարտուողն է[43]» վերնագրով՝ կենտրոնի հասարակութիւն-մշակոյթ խմբի աւագ փորձագէտ Օմիդ Բաշարը գրում է, «2020 թ. սեպտեմբերի 27-ին Հայաստանը յարձակուեց Ադրբեջանի վրայ[44]», «Ադրբեջանը իր տարածքներին վերատիրանալու նպատակով սկսեց շարժուել դէպի Ղարաբաղ[45]», «Թուրքիայի ուղիղ և անմիջական ներկայութիւնը տարածաշրջանում պատերազմին յաջորդող օրերին այդ երկրի արտաքին քաղաքականութեան մէջ յաջողութիւն է համարուում[46]», «Իրանը ոչ միայն խուսափեց Հայաստանին «բռնազաւթիչ» կոչելուց, այլ երկրի բարձրաստիճան պաշտօնեաների լեզուով և առանց որևէ փաստ ու ապացոյց ներկայացնելու, արծարծեց պատերազմում Ադրբեջանի օգտին սիրիական ջիհադիստական խմբերի ներկայութեան հարցը[47]» և այլն:

Իրանի թիւրքախօս շրջանները թիրախ ընտրած պանթիւրքական կազմակերպութիւնները, հետազոտական կենտրոնները, նմանատիպ այլ հաւաքականութիւնները կամ անհատ գործիչները աւելի շատ են, քան այն, ինչ մենք ներկայացրինք մեր սոյն ուսումնասիրութեան մէջ, սակայն դրանից խնդրի էութիւնը չի փոխւում:

[43] https://iramcenter.org/fa/is-iran-a-loser-in-the-karabakh-war/ (28.03.2021):

[44] Նոյն տեղում:

[45] Նոյն տեղում:

[46] Նոյն տեղում:

[47] Նոյն տեղում:

Ատրպատականը թիրախ ընտրած պանթիւրքական շրջանակները, լինեն դրանք Թուրքիայում, Ադրբեջանում կամ Իրանում, ունեն խիստ ընդգծուած հակահայկական և հակաիրանական մօտեցումներ:

Նրանք գլխիվայր շրջելով պատմական իրականութիւնը՝ հայերին համարում են եկուոր, Ղարաբաղը՝ ադրբեջանական հող, իսկ Ադրբեջանի, Իրանի և Թուրքիայի թիւրքերի հանդէպ «ցեղասպանութիւն իրականացրած» Հայաստանը՝ սեպ Մեծ Թուրանի ճանապարհին:

Իսկ ահա Իրանը համարում են Հայաստանի բարեկամ, Իրանի թիւրքախօսներին՝ ճնշուած, խտրականութեան, ֆաշիստական պետութեան զոհ:

Ադրբեջանի և Թուրքիայի հանրապետութիւններում, ինչպէս նաև Իսրայէլում և ԱՄՆ-ում այդ շրջանակների գործունէութիւնը թոյլատրելը և պանթիւրքական գործիչների այդ երկրներ անարգել ել ու մուտն ապացուցում է, որ նշեալ երկրները ուղղակիօրէն պաշտպանում են պանթիւրքական կազմակերպութիւններին և գործիչներին և բնականաբար հետամուտ են նրանց նպատակների իրականացմանը:

Պանթիւրքիզմից առաջին հերթին վնասուելու է Հայաստանը: Արցախեան վերջին 44-օրեայ պատերազմը, դրանում Թուրքիայի ուղղակի ներգրաւուածութիւնը, Իրանի պանթիւրքական շրջանակների հովանաւորութիւնը, պէտք է դիտարկել պանթիւրքիզմի նման ծրագրերի շրջանակներում:

Պանթիւրքիզմի նպատակների իրականացումից վնասուելու է նաև Իրանը: Իրանը շատ լուրջ մարտահրաւէրներ է դիմագրաւում ո՛չ միայն երկրի թիւրքախօսների, այլ նաև այլ էթնիկ խմբերի անջատողական հակումների առումով: Արցախեան վերջին՝

44-օրեայ պատերազմի ժամանակ Իրանի կրաւորական պահուածքը վկայում է, որ այդ վտանգը բաւականին լուրջ է և երկրի ղեկավարութիւնը իր դիրքորոշումներում և գործողութիւններում նման սպառնալիքը նկատի առնելու հարկադրանքի տակ է:

Саркис М. Мкртчян, *ЕГУ, факультет востоковедения,* **Роль действующих в Иране пантюркистских организаций во второй карабахской войне.**

Развернутая 27 сентября 2020 г. против Карабаха Азербайджаном, Турцией и международными террористами 44-дневная широкомасштабная война, причинившая нашему народу большие человеческие, территориальные и материальные потери, еще раз напомнила армянской национальной политической мысли об угрозе пантюркизма.

Война показала, что пантюркизм, как идеология и политическое движение, существует не только в Турции и Азербайджане, но и в тюркоязычных районах Ирана, где действуют личности и организации, некоторые из которых открыто, а некоторые-тайно, работают над осуществлением планов по созданию Великого Турана. Среди них – «Национальная организация сопротивления Азербайджана», «Студенческое движение Южного Азербайджана» (AZON).

Широкомасштабную пантюркистскую пропаганду развернули также «Гюназ ТВ», который провозгласил себя «Голосом свободного Южного Азербайджана», «Исследовательский центр Тавриза», «Центр иранских исследований Анкары» (IRAM) и др.

Независимо от того, что они действуют не только в Иране, но и в Турции и Азербайджане, у всех присутствуют антиармянс-

кие и антииранские подходы. Это обстоятельство вновь ясно проявилось в их заявлениях, политических акциях или опубликовнных сообщениях во время последней Арцахской войны.

В статье представлена антиармянская деятельность этих пантюркистских организаций, направленная против Арцаха в преддверии и в течение войны.

Открытая деятельность этих организаций в Азербайджане, Турции, а также в Израиле и США, и беспрепятственное посещение в эти страны пантюркистских деятелей, доказывает, что они прямо или косвенно защищают пантюркистские организации и их деятелей и тем самым, содействуют осуществлению их планов.

Sargis M. Mkrtchyan, *YSU, Faculty of Oriental Studies,* **The role of Pan-Turkic organizations operating in Iran during the Karabakh Second War.**

The 44-day large-scale war unleashed on September 27, 2020 against Karabakh by Azerbaijan, Turkey and international terrorists, which caused great human, territorial and material losses to our people, once again reminded the Armenian national political thought of the threat of Pan-Turkism.

The war showed that Pan-Turkism, as an ideology and political movement, exists not only in Turkey and Azerbaijan, but also in the Turkic-speaking regions of Iran, where individuals and organizations operate, some of which openly and some secretly work on the implementation of plans to create the Great Turan. Among them are the "Azerbaijan National Resistance Organization" and the "Southern Azerbaijan Student Movement" (AZON).

A large-scale pan-Turkic propaganda was also launched by "Gunaz TV", which proclaimed itself "The Voice of Free Southern Azerbaijan". "Tabriz Research Center", "Ankara Center for Iranian Studies (IRAM)", etc.

Regardless of the fact that they operate not only in Iran, but also in Turkey and Azerbaijan, all of them have anti-Armenian and anti-Iranian approaches. This circumstance again clearly manifested itself in their statements, political actions or published messages during the last Artsakh war.

The article presents the anti-Armenian activities of these pan-Turkic organizations directed against Artsakh on the eve of and during the war.

The open activities of these organizations in Azerbaijan, Turkey, as well as in Israel and the United States, and the unimpeded visits of pan-Turkic figures to these countries, prove that they directly or indirectly protect pan-Turkic organizations and their figures and thereby contribute to the implementation of their plans.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ Ս. ԹՈԽԱԹՅԱՆ

Գործիքը, փոխադրամիջոցը և կառույցները Հայաստանի ժայռապատկերներում 3

ՀԱՅԿԱՐԱՄ Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Քրիստոնեության հաստատումը Մեծ Հայքի պետական կառավարման համակարգում 21

ՀԵՆՐԻԿ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայոց մարզպանների կառավարման հարցի շուրջ (VI դ. երկրորդ կես – VII դ. 30-ական թթ.) 35

ՀԱՍՄԻԿ Հ. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ղուկաս Կարնեցու դավանաբանական գործունեությունը 59

ԼԻԼԻԹ Ս. ՔՈՍՅԱՆ

Կովկասի Կառավարչապետության ցուցաբերած օգնությունը արևմտահայ գաղթականությանը 1890-ական թվականներին..... 73

ԱՐՓԻՆԵ Ռ. ԲԱԲԼՈՒՄՅԱՆ

Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի (Տիգրանակերտ) գավառի հայ բնակչությունը XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին 91

ԿԱՐԵՆ Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Հայոց ցեղասպանության տարելիցների հիշատակումը Իրանի հայ համայնքում 2000-2003 թվականներին..... 120

ՀՌԻՓՍԻՄԵ Է. ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ

Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովը Երևանում 131

ՍԱՐԳԻՍ Մ. ՄԿՐՏՉԵԱՆ

Իրանում գործող պանթիւրքական կազմակերպութիւններ-ի դերը ղարաբաղեան երկրորդ պատերազմում 151

СОДЕРЖАНИЕ

КАРЕН С. ТОХАТЯН

Инструменты, средства передвижения и постройки в наскальных изображениях Армении 3

АЙКАРАМ А. АКОБЯН

Утверждение христианства в государственную систему Великой Армении 21

ГЕНРИК А. ХАЧАТРЯН

К вопросу о правлении марзпанов Армении (вторая половина VI в. – 30-ые годы VII в.) 35

АСМИК О. АМИРДЖАНЯН

Вопросы вероотступничества в деятельности Католикоса всех армян Гукаса Карнеци 59

ЛИЛИТ С. КОСЯН

Помощь Кавказской администрации беженцам из Западной Армении в 1890-ые годы 73

АРПИНЕ Р. БАБЛУМЯН

Армянское население провинции Диарбекир (Тигранакерт) Западной Армении в конце XIX – начале XX веков 91

КАРЕН Г. МКРТЧЯН

Упоминание годовщины Геноцида армян в армянской общине Ирана в 2000-2003 годах 120

РИПСИМЭ Э. ВАРДЕРЕСЯН

17-й саммит Франкофонии в Ереване 131

САРКИС М. МКРТЧЯН

Роль действующих в Иране пантюркистских организаций во второй карабахской войне 151

CONTENT

KAREN S. TOKHATYAN

Implements, transportation means and constructions in rock-carvings of Armenia 3

HAYKARAM H. HAKOBYAN

The establishment of Christianity in the public administration system of Greater Armenia 21

HENRIK A. KHACHATRYAN

On the question of ruling of the Armenian Marzpans (second half of the 6th c. – 30s of the 7th c.) 35

HASMIK H. AMIRJANYAN

Apostasy issues in the activities of Catholicos of All Armenians Ghukas Karnetzi 59

LILIT S. QOSYAN

The support of the Caucasian Administration to the migrants from Western Armenia in the 1890s. 73

ARPINE R. BABLUMYAN

The Armenian population of Diarbekir (Tigranakert) sanjak of Diarbekir (Tigranakert) province of Western Armenia at the end of the 19th – beginning of the 20th centuries 91

KAREN G. MKRTCHYAN

Commemoration anniversaries of the Armenian Genocide in the Armenian community of Iran in 2000-2003 120

HRIPSIME E. VARDERESYAN

17th Francophonie Summit in Yerevan 131

SARGIS M. MKRTCHYAN

The role of Pan-Turkic organizations operating in Iran during the Karabakh Second War 151

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքին հոդվածներ ներկայացնելու չափորոշիչները.

- Հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի (ուսման) վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն:
- Հոդվածները ներկայացնել մինչև 15 էջ ծավալով, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերով (10-15 տող): Տառատեսակը հայերենի դեպքում՝ Sylfaen, այլ լեզուների՝ Times New Roman, տեքստի տառաչափը՝ 12, տողատակում՝ 9, միջտողային հեռավորությունը՝ 1.5, լուսանցքները՝ վերևից՝ 2, ներքևից՝ 2.5, ձախից՝ 3, աջից՝ 1:
- Գիտական աստիճան չունեցող հեղինակները պարտադիր պետք է ներկայացնեն հոդվածի մասին երաշխավորական գրություն գիտական ղեկավարից կամ գիտական (գիտակրթական) հաստատության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման կողմից:
- Հոդվածները պարտադիր ուղարկվում են գրախոսության, գիտական նորույթ չպարունակող կամ նախկինում հրատարակված հոդվածները չեն տպագրվում:

«Հայոց պատմության հարցեր» տարեգրքի բոլոր համարները էլեկտրոնային տարբերակով տե՛ս

http://serials.flib.sci.am/openreader/test/index.html

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

21

Ամփոփումների խմբագրումը՝ Հ. Խուդանյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am